

Բովանդակություն

- ❖ **ՆԵՐԱԾԱԿԱՆ ՄԱՍ**
 - Հապավումների բառարան
 - ՀԿ դեկավարի խոսքը
 - Հաշվետվության մասին
 - Մեր մասին
 - Մեր առաքելությունն ու տեսլականը
 - Մեր նպատակները
 - Մեր դոնորները եւ գործընկերները

- ❖ **ԳՈՒՄ ՀԿ-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ (2005 – 2008թթ)**
 - **Քաղաքացիական շահերի պաշտպանության աջակցության ծրագիր (ՔՇՊԱԾ)**
 - Հասարակական կազմակերպություններին ծառայություն մատուցող կազմակերպության (ՀԿԾՄԿ) կառուցվածքային հնարավորությունների զարգացում եւ նախաձեռնող համագործակցության ստեղծում
 - ՇՊ դրամաշնորհների կառավարում
 - Տեխնիկական աջակցության ռեսուրսների օգտագործումը
 - o Սյունիքի եւ Վայոց Ձորի ՇՊ դրամաշնորհային նախաձեռնությունները
 - Ընտրական դրամաշնորհների կառավարում
 - o Սյունիքի եւ Վայոց Ձորի ընտրություններին աջակցող դրամաշնորհային նախաձեռնությունները
 - **ԳՈՒՄ ՀԿ-Ի կողմից իրականացված նախագծերը**
 - Տեղական ինքնակառավարումը մեր համայնքում
 - Ուսուցիչների համակարգչային գրագիտության բարձրացման ուղղությամբ վերապատրաստումներ
 - «Թափանցիկ դպրոց»
 - «Երեխայակենտրոն դպրոց» չափորոշիչների եւ ցուցիչների փորձարկումը Սյունիքի մարզում
 - Միտք սերմանելը նույնն է, թե ծառ տնկես
 - Համայնքային դպրոցական խորհուրդ
 - Էլեկտրոնային կառավարում
 - **ԳՈՒՄ ՍՊԸ-Ի ծառայություններ**

- ❖ **ՀԿ-Ի ԽՈՐՀՈՒՐԴԸ**

- ❖ **ՀԿ-Ի ԱՇԽԱՏԱԿԱԶՄԸ**

- ❖ **ՀԿ-Ի ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ**

- ❖ **ՀԱՎԵԼՎԱԾ/ ԳՈՒՄ ՀԿ ՀԱԶՈՂԱԿ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ**
 - Հարավային Հայաստանում ՀԿ-ներն ի զորու են ազդելու տեղական մակարդակում հանրային քաղաքականության մշակման եւ փոփոխման գործընթացներին

❖ ՆԵՐԱԾԱԿԱՆ ՄԱՍ

• Հապավումների բառարան

ԱԺ - Ազգային ժողով

ԱՄՆ - Ամերիկայի միացյալ Նահանգներ

ԱՄՆ ՄԶԳ - Ամերիկայի Միացյալ Նահանգների Միջազգային զարգացման գործակալություն

ԱՅ ԷՖ Ի ԷՍ - Ընտրական համակարգերի ինստիտուտ

Այռեքս– Միջազգային հետազոտությունների եւ փոխանակումների խորհուրդ

ԱՊԵԿ - «ՁԻԱՅ-ի կանխարգելում, կրթություն եւ խնամք» ՀԿ

ԳՈՒՄ ՀԿ - «Գործընկերություն եւ ուսուցում» հասարակական կազմակերպություն

ԳՈՒՄ ՍՊԸ - «ԳՈՒՄ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն

«Զանգ» - «Ձարգացնենք արդարադատությանը նպաստող գաղափարները»

ԶԼՄ - Ձանգվածային լրատվական միջոց

ԸԾ – Ընտական ծրագրեր

ԹԿԽ - Թաղային կորորդինացիոն խորհուրդ

ԻՀԿ – Ինտերնետ համակարգչային կենտրոն

ԾԻԳ - Ծրագրերի իրականացման գրասենյակ

ԿԱԻ – Կրթության ազգային ինստիտուտ

ԿԳՆ – Կրթության եւ գիտության նախարարություն

ԿՈՒ – Կապանի ուսուցիչներ

ՀԱԽ - Համայնքային աշակերտական խորհուրդ

ՀԿ – Հասարակական կազմակերպություն

ՀԿԾՄԿ – Հասարակական կազմակերպություններին ծառայություն մատուցող կազմակերպություն

ՀԿԽ - Համայնքային կորորդինացիոն խորհուրդ

ՀՀ – Հայաստանի Հանրապետություն

ՀՀ ԸՕ - Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք

ՀՀԿ – Հասարակության հետ կապեր

ՁԻԱՅ/ՄԻԱՎ – Ձեռքբերովի իմունային անբավարարության համակարգ/ մարդու իմունային անբավարարության վիրուս

ՁՊՎ - Ձերբակալվածների պահելու վայրեր

ՃԵԿ – ճանապարհային երթևեկության կանոններ

ՄԱԿ - Միավորված ազգերի կազմակերպություն

ՇՊ – Շահերի պաշտպանություն

ՊԱԿ - Պետական առողջապահական գործակալություն

ՏԻՄ – Տեղական ինքնակառավարման մարմին

ՓԲԸ - Փակ բաժնետիրական ընկերություն

ՔԿՂ – Քրեակատարողական հիմնարկ

ՔՂԿ – Քաղաքացիական հասարակության կազմակերպություն

ՔՇՊԱԾ – Քաղաքացիական շահերի պաշտպանության աջակցության ծրագիր

ՔՕ – Քրեական օրենսգիրք

- **Հարգարժան ընթերցող**

շուտով կլրանա «Գործընկերություն եւ ուսուցում» 34-ի տասնամյակը, սակայն կազմակերպությունն երբեւէ հնարավորություն չի ունեցել այս կերպ հաշվետվու լինել իր շահառուին, գործընկերոջը, դոնոր հասարակությանը, այսինքն՝ Ձեզ: Եիչտ է, հասարակության հետ կապերի տարբեր միջոցներով պարբերաբար 34-ի գործունեությունը ներկայացվել է Ձեզ, բայց նման լայնածավալ եւ ամփոփ հաշվետվություն կազմվում է առաջին անգամ: Այս հաշվետվության մյուս նպատակն էր՝ եւս մեկ անգամ անդրադարձ կատարել նախորդ տարիներին կազմակերպության կողմից իրականացված գործունեությանը, փորձել տեսնել բացթողումները՝ հետագայում դրանք սահուն շրջանցելու կամ լրացնելու համար, տեսնել ձեռքբերումները՝ հետագա գործունեության ընթացքում որպես այցեբարտ օգտագործելու համար:

«Գործընկերություն եւ ուսուցում» 34-ն «Գործիսի ուսուցիչների միություն» 34-ի իրավահաջորդն է: 2008թ. փետրվարին կազմակերպության նպատակների, խնդիրների, առաքելության եւ գործունեության ոլորտների ընդլայնմամբ պայմանավորված՝ 34-ն անվանափոխության եւ կանոնադրական փոփոխությունների ենթարկվեց: Ներկայիս անունը շատ ավելի համահունչ է կազմակերպությանը, իսկ կանոնադրական նպատակները թույլ են տալիս իրականացնել ոչ միայն կրթական հիմնախնդիրներին ուղղված գործունեություն, այլեւ քաղաքացիական հասարակության զարգացման գերխնդիրն առնչվող:

Կազմակերպության արմատական փոփոխությունների ենթարկվելու հարցում մեծ դեր ունի 2005թ. հուլիսից սկսված եւ առայսօր շարունակվող Քաունթերփարթ Ինթերնեշնլի հայաստանյան գրասենյակի հետ գործընկերությունը, որի համար չեմ կարող առանձնահատուկ շնորհակալության խոսք չիղել գրասենյակի տնօրինությանը եւ աշխատակազմին՝ համատեղ գործունեությունից բացի գործընկերոջը վայել սրտացավությամբ ԳՈՒՄ 34-ի իրենց գործընկերների մասնագիտական զարգացմանն աջակցելու համար:

Խորին շնորհակալություն եմ հայտնում մեր մյուս բոլոր գործընկերներին եւ դոնորներին, որոնց հետ համատեղ բազմաթիվ ծրագրեր եւ նախաձեռնություններ ենք իրականացրել: Շնորհակալություն հայտնել մեր շահառուներին, որոնք հավատացել են մեզ եւ հանձինս մեզ տեսել են իրենց խնդիրների լուծմամբ մտահոգ կազմակերպություն:

Շնորհակալություն եմ հայտնում պետական պատկան այն մարմիններին, որոշում կայացնողներին, որոնք գործընկերության մեր պարզած ձեռքը ամուր են սեղմել:

Արտաշես Տոռոզյան

ՈՒՄ 34 նախագահ

• Հաշվետվության մասին

Որպես Քաունթերփարթ ինթերնեշնլ միջազգային կազմակերպության կողմից հավաստագրման գործընթաց սկսած հասարակական կազմակերպություն ԳՈՒՄ 34-ն այս հրատարակությամբ ներկայացնում է կազմակերպության 2005-2008թթ քառամյա գործունեությունը:

ԳՈՒՄ 34-ն տպագրելով 2005-2008թթ իր քառամյա հաշվետվությունը՝ խրախուսում է տեղական հասարակական կազմակերպություններին հետեւել այս օրինակին եւ ընտրել ու պահպանել նմանատիպ չափորոշիչներ՝ կազմակերպության ծրագրային եւ ֆինանսական գործունեության թափանցիկությունն ու հաշվետվողականությունն ապահովելու համար:

Հաշվետվությունը նաեւ ներառում է 34-ի առաջիկա պլաններն ու ռազմավարական ուղղությունները:

ԳՈՒՄ 34-ն վստահ է, որ այս հաշվետվությամբ հետաքրքիր տեղեկատվություն է տրամադրում բոլոր հետաքրքրված անձանց, Ք34-ներին, պետական պատկան մարմիններին, դոնոր հասարակությանը՝ իր անցած 4 տարիների, ինչպես նաեւ՝ հետագա գործունեության մասին:

Առավել մանրամասն եւ ընթացիկ տեղեկություններ ստանալու համար, կարող եք դիմել մեզ՝ gumiso@gumiso.am էլ. փոստով կամ այցելել www.gumiso.am վեբ կայք:

- **Մեր մասին**

«Գորիսի ուսուցիչների միություն» ՀԿ-ն 2008թ. փետրվարից «Գործընկերություն եւ ուսուցում» նոր անվամբ եւ կրկին ԳՈՒՄ ՀԿ հապավմամբ վերագրանցվել է որպես քաղաքացիական հասարակությանն ու կրթությանն աջակցող հասարակական կազմակերպություն: Այն 2000թ. սեպտեմբերին հիմնադրված «Գորիսի ուսուցիչների միություն» ՀԿ-ի իրավահաջորդն է: ՀԿ-ն 2000-2005թթ իրականացրել է 7 դրամաշնորհային նախաձեռնություն: Մասնավորապես կրթության կառավարման ժողովրդավարացման գործընթացում ՀԿ-ն ներկայացել է աշակերտական ինքնավարության ստեղծման նախաձեռնությամբ, որի արդյունքում 2004թ. փետրվարին կազմակերպության մշակած «Աշակերտական խորհրդի կանոնադրությունը» հաստատվել է ՀՀ ԿԳ նախարարի կողմից եւ ներդրվել ՀՀ հանրակրթական հաստատություններում:

Կազմակերպությունն իր 2005-2008թթ քառամյա գործունեության ընթացքում իրականացրել է շուրջ 10 դրամաշնորհային ծրագրեր՝ ուղղված կրթական (կառավարում, ուսուցման նոր մեթոդներ) եւ համայնքային ոլորտների հիմնախնդիրների լուծմանը: ՀԿ-ն ունի իր սեփական պարբերականները՝ «Ուսուցիչ» (հիմնադրվել է 2000թ. դեկտեմբերին) մարզային, կրթական եւ «Կամք +» (հիմնադրվել է 2006թ. հուլիսին) թերթերը: Հեղինակել է մեկ տասնյակից ավելի մեթոդական եւ կազմակերպական զարգացման ձեռնարկներ ու մոդուլներ:

2003թ. հուլիսին ֆինանսական կայունությունն ապահովելու եւ արդյունավետ ծառայություններ մատուցելու նպատակով ՀԿ-ն ստեղծել է ԳՈՒՄ ՍՊԸ-ն: 2005թ. հունիսից Քաղաքացիական շահերի պաշտպանության աջակցության ծրագրի (ՔՇՊԱԾ) շրջանակներում կազմակերպությունը որպես հասարակական կազմակերպություններին ծառայություն մատուցող կազմակերպություն (ՀԿԾՄԿ) Քաունթերփարթ ինթերնեշնլ միջազգային կազմակերպության գործընկերն է հարավային Հայաստանում (Սյունիքի եւ Վայոց Ձորի մարզերում):

2005թ. սկսած կազմակերպության նպատակներն ընդհանուր առմամբ բաժանվում են երկու ոլորտների՝ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների (ՀԿ-ներ, հիմնադրամներ, ոչ առետրային կազմակերպություններ) զարգացման եւ կրթական: 2005թ. սկսած ԳՈՒՄ ՀԿ-ն տեղական ՔՀԿ-ների շահերի պաշտպանության նախաձեռնությունների աջակցման ու կազմակերպական կարողությունների զարգացման համար մատուցում է համապատասխան ծառայություններ (դասընթաց, խորհրդավություն, գնահատում...) եւ տրամադրում դրամաշնորհներ: 2005թ.-ից սկսած ԳՈՒՄ ՀԿ-ն կրթական ոլորտի բարեփոխումներին աջակցելու նպատակով նույնպես ծառայություններ է մատուցում (դասընթաց, խորհրդավություն, գնահատում...) կրթական ոլորտի ներկայացուցիչներին:

2006թ.-ից ԳՈՒՄ ՀԿ-ն սկսել է կազմակերպության հավաստագրման գործընթացը Քաունթերփարթ ինթերնեշնլի կողմից: Նշյալ գործընթացի շնորհիվ ՀԿ-ն թեւակոխել է զարգացման մի նոր փուլ:

- **Մեր առաքելությունը**

Կրթություն եւ համագործակցություն՝ հանուն քաղաքացիական հասարակության:

- **Մեր տեսլականը**

Լավ մարդիկ են մատուցում որակյալ ծառայություններ թիրախներին:

- **Մեր կարգախոսը**

Համագործակցենք այսօր՝ վաղվա համար:

- **Մեր արժեքները**

- Թափանցիկություն եւ հաշվետվողականություն,
- Հստակ հաղորդակցություն,
- Պատասխանատվությունների եւ իրավունքների հստակություն,
- Որակյալ ծառայություններ,
- Համագործակցություն,
- Մեծ եւ փոքր աշխատանքների չտարբերակում,
- Ոչ ֆորմալ կրթության կարեւորում:

• Մեր նպատակները

- Նպաստել ժողովրդավարական, իրավական եւ բարեկեցիկ պետության կայացմանը;
- Աջակցել քաղաքացիական հասարակության կայացմանն ու զարգացմանը;
- Աջակցել հանրային քաղաքականության ոլորտում փոփոխություններ կատարելու գործընթացների իրականացմանը,
- Նպաստել հանրապետության կրթական համակարգում իրականացվող բարեփոխումներին;
- Նպաստել կրթական համակարգի կառավարման ժողովրդավարացմանը:

• Մեր դոնորներն ու գործընկերները

ԳՈՒՄ ՀԿ-ն 2005-2008թթ ներքոնշյալ կազմակերպությունների ֆինանսական եւ տեխնիկական (ԳՈՒՄ ՀԿ-ի կազմակերպական զարգացում) աջակցությամբ իրականացրել է մի շարք նախաձեռնություններ ՀՀ Սյունիքի եւ Վայոց Ձորի մարզերում

ԴՈՆՈՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՏՐԱՍՊՐՈՒԿԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՈՒՈՐՏԸ	ԴՐԱՄԱՇՆՈՐԴԻ ՉԱՓԸ	ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՆԱԿԱԾԸ
Քաունթերփարթ ինթերնեշնլի հայաստանյան գրասենյակ	Քաղաքացիական հասարակության կազմակերպությունների զարգացման ոլորտ	72 072 152 դրամ	Հունիս, 2005թ. – օգոստոս, 2009թ.
ԿԳՆ Կրթական ծրագրերի կենտրոն/ ԾԻԳ	Կրթության ոլորտում նոր տեխնոլոգիաների ներդրում	24 175 905 դրամ	Նոյեմբեր, 2005թ.– նոյեմբեր, 2007թ.
ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի/ Յունիսեֆի հայաստանյան գրասենյակ	Կրթության ոլորտում քաղաքականության փոփոխություն	6 071 323 դրամ	Մարտ, 2006թ. – դեկտեմբեր, 2007թ.
Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հայաստանյան գրասենյակ	Կրթության կառավարման ոլորտում քաղաքականության փոփոխություն	4 558 128 դրամ	Սեպտեմբեր, 2005թ. – հունիս, 2006թ.
Գերմանիայի Տեխնիկական Համագործակցության Ընկերություն	Աշակերտների մասնակցությունը համայնքային կառավարմանը	1 865 266 դրամ	Հոկտեմբեր դեկտեմբեր, 2006թ.
ՀՀ-ում ԱՄՆ դեսպանատուն	Կրթության կառավարման ոլորտում և թափանցիկության եւ հաշվետվողականության ապահովում	7 667 026 դրամ	Մարտ դեկտեմբեր, 2007թ.

«ԷՅ ԹԻ ՓԻ» բարեգործական հիմնադրամ	Կրթության ոլորտ. «Միտք սերմանելը նույնն է, թե ծառ տնկես» բնապահպանական ձեռնարկի կիրառման համար ուսուցիչների վերապատրաստումներ	9 669 296 դրամ	Սեպտեմբեր, 2007թ. – սեպտեմբեր, 2008թ.
«Կասալս Ենդ Ասոշիեյթս» Ինք. ընկերություն	Կրթության ոլորտ. հանրակրթական հաստատությունների կառավարման մարմինների թափանցիկության եւ հաշվետվողականության մեխանիզմների/ընթացակարգերի արդյունավետության բարձրացում	7 498 000 դրամ	Հոկտեմբեր, 2008թ. - օգոստոս, 2009թ.
ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի/ Յունիսեֆի հայաստանյան գրասենյակ	Կրթության ոլորտում քաղաքականության փոփոխություն	9 576 699 դրամ	Հուլիս, 2008թ. – հունվար, 2009թ.

Իր քառամյա գործունեության ընթացքում ԳՈԻՄ ՀԿ-ն համագործակցել է ներքոնշյալ կազմակերպությունների ու կառույցների հետ:

ԳՈՐԾԸՆԿԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ
ՀՀ-ում ԱՄՆ դեսպանատուն	- ԳՈԻՄ ՀԿ-ն ՀՀ-ում ԱՄՆ դեսպանատանն աջակցել է Սյունիքի եւ Վայոց Ձորի մարզերում միջոցառումների կազմակերպման հարցում (դրամաշնորհային ծրագրերի ներկայացում, հանդիպումներ ՀԿ-ների եւ ՁԼՍ-ների հետ, տեղեկատվության փոխանակում), - Դեսպանատան աջակցությամբ ԳՈԻՄ ՀԿ-ում աշխատել է անգլերենի մասնագետ-խորհրդատու Պատրիցիա Էստեպլը, որի աջակցությամբ մշակվել է անգլերեն լեզվի ուսուցիչների վերապատրաստման ձեռնարկ եւ կազմակերպվել է համաժողով՝ Սյունիքի մարզի անգլերենի ուսուցիչների համար:
Բրիտանական խորհուրդ	- ԳՈԻՄ ՀԿ-ն Սյունիքի մարզում աջակցել է «Եվրոմիությունը եւ մենք» ծրագրի աշխատանքներին (ապահովել է մարզի երիտասարդների մասնակցությունը կազմակերպվող թոք – շոուներին եւ կլոր սեղաններին):
Խաղաղության կորպուս	- ԳՈԻՄ ՀԿ-ն գործընկերություն է հաստատել Խաղաղության կորպուսի կամավորների հետ, - ԳՈԻՄ ՀԿ-ն աջակցել է Սյունիքի մարզում նրանց աշխատանքների կազմակերպմանը (մրցույթների հայտերի, հայտարարությունների տարածում, աջակցություն հայտերի լրացման աշխատանքներին, հայտերի հավաքագրում եւ այլն), - Խաղաղության կորպուսի կողմից ԳՈԻՄ ՀԿ-ին տրամադրվել են տեխնիկական միջոցներ, կահույք եւ սարքավորումներ՝ ՀԿ-ի Աուդիո-Վիդիո կենտրոնի աշխատանքների կազմակերպման համար:
Այռեքս	- ԳՈԻՄ ՀԿ-ն համակարգել է Այռեքսի Տարրական եւ Միջին դպրոցի ուսուցիչների վերապատրաստման Գորիսի հենակետի աշխատանքները, - Այռեքսի կողմից տրամադրված գրականության, տեխնիկական միջոցների շնորհիվ ԳՈԻՄ ՀԿ-ն աջակցել է տարրական, միջին եւ ավագ դպրոցների ուսուցիչների վերապատրաստման ծրագրերի իրականացմանը, - ԳՈԻՄ ՀԿ-ն աջակցել է մանկավարժական հաստատությունների ուսուցիչների վերապատրաստման ծրագրերի իրականացման աշխատանքներին, - Ջանգվածային լրատվամիջոցների աջակցման ծրագրի շրջանակներում «Կամք+» թերթի խմբագրակազմը

	<p>պարբերաբար մասնակցել է Այռեքսի կազմակերպած մասնագիտական զարգացման գրեթե բոլոր դասընթացներին,</p> <ul style="list-style-type: none"> - Ձանգվածային լրատվամիջոցների աջակցման ծրագրի շրջանակներում, Այռեքսի ֆինանսական աջակցությամբ, «Կամք+» թերթն առանձին հավելվածով տպագրել է նշված ծրագրի շրջանակներում կատարված հետազոտությունները, պատրաստված հոդվածներն ու ինֆոգրաֆիկաները: - Այռեքսն աջակցել է «Կամք+» թերթի ձեւավորման աշխատանքներին:
Փրոցեքթ Զարմոնի /Զարմոնի ֆոնդ	<ul style="list-style-type: none"> - Փրոցեքթ Զարմոնին 2005թ. ԳՈՒՄ ԶԿ-ին անվճար ինտերնետ կապ է տրամադրել ԳՈՒՄ ԶԿ-ին, - ԳՈՒՄ ԶԿ-ն աջակցել է «Ձանգ» ծրագրի աշխատանքների կազմակերպմանը (տարածքի տրամադրում), - ԳՈՒՄ ԶԿ-ն աջակցել է «Համայնքային կապեր» ծրագրի աշխատանքների իրականացմանը (տարածքի տրամադրում, հայտերի ներկայացման եւ հավաքագրման գործընթացների կազմակերպում):
Սի-էյջ-էֆ ինթերնեշնլ	<ul style="list-style-type: none"> - ԳՈՒՄ ԶԿ-ն աջակցել է Գորիսի տարածաշրջանում համայնքային ժողովների կազմակերպմանը, - որպես համագործակից կազմակերպություններ ԳՈՒՄ ԶԿ-ն եւ Սի-էյջ-էֆ ինթերնեշնլը երկուստեք աջակցել են Սիսիան քաղաքում աղբահանության ծրագրի շրջանակներում իրականացվող աշխատանքներին:
Կրթության զարգացման կադեմիայի «Երիտասարդության համայնքային գործողությունների» ծրագիր	<p>ԳՈՒՄ ԶԿ-ն կազմակերպել է Սյունիքի մարզի երիտասարդական եւ համայնքային ռեսուրս կենտրոնների անդամների ներգրավվումը ԲԵՊԱԾ-ի եւ ԸԾ-ի դրամաշնորհառուների կողմից իրականացվող ծրագրային գործողությունների մեջ.</p> <ul style="list-style-type: none"> - իրազեկման դասընթացների, - քաղաքացիական հանդիպումների, - ընտրացուցակների ճշգրտման, - տեղեկատվության տարածման (բուկլետներ, պաստառներ եւ թերթիկներ) միջոցով:
Թրանսփարենսի ինթերնեշնլ	<ul style="list-style-type: none"> - ԳՈՒՄ ԶԿ-ն համակարգել է Հակակոռուպցիոն տեղեկատվական կենտրոնի Սյունիքի ներկայացուցչության աշխատանքները, - ԳՈՒՄ ԶԿ-ն համակարգել է Գորիս համայնքի աղբահանության մոնիտորինգ -ծրագիրը:
ԱՊԵԿ	<ul style="list-style-type: none"> - ՁԻԱՅ/ՄԻԱԿ-ի առաջնային կանխարգելում ծրագրի շրջանակներում ԳՈՒՄ ԶԿ-ն համակարգել է Սյունիքի մարզում կատարվող աշխատանքները, - «Թմրանյութերի կանխարգելում» ծրագրի շրջանակներում ԳՈՒՄ ԶԿ-ն հանդիսանում է ԱՊԵԿ-ի համագործակիցը Սյունիքի մարզում:
<ul style="list-style-type: none"> ➤ Քաղաքացիական զարգացման եւ համագործակցության հիմնադրամ ➤ ԶԿ կենտրոն - հյուսիսային մասնաճյուղ 	<p>ԳՈՒՄ-ը նշյալ կազմակերպությունների հետ`</p> <ul style="list-style-type: none"> - փոխադարձ աջակցություն են ցուցաբերել ԲԵՊԱԾ-ի շրջանակներում դրամաշնորհների կառավարման գործընթացներին, - մասնագետների միջեւ իրականացրել են փորձի փոխանակում:

❖ **ԳՈՒՄ ՀԿ-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ (2005 – 2008թթ)**

• **Քաղաքացիական շահերի պաշտպանության աջակցության ծրագիր/ ՔՇՊԱԾ**

- ՀԿԾՄԿ-ի կառուցվածքային հնարավորությունների զարգացում եւ նախաձեռնող համագործակցության ստեղծում

<i>Պայմանագրի/երի համար/ները</i>	# ARM-ISO-2005-01 # ARM-ISO-2006-01 # ARM-ISO-2007-01 # ARM-ISO-2008-01
<i>Ծրագրի տեւողությունը</i>	Հունիս, 2005թ. – օգոստոս, 2009թ.
<i>Ծրագրի իրականացման վայրը</i>	ՀՀ, Սյունիքի եւ Վայոց Ձորի մարզեր
<i>Դրամաշնորհի չափը</i>	14 591 200 դրամ
<i>Կազմակերպության ներդրումը</i>	3 053 528 դրամ
<i>Ընդհանուր գումարը</i>	17 644 728 դրամ

ԳՈՒՄ ՀԿ-ն ԱՄՆ ՄՁԳ-ի կողմից ֆինանսավորվող Քաղաքացիական շահերի պաշտպանության աջակցության ծրագրի (CASP) շրջանակներում Քաունթերփարթ ինթերնեշնլի կողմից 2005թ. հունիսին ընտրվել է որպես հասարակական կազմակերպությունների ծառայություն մատուցող կազմակերպություն (ՀԿԾՄԿ): ԳՈՒՄ ՀԿ-ի ՀԿԾՄԿ դառնալու համար հիմք են հանդիսացել.

- կազմակերպական զարգացման մակարդակը,
- շահերի պաշտպանության եւ կազմակերպական զարգացման ոլորտում փորձառությունը,
- ՀԿ-ի ռազմավարական ուղղությունները՝ ՀԿ սեկտորի զարգացման առումով:

Քաունթերփարթ ինթերնեշնլի ֆինանսական աջակցությամբ 2005թ. հունիսից ԳՈՒՄ ՀԿ-ն Սյունիքի եւ Վայոց Ձորի մարզերում իրականացնում է հասարակական կազմակերպություններին ծառայությունների մատուցման ծրագիր, որի նպատակն է զարգացնել եւ հզորացնել ՔՀԿ-ների կազմակերպական եւ շահերի պաշտպանության կարողությունները: Ծրագրի շրջանակում իրականացվում է՝

- դասընթացներ եւ խորհրդատվություններ՝ Սյունիքի եւ Վայոց Ձորի ՔՀԿ-ների ՇՊ եւ կազմակերպական կարողությունները զարգացնելու համար,
- դրամաշնորհների տրամադրում՝ ՇՊ ոլորտում համայնքային եւ մարզային նախաձեռնությունների իրականացման համար:

Սույն պայմանագրի շրջանակներում տեխնիկական աջակցության հողվածով գումարներ է հատկացվել ԳՈՒՄ ՀԿ աշխատակազմի մասնագիտական զարգացման համար: ԳՈՒՄ ՀԿ աշխատակազմը 2005-2008թթ մասնակցել է հետեւյալ թեմաներով դասընթացների՝

- Բիզնես պլան,
- Ռազմավարական պլանավորում,
- Մարդկային ռեսուրսների կառավարում,
- Մարկետինգի վերլուծություն,
- Աշխատանքային նոր օրենսգիրքը,

- Ֆինանսական վերլուծություն,
- ՀԿ-ի զարգացում,
- Անգլերեն լեզվի ուսուցում,
- Ֆինանսական կայունություն,
- Սոցիալական գործընկերություն,
- Մարկետինգի ուսումնասիրություն,
- Ավելացված արժեքի հարկի մասին,
- Հարկեր եւ տուրքեր,
- Կառավարում եւ առաջնորդություն,
- Ֆոնդահայթայթում,
- Բյուջեի վերահսկում,
- Կամավորության զարգացում (փորձի փոխանակում) եւ այլն:

2005-2008թթ ՔՇՊԱԾ-ի եւ ԳՈՒՄ ՀԿ-ի ներդրումները՝ ԳՈՒՄ ՀԿ աշխատակազմի մասնագիտական զարգացման համար

Տարի	ՔՇՊԱԾ ներդրում	ԳՈՒՄ ՀԿ-ի ներդրում
2005թ	50 000 ՀՀ դրամ	0 ՀՀ դրամ
2006թ.	2 833 352 ՀՀ դրամ	242 000 ՀՀ դրամ
2007թ.	1 644 650 ՀՀ դրամ	167 750 ՀՀ դրամ
2008թ.	3 386 495 ՀՀ դրամ	2 123 913 ՀՀ դրամ

- ՇՊ դրամաշնորհների կառավարում

<i>Պայմանագրի համարը</i>	# ARM-GA/M-2005-01
<i>Ծրագրի տեւողությունը</i>	Սեպտեմբեր, 2005թ. – օգոստոս, 2009թ.
<i>Ծրագրի իրականացման վայրը</i>	ՀՀ, Սյունիքի եւ Վայոց Ձորի մարզեր
<i>Դրամաշնորհի չափը</i>	36 100 000 դրամ
<i>Կազմակերպության ներդրումը</i>	7 222 260 դրամ
<i>Ընդհանուր գումարը</i>	43 332 260 դրամ

ԳՈՒՄ ՀԿ-ն Քաղաքացիական շահերի պաշտպանության աջակցության ծրագրի շրջանակներում (CASP) 2005-2008թթ ընթացքում տրամադրել է 43 դրամաշնորհ (որից 3-ը շահերի բախման պատճառով ընթացքում դադարեցվել է դոնորի կողմից) Սյունիքի եւ Վայոց Ձորի մարզերում գործող տեղական ոչ առեւտրային կազմակերպություններին՝ ներքոնշյալ խնդիրների լուծումներին հասնելու նպատակով.

- աջակցել հանրային քաղաքականության ոլորտում որոշումների ընդունման գործընթացներում քաղաքացիական մասնակցության ակտիվության բարձրացմանը, համախոհների եւ համակիրների մոբիլիզացմանը,

- աջակցել հանրային քաղաքականության ոլորտում փոփոխություններ կատարելու գործընթացների իրականացմանը, նոր քաղաքականության մշակմանը/ ներդրմանը, որոշումների եւ նորմատիվ ակտերի կիրարկման վերահսկողության իրականացմանը,
- աջակցել լայնածավալ քարոզարշավների իրականացմանը, որոնք ուղղված են բնապահպանական, երիտասարդական, իրավական, գյուղատնտեսական, գեներային, սոցիալական խնդիրներին եւ դրանց բարեփոխումներին՝ ոլորտի պատասխանատուների որոշումների վրա ազդելու նպատակով:

Դրամաշնորհների կառավարման գործընթացներում կիրառված ծրագրային եւ ֆինանսական վերահսկման միջոցներն ու գործիքները

Ծրագրային վերահսկման միջոցներ.

- **ամսական ծրագրային հաշվետվության թերթիկ,**
- **միջոցառման մասնակցության կամ դիտարկման այցի թերթիկ,**
- **եռամսյակային վերահսկման այցի թերթիկ,**
- **ավարտական վերահսկման եւ գնահատման թերթիկ:**

Ծրագրային վերահսկման գործիքներ.

- **ծրագրի տրամաբանական կառուցվածք,**
- **ծրագրի գործողությունների պլան (Գանտի աղյուսակ),**
- **եռամսյակային աշխատանքային պլան,**
- **ամսական օրացույց:**

Դրամաշնորհները տրամադրվել են 5 փուլով

Փուլ	Դրամաշնորհների քանակ	Դրամաշնորհների ընդհանուր գումարը	Իրականացման մեկնարկն ու ավարտը
1-ին	7	27 498 200 ՀՀ դրամ	1.04.2006թ. – 31.12.2006թ.
2-րդ	14	55 012 300 ՀՀ դրամ	1.11.2006թ. – 31.08.2007թ.
3-րդ	5	12 408 970 ՀՀ դրամ	1.02.2007թ. – 31.08.2007թ.
4-րդ	10	30 709 950 ՀՀ դրամ	1.12.2007թ. – 15.09.2008թ.
5-րդ	7	11 876 300 ՀՀ դրամ	1.07.2008թ. – 15.03.2009թ.
Ընդհանուր	43	137 505 720 ՀՀ դրամ	1.04.2006թ. - 15.03.2009թ.

1-ին փուլ

N	Կազմակերպության անվանումը	Ծրագրի անվանումը	Իրականացման ժամանակահատվածը	Դրամաշնորհի չափը	Ծրագրի բյուջեն
1.	«Գորիս- Բունդերանգ» ՀԿ	ժամանակն է ներկայանալու	Ապրիլ-նոյեմբեր, 2006թ.	4 000 000 դրամ	4 880 000 դրամ
2.	Սյունիքի մարզի հաշմանդամների «Խարիսխ» ՀԿ	Մաքուր քաղաք առողջ քաղաքացի	Ապրիլ - դեկտեմբեր, 2006թ.	3 517 900 դրամ	4 222 100 դրամ
3.	«Երիտասարդ ընտանիքի աջակցության կենտրոն» ՀԿ	Համայնքի զարգացման մասնակցային տիպային մոդել	Ապրիլ -նոյեմբեր, 2006թ.	3 994 750 դրամ	4 927 810 դրամ
4.	«Կապանի ուսուցիչներ» ՀԿ	Համայնքի կողմից գնահատված ուսուցիչ	Ապրիլ - դեկտեմբեր, 2006թ.	3 993 500 դրամ	4 794 500 դրամ
5.	«Իրավունքների տեղեկատվական կենտրոն» իրավապաշտպան-խորհրդատվական ՀԿ	Ժողովրդավար ինքնակառավարում	Ապրիլ - դեկտեմբեր, 2006թ.	3 993 150 դրամ	4 890 531 դրամ
6.	«Հայաստանի կանաչների միություն» ՀԿ Վայոց Ձորի մասնաճյուղ	Աջակցություն «Բնակչության էկոլոգիական կրթության եւ դաստիարակության մասին» ՀՀ օրենքի կիրարկմանը Վայոց Ձորի մարզում:	Ապրիլ-դեկտեմբեր, 2006թ.	3 999 200 դրամ	4 799 670 դրամ
7.	«Էկո-սիս» ՀԿ	Շահերի պաշտպանության նախաձեռնություն Սիսիանում	Ապրիլ - նոյեմբեր, 2006թ.	3 999 700 դրամ	5 142 700 դրամ

2-րդ փուլ

N	Կազմակերպության անվանումը	Ծրագրի անվանումը	Իրականացման ժամանակահատվածը	Դրամաշնորհի չափը	Ծրագրի բյուջեն
1.	«Սիսիանի զարգացման կենտրոն» ՀԿ	Աջակցություն Սիսիանի երիտասարդական քաղաքականության կիրառմանը	Նոյեմբեր, 2006թ. - հունիս, 2007թ.	3 649 500 դրամ	4 697 500 դրամ
2.	«Կապանի համայնքների միություն» ՀԿ	Համատիրություն	Նոյեմբեր, 2006թ. - հունիս, 2007թ.	3 767 300 դրամ	5 325 800 դրամ
3.	«Սարտիրոս» բարեգործական հիմնադրամ	Դեռահասների կրթություն՝ հանուն առողջության	Նոյեմբեր, 2006թ. - հունիս, 2007թ.	3 747 500 դրամ	4 601 600 դրամ
4.	«Բարի երթ» ավտոմոտոսիրողների ՀԿ	Անվտանգությունը քո ձեռքերում է	Նոյեմբեր, 2006թ. – հունիս, 2007թ.	3 815 700 դրամ	4 636 700 դրամ
5.	«Երիտասարդ սերունդ» ՀԿ	Առողջ ապրելակերպ	Նոյեմբեր, 2006թ. - հունիս, 2007թ.	3 626 400 դրամ	4 426 400 դրամ
6.	«Կապանի կանանց միաբանություն» ՀԿ	Գիտելիք հանուն առողջության	Նոյեմբեր, 2006թ. - հունիս, 2007թ.	3 876 800 դրամ	4 682 800 դրամ
7.	«Գորիսի տիկնանց օջախ» ՀԿ	Դեպի առողջ մայրություն	Նոյեմբեր, 2006թ. – հունիս, 2007թ.	3 781 500 դրամ	4 923 500 դրամ
8.	«Լեռնեցիների առողջ սերունդ» ՀԿ	Թողնենք ծխելը	Նոյեմբեր, 2006թ. - հունիս, 2007թ.	6 484 200 դրամ	7 723 200 դրամ
9.	«Գորիսի ստեղծագործողներ» ՀԿ	Մշակութային առաջընթաց	Նոյեմբեր, 2006թ. – հունիս, 2007թ.	3 971 000 դրամ	4 780 000 դրամ
10.	«Շոտոկան» կարատեի ֆեդերացիա ՀԿ	Առողջ ապրելակերպ	Նոյեմբեր, 2006թ. – օգոստոս, 2007թ.	3 919 000 դրամ	4 799 000 դրամ
11.	«Սոցիալ-հոգեբանական եւ վիճակագրական հետազոտությունների կենտրոն» ՀԿ	Ես մենակ չեմ	Նոյեմբեր, 2006թ. - հունիս, 2007թ.	3 749 000 դրամ	4 540 500 դրամ
12.	«Գորիսի քաղաքացիական կրթության կենտրոն» ՀԿ	Օրենքի գերակայություն	Նոյեմբեր, 2006թ. - օգոստոս, 2007թ.	3 535 000 դրամ	4 555 000 դրամ
13.	«Գորիսի մամուլի ակումբ» ՀԿ	Պաշտպանենք տեղեկատվության ազատությունը	Նոյեմբեր, 2006թ. – հունիս, 2007թ.	3 173 600 դրամ	3 808 600 դրամ
14.	«Արքայադուստր Փարվանա» կանանց ՀԿ	Անվտանգ մայրություն	Նոյեմբեր, 2006թ. – հունիս, 2007թ.	3 915 800 դրամ	4 803 800 դրամ

3-րդ փուլ

N	Կազմակերպության անվանումը	Ծրագրի անվանումը	Իրականացման ժամանակահատվածը	Դրամաշնորհի չափը	Ծրագրի բյուջեն
1.	«Սյունիքի քաղաքացիական կրթության կենտրոն» ՀԿ	Համայնքային համագործակցություն	Փետրվար – օգոստոս, 2007թ.	2 472 000 դրամ	2 981 000 դրամ
2.	«Հզոր ապագա» ՀԿ	Երիտասարդական ապագա	Փետրվար – օգոստոս, 2007թ.	2 474 500 դրամ	2 980 500 դրամ
3.	«Սյունյաց նախադպրոցականներ» ՀԿ	Պաշտպանված իրավունք	Փետրվար – օգոստոս, 2007թ.	2 486 900 դրամ	2 985 900 դրամ
4.	«Սիջազգային փորձի ուսումնասիրության գիտական կենտրոն» ՀԿ	Աշխատողների շահերի պաշտպանություն	Փետրվար – հունիս, 2007թ.	2 496 970 դրամ	2 999 970 դրամ
5.	«Խայթ» ՀԿ	Կանխարգելում	Փետրվար – հունիս, 2007թ.	2 478 600 դրամ	2 978 600 դրամ

4-րդ փուլ


N	Կազմակերպության անվանումը	Ծրագրի անվանումը	Իրականացման ժամանակահատվածը	Դրամաշնորհի չափը	Ծրագրի բյուջեն
1.	«Սիսիանի զարգացման կենտրոն» ՀԿ	Երիտասարդական քաղաքականության ներդրման ծրագիր հարավային Հայաստանում	Դեկտեմբեր, 2007թ. – հունիս, 2008թ.	3 158 000 դրամ	3 862 000 դրամ
2.	«Բարի երթ» ավտոմոտոսիրողների ՀԿ	Հանուն անվտանգ երթելության	Դեկտեմբեր, 2007թ. – հունիս, 2008թ.	3 198 000 դրամ	3 853 000 դրամ
3.	«Սյունյաց նախադպրոցականներ» ՀԿ	Կրթության իրավունք	Դեկտեմբեր, 2007թ. – հունիս, 2008թ.	3 196 000 դրամ	3 853 000 դրամ
4.	«Հույս-98» ՀԿ	Ի նպաստ երեխաների արտադպրոցական կրթության	Դեկտեմբեր, 2007թ. – մայիս, 2008թ.	2 752 100 դրամ	3 345 100 դրամ

5.	«Արքայադուստր Փարվանա» կանանց ՀԿ	Կողմնորոշված երիտասարդություն	Դեկտեմբեր, 2007թ. – օգոստոս, 2008թ.	3 034 000 դրամ	3 637 000 դրամ
6.	«Գորիսի ստեղծագործողներ» ՀԿ	Մշակութային օջախների զարգացում	Դեկտեմբեր, 2007թ. – հունիս, 2008թ.	2 898 500 դրամ	3 488 500 դրամ
7.	«Շուշան» ՀԿ	Լապտերիկ	Դեկտեմբեր, 2007թ. - հունիս, 2008թ.	3 161 050 դրամ	3 781 950 դրամ
8.	«Ասպարեզ» ՀԿ	Պաշտպանված սպառող	Դեկտեմբեր, 2007թ. - հունիս, 2008թ.	3 059 000 դրամ	3 679 000 դրամ
9.	«Միջազգային փորձի ուսումնասիրության գիտական կենտրոն» ՀԿ	Առողջ սերունդ՝ առողջ համայնք	Դեկտեմբեր, 2007թ. – օգոստոս, 2008թ.	2 496 970 դրամ	2 999 970 դրամ
10.	«Իրավունքների տեղեկատվական կենտրոն» իրավապաշտպան-խորհրդատվական ՀԿ	Հասարակական մոնիտորինգ՝ հանուն իրավունքների պաշտպանության	Դեկտեմբեր, 2007թ. – հունիս, 2008թ.	3 162 500 դրամ	3 934 310 դրամ


5-րդ փուլ

N	Կազմակերպության անվանումը	Ծրագրի անվանումը	Իրականացման ժամանակահատվածը	Դրամաշնորհի չափը	Ծրագրի բյուջեն
1.	«Սյունիքի քաղաքացիական կրթության կենտրոն» ՀԿ	6 տարեկանների կրթություն	Հուլիս – հոկտեմբեր, 2008թ.	1 140 399 դրամ	1 440 399 դրամ
2.	«Նոր հորիզոններ» ՀԿ	Կառավարման ուղղվածությունը դեպի աշակերտը	Հուլիս – հոկտեմբեր, 2008թ.	1 233 002 դրամ	1 450 502 դրամ
3.	«Երիտասարդ սերունդ» ՀԿ	Հանուն մանուկների առողջության	Հուլիս, 2008թ. – հունվար, 2009թ.	2 963 300 դրամ	3 866 300 դրամ
4.	«Մարտիրոս» բարեգործական հիմնադրամ	Դեղագետը հիվանդի եւ բժշկի խորհրդատու - գործընկեր	Հուլիս - դեկտեմբեր, 2008թ.	2 963 000 դրամ	3 681 500 դրամ
5.	«Գորիս- Բումբերանգ» ՀԿ	Կողմնորոշում	Հուլիս-դեկտեմբեր, 2008թ.	2 955 000 դրամ	3 684 000 դրամ
6.	«Լեռնեցիների առողջ սերունդ» ՀԿ	Բնությունը քո ձեռքերում է	Հուլիս - հոկտեմբեր, 2008թ.	1 775 234 դրամ	2 196 378 դրամ
7.	«Ատլանտ» ՀԿ	Հիգիենիկ արտադրություն	Հուլիս, 2008թ. - փետրվար, 2009թ.	2 995 000 դրամ	3 615 000 դրամ

Դրամաշնորհների բաշխումն ըստ տարածաշրջանների



Իրականացված նախագծերն ըստ ոլորտների



- Տեխնիկական աջակցության ռեսուրսների օգտագործումը

Դրամաշնորհառու կազմակերպությունները դոնորից հայցվող գումարի 10%-ը կարող էին նախատեսել տեխնիկական աջակցություն ստանալու համար: Տեխնիկական աջակցության մեջ մտնում են՝ աշխատակազմի վերապատրաստման դասընթացների, խորհրդատվությունների եւ այլ ծառայությունների կազմակերպումը, որոնք նպաստում են կազմակերպությունների՝ շահերի պաշտպանության ոլորտում կարողությունների զարգացմանը:

Այդ ֆինանսական միջոցները տրամադրվում են ծրագրերի ֆինանսավորման առաջին իսկ ամսվանից: Այս ֆոնդի օգտագործմանը նախընթաց իրականացվում է կազմակերպությունների կարողությունների գնահատում, որի հիման վրա կազմակերպությունները կազմում են շահերի պաշտպանության կարողությունների զարգացման պլաններ եւ ծրագրերի վերջում իրականացվում է կրկնակի գնահատում, որի նպատակն է՝

- **չափել ԶԿ-ների ՇՊ կարողությունները դրամաշնորհային ծրագրերի ավարտից հետո,**
- **հետազոտել, թե ինչպես են ծրագրերի իրականացումը ազդել դրամաշնորհառու կազմակերպությունների ՇՊ կարողությունների զարգացմանը:**

Քաղաքացիական հասարակության կազմակերպություններն օգտվելով տեխնիկական աջակցությունից՝ մասնակցել են ավելի քան 29 թեմաներով դասընթացների, 2 թեմայով խորհրդատվությունների եւ կազմակերպության զարգացման նպատակով կազմակերպված հանդիպումների:

Սյունիքի եւ Վայոց Ձորի մարզերի քաղաքացիական հասարակության կազմակերպությունների 429 ներկայացուցիչներ շահերի պաշտպանության եւ կազմակերպական զարգացման ոլորտներում հնարավորություն են ստացել զարգացնելու իրենց կարողությունները:

Շահերի պաշտպանության պլանները, որոնք կազմվել են կարողությունների գնահատման արդյունքում, ծառայություններ գնելիս ուղեւիշ են հանդիսացել կազմակերպությունների համար: Դասընթացների 85%-ը պլանավորված է եղել դրամաշնորհառուների ՇՊ կարողությունների զարգացման նախագծերում: I-III փուլերում դրամաշնորհ իրականացրած կազմակերպությունները տեխնիկական աջակցության համար հատկացված իրենց գումարներն օգտագործել են 95%-ով, որի շնորհիվ, գնահատման արդյունքում, 0-4 բալանոց սանդղակով (0-0.9-նախնական փուլ, 1.0-1.9-սկսնակ փուլ, 2-2.9-զարգացման փուլ, 3-3.9-համախմբման փուլ, 4.0- հասունության փուլ) կազմակերպությունների կարողություններն աճել են 1,6 միավորից մինչեւ 2,08: IV եւ V փուլերի դրամաշնորհառուները տեխնիկական աջակցության համար իրենց հատկացված գումարները օգտագործել են 70-75%-ով:

Վերլուծելով տեխնիկական աջակցության արդյունավետությունը, կարելի է ասել, որ այն ծառայել է նպատակին՝ զարգացնելով դրամաշնորհառու կազմակերպությունների ՇՊ կարողությունները:

Տեխնիկական աջակցության շրջանակներում ԶԶԿ-ների ստացած ծառայությունների 92%-ը կազմում են ԳՈՒՄ ՍՊԸ-ի կողմից մատուցած ծառայությունները, իսկ 8%-ն՝ այլ կազմակերպություններից եւ անհատ կապալառուներից:

Սյունիքի եւ Վայոց Ձորի մարզերի քաղաքացիական հասարակության կազմակերպությունները տեխնիկական աջակցության ֆոնդից օգտվելով՝ մասնակցել են ստորեւ նշված թեմաներով դասընթացներին՝

- **Մրցունակ հայտ գրելու հմտություններ,**
- **Ռազմավարական պլանավորում,**
- **Լրատվամիջոցների հետ հարաբերություններ,**
- **Շահերի պաշտպանություն (ներածական),**
- **Շահերի պաշտպանություն (խորացված),**
- **Ծրագրերի վերահսկում եւ գնահատում,**
- **Ներկայացման հմտություններ,**
- **Տվյալների հավաքագրման մեթոդներ,**
- **Ինչպե՞ս կազմել բյուջե,**
- **Ֆոնդահայթայթման հմտություններ,**
- **Տրամաբանական կառուցվածք,**
- **Բյուջեի վերլուծություն,**
- **Անդամակցության զարգացում եւ կամավորների հավաքագրում,**
- **Ժամանակի արդյունավետ կառավարում,**

- Արդյունավետ ցանցերի ձեւավորում,
- SPSS ներածական:

- Սյունիքի եւ Վայոց Ձորի ՇՊ դրամաշնորհային նախաձեռնությունները

Տեղական ինքնակառավարման ոլորտ
01.

Կազմակերպության անվանումը	«Գորիս- Բուներանգ» ՀԿ
Ծրագրի անունը	Ժամանակն է ներկայանալու
Պայմանագրի համարը	# ARM-AI-G-2006-01
Ծրագրի տեւողությունը	Ապրիլ-նոյեմբեր, 2006թ.
Ծրագրի իրականացման վայրը	ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Գորիս եւ հարակից 4 գյուղական համայնքներ
Դրամաշնորհի չափը	4 000 000 դրամ
Կազմակերպության ներդրումը	880 000 դրամ
Ընդհանուր գումարը	4 880 000 դրամ
Էլ. փոստը	goris_boomerang@rambler.ru
Ծրագրի նպատակը	Նպաստել Վերիշեն, Քարահունջ, Խնձորեսկ եւ Շինուհայր համայնքներում հաշմանդամ երեխաների համար անհատական մասնագիտական կրթություն եւ գեղագիտական դաստիարակություն ստանալու հնարավորության ստեղծմանն ուղղված մասնագիտական կրթության հաստատությունների կանոնադրություններում փոփոխությունների ընդունմանը ՏԻՄ-երի կողմից:
Ծրագրի արդյունքը	<p>Ծրագրով նախատեսված 4 համայնքներն (Վերիշեն, Քարահունջ, Խնձորեսկ եւ Շինուհայր) ընդունել են որոշումներ, որոնց հիման վրա կանոնակարգվում են այդ համայնքների հաշմանդամ երեխաների մասնագիտական կրթություն ստանալու համար անհրաժեշտ գործընթացները՝ հաշվի առնելով նրանց նախասիրությունները եւ համայնքների հնարավորությունները:</p> <p>Համայնքներում հաշմանդամ երեխաների նախասիրությունների ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ այդ երեխաներն ունեն տարբեր նախասիրություններ եւ հետաքրքրություններ, որոնցով զբաղվելու եւ զարգանալու հնարավորություն մասնագիտական դպրոցները չեն տալիս:</p> <p>Ծրագրի իրականացման ընթացքում կազմակերպությունը համոզես է եկել հետեւյալ առաջարկությամբ՝ նշված գյուղական համայնքներում գործող երաժշտական դպրոցները պետք է վերակազմավորվեն եւ դառնան արվեստի դպրոցներ, որոնք կընդգրկեն արվեստի տարբեր բնագավառներ՝ ներառյալ երաժշտական կրթությունը:</p> <p>Վերիշեն, Խնձորեսկ եւ Շինուհայր համայնքների համար «Գորիս-Բուներանգ» ՀԿ-ի կողմից, որպես օգնություն, մշակվել է արվեստի դպրոցի կանոնադրություն, որը կիրառելի է այդ համայնքների համար: Ծրագրի ընթացքում 15 հաշմանդամ երեխաներ օգտվել են իրենց համայնքների երաժշտական դպրոցների ծառայություններից:</p>

02.

Կազմակերպության անվանումը	Սյունիքի մարզի հաշմանդամների «Խարիսխ» ՀԿ
Ծրագրի անունը	Մաքուր քաղաք՝ առողջ քաղաքացի
Պայմանագրի համարը	# ARM-AI-G-2006- 05
Ծրագրի տեւողությունը	Ապրիլ - դեկտեմբեր, 2006թ.
Ծրագրի իրականացման վայրը	ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Միսիան
Դրամաշնորհի չափը	3 517 900 դրամ
Կազմակերպության ներդրումը	704 200 դրամ
Ընդհանուր գումարը	4 222 100 դրամ
Էլ. փոստը	khariskh@mail.ru
Ծրագրի նպատակը	Նպաստել Միսիան քաղաքի ՏԻՄ-ի կողմից իրականացվող հանրային քաղաքականության բարելավմանը՝ կապված Միսիանում աղբահանության նոր մեխանիզմի ներդրման հետ:
Ծրագրի արդյունքը	

Ծրագրի ընթացքում կազմակերպությունն արդյունավետ համագործակցություն է հաստատել Սիսիանի 5 հանրակրթական հաստատությունների աշակերտական խորհուրդների հետ, որոնք էլ աջակցել են ծրագրին: Կազմակերպության կողմից մշակվել է Սիսիան քաղաքի աղբահանության բարելավմանն ուղղված ծրագրի նախագիծ, որը հաստատվել է Սիսիան համայնքի ավագանու կողմից: Ծրագրի իրականացման արդյունքում մաքրվել են քաղաքի բնակելի տարածքում աղբակույտի վերածված տեղամասերը եւ սկսել է գործել աղբահանության բարելավված մեխանիզմը: ՀԿ-ն համագործակցել է Սի-էջ-էֆ կազմակերպության հետ, որոնք պատրաստել են աղբարկղերի համար նախատեսված հարմարություններ (շինություններ), իսկ «Խարիսխ» ՀԿ-ն մշակել է աղբահանության մեխանիզմ եւ այն ներդրել համայնքում:

Ծրագիրը խթանել է քաղաքապետարանի կողմից աղբահանության բարելավմանն ուղղված նախաձեռնությունների իրականացումը:

03.

Կազմակերպության անվանումը	«Երիտասարդ ընտանիքի աջակցության կենտրոն» ՀԿ
Ծրագրի անունը	Համայնքի զարգացման մասնակցային տիպային մոդել
Պայմանագրի համարը	# ARM-AI-G-2006-07
Ծրագրի տեւողությունը	Ապրիլ -նոյեմբեր, 2006թ.
Ծրագրի իրականացման վայրը	ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք. Եղեգնաձոր
Դրամաշնորհի չափը	3 994 750 դրամ
Կազմակերպության ներդրումը	933 060 դրամ
Ընդհանուր գումարը	4 927 810 դրամ
Էլ. փոստը	rinagay@rambler.ru
Ծրագրի նպատակը	Նպաստել Եղեգնաձոր քաղաքում ՏԻՄ-ի գործունեության հանրային մասնակցությանն ուղղված հանրային վերահսկման եւ զնահատման մոդելի ներդրմանը:
Ծրագրի արդյունքը	Ծրագրի շահառուները Եղեգնաձոր համայնքի բնակիչներն էին: Ծրագրի իրականացման արդյունքում համայնքի 36 ակտիվ անդամներ պարբերաբար մասնակցել են ավագանու նիստերին: Նրանց կողմից մշակվել են կապիտալ ներդրումների 19 շինարարական ծրագրեր, որոնցից 17-ը հաստատվել է ՏԻՄ-ի կողմից: Հաստատված ծրագրերից 4-ն արդեն իրականացվել է: Շահառուների կյանքում ակնհայտ են այնպիսի դրական փոփոխություններ, ինչպիսիք են՝ Եղեգնաձորի թիվ 5 մանկապարտեզի տանիքի վերանորոգումը, Շահունյան փողոցի ասֆալտապատումը, Սոմիկի փողոցի ջրագծերի վերանորոգումը, փողոցներում աղբարկղերի տեղադրումը: Կազմակերպությունը ներդրել է հանրային վերահսկման մոդել ԹԿԽ-ների (թաղային կոորդինացիոն խորհուրդ) եւ ՀԿԽ-ների (համայնքային կոորդինացիոն խորհուրդ) միջոցով, որոնք արդյունավետորեն սկսել են աշխատել՝ մասնակցելով ՏԻՄ-ի աշխատանքներին՝ թափանցիկ դարձնելով կառույցի գործունեությունը:

04.

Կազմակերպության անվանումը	«Սիսիանի զարգացման կենտրոն» ՀԿ
Ծրագրի անունը	Աջակցություն Սիսիանի երիտասարդական քաղաքականության կիրառմանը
Պայմանագրի համարը	# ARM-AI-G-2006-11
Ծրագրի տեւողությունը	Նոյեմբեր, 2006թ. - հուլիս, 2007թ.
Ծրագրի իրականացման վայրը	ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Սիսիան
Դրամաշնորհի չափը	3 649 500 դրամ
Կազմակերպության ներդրումը	1 048 000 դրամ
Ընդհանուր գումարը	4 697 500 դրամ
Էլ. փոստը	sdc_ngo@yahoo.com
Ծրագրի նպատակը	Նպաստել Սիսիանի համայնքի ավագանու որոշմամբ հաստատված «Սիսիանի երիտասարդական քաղաքականություն» փաստաթղթի կիրարկմանը:
Ծրագրի արդյունքը	Կազմակերպությունը ԱՄՆ կառավարության աջակցությամբ 2005 թվականին մշակել է ավագանու հաստատմանն է ներկայացրել «Սիսիանի երիտասարդական քաղաքականություն» փաստաթուղթը, որը 2006թ. մայիսի 16-ին համայնքի ավագանու որոշմամբ Սիսիան քաղաքում ընդունվել է որպես երիտասարդության զարգացման եւ կենսապայմանների բարելավման հիմնական ռազմավարություն: ԱՄՆ ՍԶԳ/ԲՇՊԱԾ ծրագրի շրջանակներում «Սիսիանի զարգացման կենտրոն» հասարակական կազմակերպությունը 2006-2007թթ Սիսիանում իրականացրել է «Աջակցություն Սիսիանի երիտասարդական քաղաքականության կիրառմանը» ծրագիրը, որի արդյունքում:

- Սիսիան քաղաքում 60%-ով աճել է երիտասարդական միջոցառումների քանակը,
 - Սիսիանում հիմնադրվել է բազմաֆունկցիոնալ երիտասարդական կենտրոն,
 - համայնքի ավագանուն կից ձեւավորվել է երիտասարդական հանձնաժողով,
 - հիմնադրվել է տարածաշրջանի երիտասարդական կառույցները ներկայացնող երիտասարդական խորհուրդ, որին անդամակցում են 14 երիտասարդական կառույցների ներկայացուցիչներ,
 - մշակվել եւ համայնքի ավագանու հաստատմանն է ներկայացվել «Սիսիանի երիտասարդական գործողությունների քառամյա ծրագիր» փաթեթը,
 - կազմակերպվել են երիտասարդական մարզամշակութային 12 միջոցառում,
 - Սիսիանի տարածաշրջանում բարձրացել է որոշումների կայացման գործընթացում երիտասարդների մասնակցությունն ու դերը: Սիսիանի երիտասարդական խորհուրդն սկսել է ակտիվորեն իրագործել «Երիտասարդական գործողությունների քառամյա ծրագիր» փաթեթը, որը հիմնված է «Սիսիանի երիտասարդական քաղաքականություն» փաստաթղթի վրա: Հյուսիսային Իռլանդիայի համայնքների զարգացման հիմնադրամի միջոցներով խորհուրդը փոքր դրամաշնորհներ է տրամադրել տարածաշրջանի ակտիվ խմբերին ու կազմակերպություններին, անցկացնելով մրցույթ: Նախագիծը շարունակական է եւ հաջողության դեպքում ներդրումները կավելանան:

05.

Կազմակերպության անվանումը	«Սիսիանի զարգացման կենտրոն» ՀԿ
Ծրագրի անունը	Երիտասարդական քաղաքականության ներդրման ծրագիր հարավային Հայաստանում
Պայմանագրի համարը	# ARM-AI-G-2007-08
Ծրագրի տեւողությունը	Ղեկտեմբեր, 2007թ. – հուլիս, 2008թ.
Ծրագրի իրականացման վայրը	ՀՀ, Սյունիքի մարզ
Դրամաշնորհի չափը	3 158 000 դրամ
Կազմակերպության ներդրումը	704 000 դրամ
Ընդհանուր գումարը	3 862 000 դրամ
Էլ. փոստը	sdc_ngo@yahoo.com
Ծրագրի նպատակը	Սյունիքի մարզի 6 համայնքներում ներդնել երիտասարդության կողմից մշակված եւ համայնքների ավագանիների կողմից հաստատված «Երիտասարդական քաղաքականություն» փաստաթուղթը:
Ծրագրի արդյունքը	Ծրագրի շահառուներն էին Սյունիքի մարզի Գորիս, Վերիշեն, Քարահունջ, Տոլորս, Աշոտավան եւ Վաղատին համայնքների երիտասարդները: Կազմակերպությունը կարողացել է 6 համայնքներում հասարակությանը իրազեկել ծրագրի նպատակներին եւ հասնել նրան, որ երիտասարդները մոտիվացվեն եւ ներգրավվեն ծրագրային գործընթացներում: Ծրագրի արդյունքում մշակվել են շահառուների կարիքից բխող եւ խիստ արդիական, հիմնախնդիրների լուծմանը նպաստող, երիտասարդական քաղաքականություններ: Եվ որ ամենակարեւորն է, ընդգրկված համայնքներից չորսի՝ Քարահունջի, Տոլորսի, Վաղատինի եւ Աշոտավանի ավագանիների կողմից հաստատվել է «Երիտասարդական քաղաքականություն» փաստաթուղթը: Համայնքներում ձեւավորվել են Համայնքային երիտասարդական քաղաքականությունների կիրառման մեխանիզմները:

06.

Կազմակերպության անվանումը	«Իրավունքների տեղեկատվական կենտրոն» իրավապաշտպան-խորհրդատվական ՀԿ
Ծրագրի անունը	Ժողովրդավար ինքնակառավարում
Պայմանագրի համարը	# ARM-AI-G-2006-03
Ծրագրի տեւողությունը	Ապրիլ - դեկտեմբեր, 2006թ.
Ծրագրի իրականացման վայրը	ՀՀ, Սյունիքի մարզ, Գորիսի տարածաշրջան
Դրամաշնորհի չափը	3 993 150 դրամ
Կազմակերպության ներդրումը	897 381 դրամ
Ընդհանուր գումարը	4 890 531 դրամ
Էլ. փոստը	itek@rambler.ru
Ծրագրի նպատակը	Նպաստել Գորիսի համայնքի ավագանու կողմից քաղաքացիների խնդիրների ակտիվ արձագանքմանը:
Ծրագրի արդյունքը	Ծրագրի իրականացման ընթացքում պատրաստվել է «Քաղաքացիների ընդունելության կանոնակարգի նախագիծ» եւ հաստատվել Գորիսի ավագանու կողմից: Կանոնակարգի միջոցով Գորիս քաղաքի բնակիչները հնարավորություն են ստացել ավագանիների հետ ունենալ կանոնակարգված

հանդիպումներ: Ձեռք է բերվել համաձայնություն «Երկխոսություն» հեռուստածրագրի շարունակական կազմակերպման շուրջ: Սի քանի հաղորդաշարերի ընթացքում բացահայտվել են Գորիսի երիտասարդությանը հուզող հիմնախնդիրները եւ դրանք ներկայացվել են ՏԻՄ-ին, հաջողվել է նաեւ նպաստել դրանցից մի քանիսի լուծմանը: Օրինակ՝ Գորիսի պետական համալսարանի ուսանողական խորհրդին ավագանին ֆինանսական աջակցություն է ցույց տվել՝ ինտելեկտուալ մրցույթներ կազմակերպելու համար:

07.

Կազմակերպության անվանումը	«Կապանի համայնքների միություն» ՀԿ
Ծրագրի անունը	Համատիրություն
Պայմանագրի համարը	# ARM-AI-G-2006-13
Ծրագրի տեւողությունը	Նոյեմբեր, 2006թ. - հուլիս, 2007թ.
Ծրագրի իրականացման վայրը	ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Կապան
Դրամաշնորհի չափը	3 767 300 դրամ
Կազմակերպության ներդրումը	1 558 500 դրամ
Ընդհանուր գումարը	5 325 800 դրամ
Էլ. փոստը	hamaynq@syunik.am
Ծրագրի նպատակը	Նպաստել Կապան համայնքի 20 համատիրության գործունեության արդյունավետությանը՝ բարձրացնելով համատիրությունների կառավարման հաշվետվողականությունը եւ համատիրությունների անդամների մասնակցությունը:
Ծրագրի արդյունքը	Կազմակերպությունը Կապանում գործող 20 համատիրության ծրագրային գործողություններում կարողացել է ներգրավել 15-ին: Այդ համատիրությունների անդամների եւ ղեկավարների համար կազմակերպվել են անց են կացվել սեմինար-քննարկումներ, որոնց ընթացքում մասնակիցները բարելավել են իրենց իրավունքներին ու պարտականություններին առնչվող գիտելիքները: Ծրագրի իրականացման արդյունքում համատիրությունների անդամներն սկսել են ավելի ակտիվ մասնակցություն ունենալ իրենց համատիրությունների աշխատանքների պլանավորման, իրականացման գործընթացներին: Ավելացել է համատիրությունների անդամների թիվը: Համատիրությունների անդամների պահանջով Ձորք, Յունան, Յունան 1, Աջափնյակ համատիրությունների ղեկավարների կողմից պատրաստվել են 2007 թվականի գործունեության մասին ամփոփ հաշվետվություններ, որոնք փակցվել են տվյալ համատիրությունների ցուցատախտակներին: Համատիրությունների անդամների թվի աճի արդյունքում զրանցվել է մուտքային վճարների աճ: Օր.՝ Ձորք համատիրությունում հավաքագրված գումարները բնակիչների պահանջով, որպես առաջնային խնդիր, 2008թ. գարնանը ծախսվել են խմելու ջրագծերի վերանորոգման վրա: Յունան 1 համատիրությունում գումարները ծախսվել են տանիքների քամուց կրած հետեւանքները վերացելու համար:

08.

Կազմակերպության անվանումը	«Սյունիքի քաղաքացիական կրթության կենտրոն» ՀԿ
Ծրագրի անունը	Համայնքային համագործակցություն
Պայմանագրի համարը	# ARM-AI-G-2007-01
Ծրագրի տեւողությունը	Փետրվար – օգոստոս, 2007թ.
Ծրագրի իրականացման վայրը	ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Գորիս
Դրամաշնորհի չափը	2 472 000 դրամ
Կազմակերպության ներդրումը	509 000 դրամ
Ընդհանուր գումարը	2 981 000 դրամ
Էլ. փոստը	grigorya@rambler.ru
Ծրագրի նպատակը	Նպաստել Գորիսի համայնքի ավագանուն կից ստեղծված հանձնախմբերի գործունեության արդյունավետության բարձրացմանը՝ ներդնելով հանձնաժողովների գործունեության կանոնակարգ:
Ծրագրի արդյունքը	Կազմակերպությունը պատրաստել է ավագանուն կից ստեղծված հանձնախմբերի գործունեության կանոնակարգ, որն ընդունվել է Գորիսի ավագանու կողմից: Այն տպագրվել է ՏԻՄ-ի մասին օրենքի ավագանիներին վերաբերող հատվածի հետ միասին՝ առանձին բրոշյուրով եւ տարածվել համայնքում: Ավագանիների եւ ակտիվ անդամների մասնակցությամբ տեղի է ունեցել սեմինար, որտեղ մեկնաբանվել են կանոնակարգի դրույթները եւ կանոնակարգի ներդրման հետ կապված խնդիրները: Ձեւավորվել են համայնքային 3 ակտիվ խմբեր, որոնք մասնակցում են ավագանու հանձնախմբերի աշխատանքներին:

09.

Կազմակերպության անվանումը	«Հզոր ապագա» ՀԿ
----------------------------------	-----------------

Ծրագրի անունը	<i>Երիտասարդական ապագա</i>
Պայմանագրի համարը	<i># ARM-AI-G-2007-03</i>
Ծրագրի տեւողությունը	<i>Փետրվար – օգոստոս, 2007թ.</i>
Ծրագրի իրականացման վայրը	<i>ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Կապան</i>
Դրամաշնորհի չափը	<i>2 474 500 դրամ</i>
Կազմակերպության ներդրումը	<i>506 000 դրամ</i>
Ընդհանուր գումարը	<i>2 980 500 դրամ</i>
Էլ. փոստը	<i>Kapan.syunik@rambler.ru</i>
Ծրագրի նպատակը	<i>Նպաստել Կապանի երիտասարդական հիմնախնդիրների վերհանմանը եւ դրանց ընդգրկմանը Կապանի զարգացման քառամյա ծրագրում:</i>
Ծրագրի արդյունքը	<i>Երիտասարդների մասնակցությամբ կազմակերպվել են ֆորումներ եւ հանրային քննարկումներ, որոնց ընթացքում վեր են հանվել նրանց առաջնային հիմնախնդիրները: Համայնքի բյուջեից 230 000 ՀՀ դրամ հատկացվել է վերոնշյալ հանդիպում-քննարկումների կազմակերպման համար: Դրանց լուծման ուղղությամբ առաջարկություններ եւ կարծիքներ են հավաքագրվել Կապանում գործող երիտասարդների հիմնախնդիրներով հետաքրքրված ՀԿ-ներից: Հավաքագրված առաջարկությունների հիման վրա Կապանի երիտասարդների հիմնախնդիրների լուծմանն ուղղված 2008թ. միջոցառումների ծրագրի նախագծի մեջ կատարվել են որոշակի լրացումներ. դրանք հիմնականում հանդիպում-քննարկումներ են երիտասարդների եւ համայնքային իշխանությունների ներկայացուցիչների հետ: Նախագիծը քննարկվել է համայնքի ավագանու եւ մարզպետարանի երիտասարդության, սպորտի եւ մշակույթի բաժնի աշխատակիցների հետ: Որոշակի դիտարկումներից հետո նախագծի վերջնական տարբերակը ներկայացվել է համայնքի ավագանուն եւ 2008թ. փետրվարին հաստատվել:</i>

Կրթական ոլորտ

10.

Կազմակերպության անվանումը	<i>«Կապանի ուսուցիչներ» ՀԿ</i>
Ծրագրի անունը	<i>Համայնքի կողմից գնահատված ուսուցիչ</i>
Պայմանագրի համարը	<i># ARM-AI-G-2006- 04</i>
Ծրագրի տեւողությունը	<i>Ապրիլ - դեկտեմբեր, 2006թ.</i>
Ծրագրի իրականացման վայրը	<i>ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Կապան</i>
Դրամաշնորհի չափը	<i>3 993 500 դրամ</i>
Կազմակերպության ներդրումը	<i>801 000 դրամ</i>
Ընդհանուր գումարը	<i>4 794 500 դրամ</i>
Էլ. փոստը	<i>Magda52@mail.ru</i>
Ծրագրի նպատակը	<i>Նպաստել Կապան համայնքի ՏԻՄ-ի կողմից ուսուցիչների գործունեության համայնքային գնահատման մեխանիզմի ներդրմանը:</i>
Ծրագրի արդյունքը	<i>Նախաձեռնության իրականացման արդյունքում Կապանի ավագանին հաստատել է «Տարվա ուսուցիչ» մրցույթի կանոնակարգի նախագիծը: Կապանի քաղաքապետն ու ավագանիները ողջունել են ծրագրի գաղափարը եւ պատրաստակամություն են հայտնել աջակցել նախաձեռնությանը: Նախագծի պատրաստմանն ակտիվ մասնակցություն են ունեցել Կապանի դպրոցների տնօրինություններն ու ուսուցիչները: Կազմակերպությունը քաղաքապետարանի հետ համատեղ փորձարկել է կանոնակարգը եւ անցկացրել «Տարվա ուսուցիչ» մրցույթը, որին մասնակցել են Կապանի 10 դպրոցների ուսուցիչներ: Մրցույթի արդյունքում թվով 9 ուսուցիչ լավագույնն են ճանաչվել եւ ստացել պատվոգրեր ու նվերներ՝ քաղաքապետարանի եւ Քաջարանի պղնձամուխրդենային կոմբինատի կողմից: Ծրագրի արդյունքում ուժեղացել է քաղաքապետարանի աշխատակիցների, ավագանիների կապը դպրոցների հետ: Նրանք հաճախակի են մասնակցում դպրոցներում կազմակերպվող տարբեր միջոցառումների եւ տնօրինության ու ուսուցիչների հետ քննարկում դպրոցին հուզող հարցեր: Քաղաքի համար կարեւորագույն խնդիրների քննարկմանը քաղաքապետարանը մասնակից է դարձնում նաեւ դպրոցների ներկայացուցիչներին:</i>

11.

Կազմակերպության անվանումը	«Սյունիքի քաղաքացիական կրթության կենտրոն» ՉԿ
Ծրագրի անունը	6 տարեկանների կրթություն
Պայմանագրի համարը	# ARM-AI-G-2008-05
Ծրագրի տեւողությունը	Յուլիս – դեկտեմբեր, 2008թ.
Ծրագրի իրականացման վայրը	ՀՀ, Սյունիքի մարզ
Դրամաշնորհի չափը	1 140 399 դրամ
Կազմակերպության ներդրումը	300 000 դրամ
Ընդհանուր գումարը	1 440 399 դրամ
Էլ. փոստը	grigorya@rambler.ru
Ծրագրի նպատակը	Նպաստել Սյունիքի մարզի հանրակրթական հաստատություններում 6 տարեկան երեխաների ուսուցման կազմակերպման համար անհրաժեշտ պայմանների ստեղծման մեխանիզմների ներդրմանը:
Ծրագրի արդյունքը	Ծրագրի շրջանակներում ստեղծվել է «Վեց տարեկան երեխայի դասասենյակը» ուղեցույցը դպրոցի տնօրենների համար, որի նպատակն է օգնել դպրոցի տնօրեններին և ուսուցիչներին կողմնորոշվելու առաջին դասարանցիների համար համապատասխան միջավայրի ստեղծման, դպրոցական կահույքի և անհրաժեշտ նյութերի ձեռք բերման հարցերում: Ձեռնարկը երաշխավորվել է կրթության ազգային ինստիտուտի կողմից և պատրաստ է տպագրման: «Սյունիքի քաղաքացիական կրթության կենտրոն» ՉԿ նախագահի և դոնոր կազմակերպության միջև առաջացած շահերի բախման պատճառով «Վեց տարեկանների կրթություն» նախաձեռնության ֆինանսավորումը 2008թ.-ի հոկտեմբերին դադարեցվել է դոնորի կողմից:

12.

Կազմակերպության անվանումը	«Հայաստանի կանաչների միություն» ՉԿ Վայոց Ձորի մասնաճյուղ
Ծրագրի անունը	Աջակցություն «Բնակչության էկոլոգիական կրթության եւ դաստիարակության մասին» ՀՀ օրենքի կիրարկմանը Վայոց Ձորի մարզում
Պայմանագրի համարը	# ARM-AI-G-2006-06
Ծրագրի տեւողությունը	Ապրիլ-դեկտեմբեր, 2006թ.
Ծրագրի իրականացման վայրը	ՀՀ, Վայոց Ձորի մարզ
Դրամաշնորհի չափը	3 999 200 դրամ
Կազմակերպության ներդրումը	800 470 դրամ
Ընդհանուր գումարը	4 799 670 դրամ
Էլ. փոստը	ruzanvayk@rambler.ru
Ծրագրի նպատակը	Նպաստել Վայոց Ձորի մարզում նախադպրոցական տարիքի երեխաների ՀՀ օրենքներին համապատասխան էկոլոգիական կրթություն ստանալու հնարավորությունների ստեղծմանը՝ նախակրթարաններում ներդնելով էկոլոգիական կրթության եւ դաստիարակության ձեռնարկ:
Ծրագրի արդյունքը	Ծրագրի շահառուները Վայոց Ձորի մարզի 17 նախակրթարանների 1500 սաներն ու 50 մանկավարժներն էին: Ծրագրի ընթացքում երեխաների բնապահպանական կրթությունն ու դաստիարակությունը կազմակերպվելու նպատակով նախակրթարանների մանկավարժների համար պատրաստվել է «Նախադպրոցական կրթական հաստատություններում էկոլոգիական կրթության եւ դաստիարակության» ձեռնարկ, որը հավանության է արժանացել կրթության ազգային ինստիտուտի /ԿԱԻ/ կողմից եւ ներդրվել Վայոց Ձորի նախակրթարաններում: ԿԱԻ-ի կողմից ձեռնարկն ընդունելի է համարվել ոչ միայն Վայոց Ձորի, այլև ՀՀ-ի բոլոր մարզերի նախակրթական հաստատությունների համար: Կազմակերպությունը տպագրել է 550 օրինակ ձեռնարկ: Ձեռնարկներ են ուղարկվել ՀՀ-ի բոլոր մարզերի նախակրթարաններ: Նախակրթարանների մանկավարժները ձեռնարկով աշխատում են 3-6 տարիքային խմբի երեխաների հետ: Նշյալ նախակրթարաններում կազմակերպվում են բնապահպանական միջոցառումներ եւ մեթոդական խաղեր: Կազմակերպությունը հրավերներ է ստացել Արարատի եւ Տավուշի մարզերից՝ ձեռնարկի ներկայացմանը մասնակցելու համար:

13.

14.

Կազմակերպության անվանումը	«Մարտիրոս» բարեգործական հիմնադրամ
Կազմակերպության անվանումը	«Նոր հորիզոններ» ՀԿ
Ծրագրի անունը	Կառավարման ուղղվածությունը դեպի աշակերտը
Պայմանագրի համարը	# ARM-AI-G-2008-02
Ծրագրի տեղողությունը	Հուլիս – դեկտեմբեր, 2008թ.
Ծրագրի իրականացման վայրը	ՀՀ, Սյունիքի մարզ
Դրամաշնորհի չափը	1 233 002 դրամ
Կազմակերպության ներդրումը	217 500 դրամ
Ընդհանուր գումարը	1 450 502 դրամ
Էլ. փոստը	avtigran@inbox.am
Ծրագրի նպատակը	Նպաստել Սյունիքի դպրոցների ինտերնետ համակարգչային կաբինետների /Ի-ՀԿ/ գործունեության կանոնակարգմանը եւ դրանց գործունեության արդյունավետության բարձրացմանն ուղղված կանոնակարգերի նրդրմանը:
Ծրագրի արդյունքը	Ծրագրի շրջանակներում մշակվել է հանրակրթական դպրոցներում ինտերնետ համակարգչային կենտրոնների գործունեության նոր ընթացակարգ: Դպրոցներում ծրագրավորման խմբակների ձեւավորմանն աջակցելու համար մշակվել եւ տպագրվել է ձեռնարկ՝ ինֆորմատիկայի ֆակուլտատիվ պարապմունքների, ծրագրավորման խմբակների համար: Ծրագիրը, շահերի բախման պատճառով, 2008թ. հոկտեմբերին դադարեցվել է դոնորի կողմից:
Ծրագրի անունը	Դեռահասների կրթություն՝ հանուն առողջության
Պայմանագրի համարը	# ARM-AI-G-2006-10
Ծրագրի տեղողությունը	Նոյեմբեր, 2006թ. - հունիս, 2007թ.
Ծրագրի իրականացման վայրը	ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք. Վայք եւ հարակից 5 գյուղական համայնքներ
Դրամաշնորհի չափը	3 747 500 դրամ
Կազմակերպության ներդրումը	854 100 դրամ

Ընդհանուր գումարը	4 601 600 դրամ
Էլ. փոստը	nune_petrosyan@yahoo.com
Ծրագրի նպատակը	Նպաստել Վայքում եւ դրան հարակից 5 գյուղական համայնքներում դեռահասների վերարտադրողական առողջության պահպանման վերաբերյալ կրթության արդյունավետության բարձրացմանը՝ դպրոցներում ներդնելով նարդու վերարտադրողական առողջության պահպանման վերաբերյալ ձեռնարկ:
Ծրագրի արդյունքը	Ծրագրի իրականացման արդյունքում մշակվել եւ կրթության ազգային ինստիտուտի հավանությանն է արժանացել նարդու վերարտադրողական առողջության պահպանման վերաբերյալ ձեռնարկը, որի կիրարկմամբ 2007թ. սեպտեմբերից Վայքի 3 եւ հարակից 5 գյուղերի դպրոցների, 7-9-րդ դասարանների թվով 475 երեխաներ վերարտադրողական առողջության պահպանման վերաբերյալ ստանում են գիտելիքներ՝ խմբակների եւ դասղեկական ժամերի ընթացքում: Կազմակերպության անդամները պարբերաբար այցելությունների միջոցով մասնակցում են դպրոցներում սեռական դաստիարակության իրականացման գործընթացներին: Կազմակերպության կամավորները, որոնք վերարտադրողական առողջության վերաբերյալ խորացված դասընթացներ են անցել, այցելում են դպրոցներ ու օգնում դասղեկներին: Կամավորները հավաքագրում են առաջարկություններ: Վայքի թիվ 1 դպրոցի հոգաբարձուների խորհրդի առաջարկով «Մարտիրոս» բարեգործական հիմնադրամը, ծրագրի ավարտից հետո, դեռահասների վերարտադրողական առողջության պահպանման վերաբերյալ խորացված դասընթաց է կազմակերպել: Դասընթացին մասնակցել են դպրոցի հոգաբարձուների խորհրդի անդամներ, ծնողխորհրդի անդամներ եւ ուսուցիչներ:

15.

Կազմակերպության անվանումը	«Բարի երթ» ավտոմոտոսիրողների ԴԿ
Ծրագրի անունը	Անվտանգությունը քո ձեռքերում է
Պայմանագրի համարը	# ARM-AI-G-2006-20
Ծրագրի տեւողությունը	Նոյեմբեր, 2006թ. – հունիս, 2007թ.
Ծրագրի իրականացման վայրը	ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Գորիս
Դրամաշնորհի չափը	3 815 700 դրամ
Կազմակերպության ներդրումը	140 000 դրամ
Այլ ներդրում	681 000 դրամ
Ընդհանուր գումարը	4 636 700 դրամ
Էլ. փոստը	e.balasanian@mail.ru
Ծրագրի նպատակը	Նպաստել Գորիս քաղաքի 6 հանրակրթական դպրոցներում ծանապարհային անվտանգության կանոնների դասավանդման արդյունավետության բարձրացմանը՝ մշակելով եւ դպրոցներում ներդնելով ծանապարհային անվտանգության մասին ձեռնարկ:
Ծրագրի արդյունքը	Ծրագիրն իրականացվել է «Ծանապարհային անվտանգության ազգային խորհուրդ» ԴԿ-ի հետ համագործակցաբար: Ծրագրի ընթացքում՝ շահառուների եւ մասնագետների անմիջական մասնակցությամբ մշակվել է «Անվտանգությունը քո ձեռքերում է» ուսուցչի համար ձեռնարկը եւ «Անվտանգությունը քո ձեռքերում է» գրքույկը՝ աշակերտի համար: ՀՀ ԿԳՆ կրթության ազգային ինստիտուտի կողմից նշված ուսումնական նյութերը դպրոցներում ներդնելու համար հավանության են արժանացել: Գորիսի 6 դպրոցներում ներդրվել են, ըստ որի այդ դպրոցների 4-6-րդ դասարանների աշակերտներն անցնում են ծանապարհային անվտանգության կանոնների վերաբերյալ դասընթացներ: Կազմակերպությունն աշխատանքներ է իրականացրել թիրախ դպրոցների 37 դասարանների դասղեկների հետ, որի արդյունքում յուրաքանչյուր դասարանում անցկացվել են 1-2 դասաժամ՝ «Անվտանգությունը քո ձեռքերում է» ձեռնարկի ուսուցմամբ: Դպրոցների երեխաներն սկսել են ակտիվորեն կազմակերպել մրցույթ-միջոցառումներ՝ կապված ծանապարհային երթուղիների կանոնների իմացության հետ:

16.

Կազմակերպության անվանումը	«Բարի երթ» ավտոմոտոսիրողների ԴԿ
Ծրագրի անունը	Հանուն անվտանգ երթուղիների
Պայմանագրի համարը	# ARM-AI-G-2007-14
Ծրագրի տեւողությունը	Ղեկտեմբեր, 2007թ. – հունիս, 2008թ.
Ծրագրի իրականացման վայրը	ՀՀ, Սյունիքի եւ Վայոց Ձորի մարզեր
Դրամաշնորհի չափը	3 198 000 դրամ
Կազմակերպության ներդրումը	655 000 դրամ
Ընդհանուր գումարը	3 853 000 դրամ
Էլ. փոստը	e.balasanian@mail.ru
Ծրագրի նպատակը	

Նպաստել Սյունիքի եւ Վայոց Ձորի մարզերի Կապան, Սիսիան, Վայք եւ Եղեգնաձոր քաղաքների դպրոցներում ծանապարհային անվտանգության կանոնների դասավանդման արդյունավետության բարձրացմանը՝ դպրոցներում ներդնելով «Անվտանգությունը քո ձեռքերում է» ձեռնարկը եւ գրքույկը:

Ծրագրի արդյունքը

Ծրագրում ընդգրկված 5 քաղաքների 40 դպրոցների թվով 60 5-րդ դասարանների 1300 աշակերտ դասղեկի ժամերին ծանապարհային երթելուության կանոնների /ճեԿ/ վերաբերյալ ստացել են անհրաժեշտ գիտելիքներ եւ հմտություններ: Մամուլում տպագրված հոդվածների, հեռուստահաղորդումների եւ հանդիպումների արդյունքում Սյունիքի եւ Վայոց Ձորի մարզերի բնակչությունն իրազեկվել է դպրոցներում ճեԿ-ի դասընթացներ ներդնելու մասին:

Ծրագրի ընթացքում մշակված, 33 ԿԳՆ Կրթության ազգային ինստիտուտի կողմից հավանության արժանացած եւ հրատարակված «Անվտանգությունը քո ձեռքերում է» ձեռնարկն ու գրքույկը, դպրոցների տնօրենների հետ ձեռք բերված պայմանավորվածությունների համաձայն, ներդրվել են դպրոցներում: Դպրոցականները գործնականում սկսել են կիրառել ճեԿ-ի վերաբերյալ ստացած գիտելիքները: Երկու մարզերի 5 քաղաքներում ձեւավորվել են 7-ական հոգուց բաղկացած թիմեր, որոնք կիրառելով դասընթացներից ստացած գիտելիքները հաջողությամբ մասնակցել են նախօրոք մշակված կանոնակարգով եւ մրցույթների համար նախատեսված պայմաններով անցկացված մրցույթներին եւ տիրապետելով ճեԿ-ին հաջողությամբ կարողացել են իրենց գիտելիքներով գոհացնել մրցույթներն անցկացնող ժյուրիին:

Սիսիանի տարածաշրջանի Սառնակունք գյուղի համայնքի ղեկավարն ու դպրոցի տնօրենն առանձնահատուկ պատրաստակամությամբ են ընդունել ծրագրի գաղափարները, որովհետեւ գյուղի միջով անցնող Հայաստան-Իրան միջպետական մայրուղում հաճախակի են վրաերթեր տեղի ունենում, դպրոցն անգամ ունեցել էր զոհ: ճեԿ-ի կանոնների իմացության սակարդակը բարձրացնելն օրախնդիր էր դպրոցի համար:

Ծրագրի արդյունքում երեխաների միջոցով կազմակերպվել է ակցիա, որի ընթացքում երեխաները ճեԿ-ի պահպանման մասին հիշեցման թերթիկներ են տարածել իրենց տարածաշրջանների վարորդների շրջանում: Ակցիան նպաստել է կազմակերպությանն անդամակցելու վարորդների դիմումների թվի, ինչպես նաեւ իրավական խորհրդատվություն ստանալու խնդրանքով կազմակերպությանը դիմող վարորդների թվի կտրուկ աճմանը:

«Անվտանգությունը քո ձեռքերում է» ձեռնարկն ու գրքույկն այսօր շարունակվում է ներդրվել նաեւ Հայաստանի մյուս մարզերի եւ Երեւանի դպրոցներում:

17.

Կազմակերպության անվանումը	«Սյունյաց նախադպրոցականներ» ՀԿ
Ծրագրի անունը	Կրթության իրավունք
Պայմանագրի համարը	# ARM-AI-G-2007-07
Ծրագրի տևողությունը	Դեկտեմբեր, 2007թ. – հուլիս, 2008թ.
Ծրագրի իրականացման վայրը	ՀՀ, Սյունիքի մարզ, Գորիսի տարածաշրջանի Հարթաշեն, Շինուհայր, Խոտ, Կորնիձոր, Հարժիս, Քարաշեն, Ակներ համայնքներ
Դրամաշնորհի չափը	3 196 000 դրամ
Կազմակերպության ներդրումը	657 000 դրամ
Ընդհանուր գումարը	3 853 000 դրամ
Էլ. փոստը	syunax@mail.ru

Ծրագրի նպատակը

Նպաստել Գորիսի տարածաշրջանի Հարթաշեն, Ակներ, Շինուհայր, Խոտ, Կորնիձոր, Հարժիս, Քարաշեն համայնքների ՏԻՄ-երի կողմից իրենց համայնքներում երեխաների նախադպրոցական կրթություն ստանալու հնարավորությունների ստեղծման գործընթացին:

Ծրագրի արդյունքը

«Սյունյաց նախադպրոցականներ» ՀԿ-ն ծրագրի շահառուներին, հիմնախնդրի վերաբերյալ որոշում կայացնողներին անմիջականորեն ներգրավելով տարբեր տեսակի միջոցառումներում կարողացել է բարձրացնել վերոնշյալ համայնքների բնակիչների իրազեկությունը «Նախակրթարանների մասին» ՀՀ օրենքի վերաբերյալ:

Նույն փոխներգործուն մեթոդներով ծրագրային աշխատանքային խումբը մշակել է նախադպրոցական կրթության մեխանիզմ՝ համայնքների ավագանիներին եւ համայնքապետերին ներկայացնելու համար: Սեխանիզմը հաստատվել է Հարթաշեն, Ակներ, Շինուհայր, Խոտ, Կորնիձոր, Հարժիս, Քարաշեն

համայնքների ավագանիների կողմից, որի համար բավականաչափ նպաստավոր նախապայման էր առաջիկայում՝ 2008թ. հոկտեմբերին կայանալիք ՏԻՄ ընտրությունները: Նույն բարենպաստ ժամանակաշրջանի արդյունք էր մեխանիզմի անմիջական կիրառումը: Կազմակերպությունը մեծ արդյունք է համարում նշված համայնքներում 2008թ. ապրիլի 1-ից նախակրթարանները վերագործարկելու մասին որոշումների ընդունումը:

18.

Կազմակերպության անվանումը	«Յուլս-98» ՅԿ
Ծրագրի անունը	Ի նպաստ երեխաների արտադպրոցական կրթության
Պայմանագրի համարը	# ARM-AI-G-2007-11
Ծրագրի տեղողությունը	Դեկտեմբեր, 2007թ. – մայիս, 2008թ.
Ծրագրի իրականացման վայրը	ՅՅ, Վայոց շորի մարզ, ք. Վայք
Դրամաշնորհի չափը	2 752 100 դրամ
Կազմակերպության ներդրումը	593 000 դրամ
Ընդհանուր գումարը	3 345 100 դրամ
Էլ. փոստը	arminemsk@yahoo.com
Ծրագրի նպատակը	Բարձրացնել Վայքի մանկապատանեկան ստեղծագործական կենտրոն երեխաների հաճախելու մատչելիությունը, ձեռք բերելով Վայքի ավագանու կողմից 2006թ. հունվարին համայնքային ենթակայության հիմնարկներում հաստատված ծնող-զանձումների ամսական համակարգի վերաբերյալ ընդունված որոշման փոփոխությունը:
Ծրագրի արդյունքը	Վայքի մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնի ամսական ծնող-զանձումների չափի եւ խմբերի տեսակների վերաբերյալ մշակված առաջարկ փաթեթն ընդունվել է Վայքի համայնքի ավագանու կողմից եւ վերանայվել է 2006թ. հունվարին համայնքային ենթակայության հիմնարկներում հաստատված ծնող-զանձումների ամսական համակարգի վերաբերյալ ընդունված որոշումը: Եվ որ ամենակարեւորն է կազմակերպությունը կարողացել է հասնել նրան, որ կիրառվի վերանայված որոշումը: Ընդդիմիվ ծնող-զանձումների ամսական համակարգի բարելավման ՄՍԿ հաճախող երեխաների թիվը ավելացել է եւ այսօր երեխաներն ստանում են բազմակողմանի կրթություն: Բավականին բարձրացել է շահառուների զբաղվածությունը դպրոցից դուրս ժամերին՝ նպաստելով դեռահասների շրջանում փողոցային խուլիգանությունների թվի կտրուկ նվազմանը:

19.

Կազմակերպության անվանումը	«Արքայադուստր Փարվանա» կանանց ՅԿ
Ծրագրի անունը	Կողմնորոշված երիտասարդություն
Պայմանագրի համարը	# ARM-AI-G-2007-13
Ծրագրի տեղողությունը	Դեկտեմբեր, 2007թ. – օգոստոս, 2008թ.
Ծրագրի իրականացման վայրը	ՅՅ, Սյունիքի մարզ, ք. Գորիս
Դրամաշնորհի չափը	3 034 000 դրամ
Կազմակերպության ներդրումը	603 000 դրամ
Ընդհանուր գումարը	3 637 000 դրամ
Էլ. փոստը	princes@freenet.am
Ծրագրի նպատակը	Նպաստել Գորիսի քոլեջների կողմից մասնագիտությունների ընտրության գործընթացներում հանրային մասնակցություն ապահովող մեխանիզմների ընդունմանը եւ կիրառմանը:
Ծրագրի արդյունքը	Ծրագրի իրականացման արդյունքում մշակվել է Գորիսի քոլեջների մասնագիտությունների ընտրության գործում հանրային մասնակցության մեխանիզմ, որը փորձարկվել է Գորիսի տարածաշրջանում: Քոլեջների կողմից նոր ուստարվա նախաշեմին մարկետինգային բազմաբնույթ միջոցներով կազմակերպվել է մասնագիտությունները գովազդելու ուժեղ քարոզարշավ՝ նպաստելով համայնքների դպրոցների աշակերտների քոլեջներում ուսուցանվող մասնագիտությունների մասին իրազեկության մակարդակի բարձրացմանը: Գորիսի տարածաշրջանի հանրությունն այսօր արդեն ակտիվ մասնակցություն է ցուցաբերում Գորիսի

միջին մասնագիտական կրթական հաստատությունների (Գորիսի պրոֆեսոր Երիցյանի անվան պետական գյուղատնտեսական քոլեջ, Գորիսի պետական մանկավարժական քոլեջ) մասնագիտությունների ընտրության գործընթացներին:
 Նշված քոլեջներում 2008-2009 ուստարվա համար այնպիսի բաժիններ են բացվել, որոնք մեծ պահանջարկ են վայելում տարածաշրջանում: Այդպիսի բաժին է Թարգմանչություն եւ գործավարություն բաժինը, որը բացվել է Գորիսի մանկավարժական քոլեջում 2008-2009 ուստարում: Այս տարի բավականին աճել է նաեւ հանրակրթական հաստատությունների այն շրջանավարտների թիվը, որոնք ուսումը շարունակելու համար դիմումներ են ներկայացրել նշված քոլեջներին:

Առողջապահական ոլորտ

20.

Կազմակերպության անվանումը	«Արքայաղուստր Փարվանա» կանանց ՀԿ
Ծրագրի անունը	Անվտանգ մայրություն
Պայմանագրի համարը	# ARM-AI-G-2006-19
Ծրագրի տեւողությունը	Նոյեմբեր, 2006թ. – հունիս, 2007թ.
Ծրագրի իրականացման վայրը	ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Գորիս
Դրամաշնորհի չափը	3 915 800 դրամ
Կազմակերպության ներդրումը	888 000 դրամ
Ընդհանուր գումարը	4 803 800 դրամ
Էլ. փոստը	princes@freenet.am
Ծրագրի նպատակը	Նպաստել «Մարդու վերարտադրողական առողջության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի կիրառմանը Գորիսի հիվանդանոցի ծննդատան կողմից մատուցվող ծառայությունների տրամադրաման ժամանակ:
Ծրագրի արդյունքը	Մշակվել է փաթեթ-առաջարկ Գորիսի ծննդատան կողմից մատուցվող ծառայությունների բարելավման վերաբերյալ, որի ներդրման արդյունքում առկա են զգալի տեղաշարժեր: Ծրագրի արդյունքում պատրաստված փաթեթ-առաջարկը ներառում է Գորիսի ծննդատան կողմից մատուցվող ծառայությունների բարելավմանն ուղղված ուղիներն ու գործողությունները: Ծառայություններից շատերում կատարվել են տեղաշարժեր, որոնք արձանագրվել են դիտարկումների եւ հարցազրույցների ժամանակ: ՀԿ-ն կազմակերպել է քննարկումներ Գորիսի «Ռ. Յոլյանի անվան հիվանդանոց» ՓԲԸ-ի ներկայացուցիչների մասնակցությամբ՝ բնագավառում առկա առաջնային հիմնախնդիրները բացահայտելու համար: Մշակվել է Գորիսի ծննդատան ծառայությունների բարելավման պլան եւ ներկայացվել ՏԻՄ-ին: Նոր պլանը ներառում է նաեւ հոգեբանական ծառայություններ, որը ողջունվել է բուժանձնակազմի կողմից: ՀԿ-ն աշխատանքներ է իրականացրել ծառայությունների վերաբերյալ կանանց իրազեկության բարձրացմանն ուղղված: ՀԿ-ի կողմից պատրաստվել են տեղական հեռուստաընկերությամբ ցուցադրվել են հեռուստահաղորդումներ, տպագրվել են հոդվածներ՝ անվտանգ մայրության վերաբերյալ: Հիմնախնդրի վերաբերյալ հանդիպումներ են կազմակերպվել նաեւ տարածաշրջանի 10 համայնքներում՝ կանանց մասնակցությամբ: Գորիսի հիվանդանոցի տնօրենը շնորհակալություն է հայտնել ՀԿ-ին՝ ծննդատան բաժանմունքի ծառայությունների ներկա վիճակը բարելավելու ուղղությամբ կատարած աշխատանքների համար:

21.

Կազմակերպության անվանումը	«Երիտասարդ սերունդ» ՀԿ
Ծրագրի անունը	Առողջ ապրելակերպ
Պայմանագրի համարը	# ARM-AI-G-2006-09
Ծրագրի տեւողությունը	Նոյեմբեր, 2006թ. - հունիս, 2007թ.
Ծրագրի իրականացման վայրը	ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք. Եղեգնաձոր
Դրամաշնորհի չափը	3 626 400 դրամ
Կազմակերպության ներդրումը	800 000 դրամ
Ընդհանուր գումարը	4 426 400 դրամ
Էլ. փոստը	karin_m@rambler.ru
Ծրագրի նպատակը	Նպաստել Եղեգնաձոր համայնքում «Ծխախոտի իրացման, սպառման եւ օգտագործման սահմանափակումների մասին» ՀՀ օրենքի կիրառմանը՝ Եղեգնաձոր համայնքի ՏԻՄ-ի կողմից հասարակական վայրերում, կրթամշակութային եւ առողջապահական հաստատություններում ծխելը

<i>սահմանափակելու գործընթացի վերահսկմամբ:</i>	
Ծրագրի արդյունքը	
<p>Եղեգնաձոր քաղաքի ՏԻՄ-ի կողմից հաստատվել է «Եղեգնաձոր քաղաքի հասարակական ժամանցի վայրերում, կրթամշակութային եւ առողջապահական հաստատություններում ծխախոտի օգտագործումը սահմանափակելու նպատակով վերահսկողական մեխանիզմների» փաթեթը: Որոշումն ընդունվելուց հետո գործընթացն անմիջապես անցել է կիրառման փուլ, որի շնորհիվ Եղեգնաձոր քաղաքի մշակութային օջախներում, առողջապահական հիմնարկներում եւ հատկապես դպրոցներում գրեթե բացառվել են ծխելու դեպքերը: Եղեգնաձորի 8 սրճարաններից 4-ում կիրառվում է ծխելու սահմանափակումների մասին 77 օրենքը: Քաղաքապետարանի պատերիմ փակցված են ծրագրի ընթացքում տպագրված հակածխախոտային պաստառներ եւ ներսում ծխելու անթույլատրելիությունն ազդարարող պիտակներ: Ծրագրի մյուս թիրախ վայրերում շարունակվում են կիրառվել ծխելու սահմանափակումների վերաբերյալ Եղեգնաձոր քաղաքի ավագանու ընդունած որոշման հիմքում ընկած գործընթացները:</p>	

22.

Կազմակերպության անվանումը	«Կապանի կանանց միաբանություն» ՀԿ
Ծրագրի անունը	Գիտելիք հանուն առողջության
Պայմանագրի համարը	# ARM-AI-G-2006-12
Ծրագրի տեւողությունը	Նոյեմբեր, 2006թ. - հունիս, 2007թ.
Ծրագրի իրականացման վայրը	ՀՀ, Սյունիքի մարզ, Կապանի եւ Մեղրիի տարածաշրջաններ
Դրամաշնորհի չափը	3 876 800 դրամ
Կազմակերպության ներդրումը	806 000 դրամ
Ընդհանուր գումարը	4 682 800 դրամ
Էլ. փոստը	hsusanna@freenet.am
Ծրագրի նպատակը	
Նպաստել թմրանյութերի, ալկոհոլի եւ ՄԻՎ/ԶԻԱՀ-ի առաջնային կանխարգելմանը՝ Կապանի, Քաջարանի, Ագարակի, Մեղրու դպրոցներում ներդնելով արդյունավետ մեխանիզմներ:	
Ծրագրի արդյունքը	
<p>Կապանի, Քաջարանի, Ագարակի, Մեղրու 14 դպրոցների 8-10-րդ դասարանների 1350 աշակերտի համար կազմակերպվել են սեմինարներ, որոնց արդյունքում աշակերտները ձեռք են բերել ՄԻՎ/ԶԻԱՀ-ի, թմրանյութերի, ալկոհոլի վնասակարության վերաբերյալ գիտելիքներ: Կազմակերպությունը Կրթության ազգային ինստիտուտի Կապանի մասնաճյուղի հետ համատեղ պատրաստել է գործողությունների պլան, որը ներառում է Կապանի, Քաջարանի, Ագարակի, Մեղրու դպրոցներում թմրանյութերի, ալկոհոլի եւ ՄԻՎ/ԶԻԱՀ-ի առաջնային կանխարգելմանն ուղղված գործողություններ՝ 2007-2008թթ իրականացնելու համար: Այդ նախագծի համաձայն՝ 2007-2008թթ ուստարվա ընթացքում վերոնշյալ քաղաքների դպրոցներում ստեղծվել են տեղեկատվական անկյուններ, որտեղ աշակերտները կարողանում են ծանոթանալ թմրանյութերի, ալկոհոլի եւ ՄԻՎ/ԶԻԱՀ-ի առաջնային կանխարգելման վերաբերյալ նյութերի հետ:</p>	

23.

Կազմակերպության անվանումը	«Երիտասարդ սերունդ» ՀԿ
Ծրագրի անունը	Հանուն մանուկների առողջության
Պայմանագրի համարը	# ARM-AI-G-2008-03
Ծրագրի տեւողությունը	Հունիս, 2008թ. – հունվար, 2009թ.
Ծրագրի իրականացման վայրը	ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք. Եղեգնաձոր
Դրամաշնորհի չափը	2 963 300 դրամ
Կազմակերպության ներդրումը	903 000 դրամ
Ընդհանուր գումարը	3 866 300 դրամ
Էլ. փոստը	karin_m@rambler.ru
Ծրագրի նպատակը	

Նպաստել էղեգնածոր քաղաքի պոլիկլինիկայի կողմից նախադպրոցական տարիքի եւ տարրական դասարանների երեխաներին ակնաբուժական ծառայություն մատուցելու գործընթացին:

Ծրագրի արդյունքը

Ծրագրի արդյունքում իրագեկնան դասընթացների, կլոր սեղան-քննարկման կազմակերպմամբ, տեղեկատվական նյութերի տարածմամբ էղեգնածոր քաղաքի 3 նախադպրոցական հաստատությունների եւ 3 տարրական դպրոցների ծնողները ստացել են երեխաների տեսողության շեղումների վաղ հայտնաբերման եւ կանխարգելման մասին գիտելիքներ եւ տեղեկատվություն՝ պետպատվերի շրջանակներում երեխաների տեսողության ամենամյա անվճար ստուգումներ անցնելու իրենց իրավունքի մասին: Ծրագրի փորձագիտական խմբի կողմից մշակվել է էղեգնածոր քաղաքի նախադպրոցական եւ վաղ դպրոցական տարիքի երեխաների ամենամյա անվճար ակնաբուժական ստուգում անցկացնելու վերաբերյալ մեխանիզմների վերահսկողական փաթեթ, ըստ որի Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության պետական առողջապահական գործակալության (ՊԱԿ) Վայոց Ձորի մարզային կենտրոնը պետք է իրականացնի պետպատվերի շրջանակներում ակնաբուժական ծառայության վերահսկողություն: Փաթեթը ներկայացվել է ՀՀ ԱՆ ՊԱԿ-ի Վայոց Ձորի մարզային կենտրոնին, որն էլ որոշում է կայացրել պետպատվերի շրջանակներում ակնաբուժական ծառայության վերահսկողական լրացուցիչ միջոցառումներ կազմակերպելու մասին: Ծրագրի շրջանակներում էղեգնածոր քաղաքի 387 երեխաներ անցել են անվճար զննում: 87 երեխայի մոտ այդ ստուգումների ընթացքում հայտնաբերվել են տեսողության շեղումներ, որից 18-ը ուղարկվել է Երեւան՝ մասնագիտական հիվանդանոց:

24.

Կազմակերպության անվանումը	«Գորիսի տիկնանց օջախ» ՀԿ
Ծրագրի անունը	Դեպի առողջ մայրություն
Պայմանագրի համարը	# ARM-AI-G-2006-18
Ծրագրի տեւողությունը	Նոյեմբեր, 2006թ. – հուլիս, 2007թ.
Ծրագրի իրականացման վայրը	ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Գորիս եւ հարակից 4 գյուղական համայնքներ
Դրամաշնորհի չափը	3 781 500 դրամ
Կազմակերպության ներդրումը	1 142 000 դրամ
Ընդհանուր գումարը	4 923 500 դրամ
Էլ. փոստը	gtogor@mail.ru

Ծրագրի նպատակը

Նպաստել Գորիսի եւ տարածաշրջանի 4 գյուղերի 15 տարեկան աղջիկներին վահանաձեւ գեղձի հորմոնալ հետազոտության եւ ախտորոշման անվճար ծառայություն տրամադրելու որոշման ընդունմանը ՀՀ առողջապահության նախարարության կողմից:

Ծրագրի արդյունքը

Գորիսի եւ տարածաշրջանի 4 գյուղերի թվով 140 15 տարեկան աղջիկներ ծրագրի համագործակից Ռ. Յուլյանի անվան հիվանդանոցում վահանագեղձի հորմոնալ հետազոտություն են անցել: Յուրաքանչյուր 3-րդ աղջկա մոտ հայտնաբերվել է վահանագեղձի հորմոնալ շեղում: Խնդրին տրված մեծ հնչեղության եւ ՀՀ առողջապահության նախարարին հղած ուղերձին ի պատասխան Գորիս է ժամանել էնդոկրինոլոգներով համալրված հանձնախումբ՝ խնդրին տեղում ծանոթանալու նպատակով: Առավել մեծ հորմոնալ շեղում ունեցող 16 աղջիկներ ՀՀ առողջապահության նախարարության համաձայնությամբ եւ Սյունիքի մարզպետարանի ուղեգրերով պետպատվերի շրջանակներում հետազոտվել են Երեւանի «Արաբկիր» բժշկական կենտրոնում: ՀՀ առողջապահության նախարարի ուղարկած նամակ-փաթեթում նախարարը նշել է 15 տարեկան աղջիկների նկատմամբ տարվող քաղաքականության եւ խնդրի բարելավման ուղղությամբ ձեռնարկվող քայլերի մասին: Գորիսում խնդրին մեծ ուշադրություն է սեւեռվել: Օրինակ՝ Գորիսի պետական համալսարանի կենսաբանության ֆակուլտետի 2 ուսանողուհիներ դիպլոմային աշխատանքի թեմա են ընտրել ՀԿ-ի հետազոտությունը, իսկ ծրագրի մասնագիտական խմբի ղեկավարը «Вестник Эндокринологии» ամսագրում տպագրել է իր առաջին գիտական աշխատանքը:

25.

Կազմակերպության անվանումը	«Լեռնեցիների առողջ սերունդ» ՀԿ
---------------------------	--------------------------------

Ծրագրի անունը	Թողնենք ծխելը
Պայմանագրի համարը	# ARM-AI-G-2006-14
Ծրագրի տեւողությունը	Նոյեմբեր, 2006թ. - հուլիս, 2007թ.
Ծրագրի իրականացման վայրը	ՀՀ, Սյունիքի մարզի, Գորիս եւ Սիսիան քաղաքներ
Դրամաշնորհի չափը	6 484 200 դրամ
Կազմակերպության ներդրումը	1 239 000 դրամ
Ընդհանուր գումարը	7 723 200 դրամ
Էլ. փոստը	aramamaryan@yandex.ru
Ծրագրի նպատակը	Նպաստել «Ծխախոտի իրացման, սպառման եւ օգտագործման սահմանափակումների մասին» ՀՀ օրենքի կիրառմանը՝ խթանելով Գորիս եւ Սիսիան համայնքների հասարակական վայրերում ծխելու համար առանձնացված գոտիների ստեղծման եւ կիրառման գործընթացը:
Ծրագրի արդյունքը	<p>Ծրագրի շահառուները Գորիս եւ Սիսիան համայնքների բնակիչներն էին: Ծրագրի ընթացքում Գորիս եւ Սիսիան քաղաքների ավագանիների կողմից ծխելու համար առանձնացված գոտիներ ստեղծելու վերաբերյալ ընդունվել են որոշումներ: Կազմակերպության կողմից մշակված առաջարկ-փաթեթը ներառել է հստակ մեխանիզմ՝ ծխելու առանձնացված գոտիների ստեղծման եւ կիրառման մասին: Գորիսի եւ Սիսիանի ավագանիների որոշմամբ ստեղծվել են հանձնաժողովներ՝ առանձնացված գոտիներում պարբերական վերահսկողություն իրականացնելու համար:</p> <p>Ծրագրի ընթացքում առանձնացված գոտիներ են ստեղծվել Գորիսի եւ Սիսիանի քաղաքապետարաններում, Գորիսի մի շարք հանրակրթական հաստատություններում, Սիսիանի թիվ 2, 3 միջնակարգ դպրոցներում: Ծրագրի ընթացքում ՀՀ-ի աշխատակազմը հասել է նրան, որ տեղական իշխանություններն ընդունել են այդ նախաձեռնության ընթացքում կազմված առաջարկ-փաթեթը, որն էլ հավանության է արժանացել տեղական ինքնակառավարման մարմինների կողմից:</p> <p>Ծրագրի ընթացքում կազմակերպությունը՝ սերտ համագործակցելով «Գորիսի սերունդ» ՀՀ-ի եւ Գորիսի «Լաստ» հեռուստաընկերության հետ իրականացրել է հակածխախոտային մի շարք ակցիաներ եւ միջոցառումներ Գորիս եւ Սիսիան քաղաքներում:</p> <p>Ծրագրի ավարտից հետո ծխախոտի առանձնացված գոտիներ են ստեղծվել Գորիսի պետական համալսարանում, Գորիս եւ Սիսիան քաղաքների 7 սրճարաններում, 10 հիմնարկ-ձեռնարկություններում, որոնք դրականորեն են փոխել շահառուների կյանքը:</p> <p>Ծրագրի ավարտից հետո, հակածխախոտային միջազգային օրը՝ մայիսի 31-ին, կազմակերպությունը Գորիսի եւ Սիսիանի համայնքներում երիտասարդների մասնակցությամբ իրականացրել է լայնածավալ հակածխախոտային ակցիա:</p> <p>«Թողնենք ծխելը» ծրագրի արդյունքում «Լեռնեցիների առողջ սերունդ» ՀՀ-ն դարձել է «Հայաստանն առանց ծխախոտի» դաշինքի անդամ, եւ պարբերաբար մասնակցում է դաշինքի կողմից կազմակերպվող միստերին: Դաշինքը միավորում է 28 հասարակական կազմակերպությունների:</p>

26.

Կազմակերպության անվանումը	«Սյունյաց նախադպրոցականներ» ՀՀ
Ծրագրի անունը	Պաշտպանված իրավունք
Պայմանագրի համարը	# ARM-AI-G-2007-05
Ծրագրի տեւողությունը	Փետրվար – օգոստոս, 2007թ.
Ծրագրի իրականացման վայրը	ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Գորիս եւ հարակից գյուղեր
Դրամաշնորհի չափը	2 486 900 դրամ
Կազմակերպության ներդրումը	499 000 դրամ
Ընդհանուր գումարը	2 985 900 դրամ
Էլ. փոստը	syunax@mail.ru
Ծրագրի նպատակը	Նպաստել «Բնակչության բժշկական օգնության եւ սպասարկման մասին» ՀՀ օրենքի կիրառմանը՝ Գորիս եւ հարակից Քարահունջ, Խնձորեսկ, Տեղ համայնքների նախադպրոցական հաստատությունների աշխատակիցների պարտադիր բժշկական հետազոտության իրականացման գործընթացի ֆինանսավորման մասով:
Ծրագրի արդյունքը	Ծրագրի շահառուները Գորիսի եւ հարակից Քարահունջ, Խնձորեսկ, Տեղ համայնքների նախադպրոցական հաստատությունների աշխատակիցներն էին: Կազմակերպությունը Գորիսի եւ հարակից 3 համայնքների ՏԻՄ-երին ներկայացրել է առաջարկ-փաթեթ՝ նախադպրոցական հաստատությունների աշխատակիցների պարտադիր բժշկական ստուգման մասին: Նախաձեռնության արդյունքում ընդունվել են որոշումներ, ըստ որի նախակրթարանների աշխատակիցները տարին երկու

անգամ պետք է անցնեն պարտադիր բժշկական հետազոտություն, որի համար ֆինանսական միջոցներ կտրամադրեն համայնքապետարանները: Գորիս քաղաքի եւ հարակից Քարահունջ, Խնձորեսկ եւ Տեղ համայնքների համայնքապետարանները 2007թ. համայնքի բյուջեում նախատեսել են համապատասխան հոդվածներ: Ծրագրի ընթացքում կազմակերպության կողմից անց են կացվել մի շարք իրազեկման միջոցառումներ նախակրթարանների, աշխատակիցների, ծնողների համար: 2007թ. աշնանը Գորիս քաղաքի 7 նախակրթարանների եւ հարակից 3 համայնքների նախակրթարանների 98 աշխատակիցներից 70-ն անցել են բժշկական ստուգում: Կազմակերպությունը ծրագրի ավարտից հետո էլ հետամուտ է եղել ընդունված որոշումների կիրառմանը: Այսօր ՏԻՄ-երը շարունակում են իրենց համայնքների տարեկան բյուջեներում կարելու համարել եւ առանձին հոդվածով ֆինանսական գումարներ հատկացնել նախակրթարանների աշխատակիցների բժշկական ստուգման համար:

27.

Կազմակերպության անվանումը	«Մարտիրոս» բարեգործական հիմնադրամ
Ծրագրի անունը	Ղեկավարող հիվանդի եւ բժշկի խորհրդատու - գործընկեր
Պայմանագրի համարը	# ARM-AI-G-2008-04
Ծրագրի տեւողությունը	Յուլիս - դեկտեմբեր, 2008թ.
Ծրագրի իրականացման վայրը	ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք. Վայք եւ ք. Եղեգնաձոր
Դրամաշնորհի չափը	2 963 000 դրամ
Կազմակերպության ներդրումը	718 500 դրամ
Ընդհանուր գումարը	3 681 500 դրամ
Էլ. փոստը	nune_petrosyan@yahoo.com
Ծրագրի նպատակը	Նպաստել Վայք համայնքում ղեկավարող հիվանդի գործունեության արդյունավետության բարձրացմանը՝ ներդրելով վերահսկման նոր մեխանիզմ:
Ծրագրի արդյունքը	Ծրագրի ամենամեծ ձեռքբերումը այն է, որ Վայոց Ձորի մարզի Վայք եւ Եղեգնաձոր քաղաքներում այսօր ղեկավարող հիվանդությունը համապատասխանում է ՀՀ առողջապահության նախարարության 2000թ.-ի փետրվարի 24-ի 77 հրամանով սահմանված «Հայաստանի Հանրապետության պատշաճ ղեկավարող հիվանդի գործունեության պահանջներին», այսինքն՝ ղեկերի պատրաստումը, պահպանումը, փաթեթավորումը, որակի հսկումը, վաճառքն իրականացվում են միմյանից ղեկավարող հիվանդներին: Ղեկավարող հիվանդներում չեն վաճառում ժամկետանց եւ ՀՀ-ում չգրանցված դեղեր եւ այլն: Ծրագրի շրջանակներում տպագրվել եւ շահառուների շրջանում տարածվել է բրոշյուր, որտեղ տրված է ՀՀ-ում առանց ղեկատմանի բաց թողնվող դեղերի ցանկը: Գրքույկը դարձել է ղեկատմանի աշխատակիցների եւ բժիշկների ուղեցույցը՝ ղեկատման աշխատակիցները այդ ցանկում չընդգրկված դեղամիջոցների համար համախորհրդային պահանջում են ղեկատման, իսկ բժիշկները ցանկում չընդգրկված դեղամիջոցների համար անպայման դուրս են գրում ղեկատման: Կազմակերպությունը կարողացել է հասնել նրան, որ ՀՀ Վայոց Ձորի մարզապետարանի սոցիալական հարցերի եւ առողջապահության վարչության պետը, «Վայքի բուժական միավորում» եւ «Եղեգնաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ների տնօրենները գրավոր հանձնարարականներ տան «ՀՀ-ում առանց ղեկատմանի բաց թողնվող դեղերի ցանկում» չընդգրկված դեղամիջոցների դուրս գրման համար անպայման այցելումներին ղեկատման տան: Կազմակերպության կողմից պատշաճ ղեկատման հիմնական գործունեության դրույթների վերաբերյալ իրազեկման միջոցառումներ են իրականացվել նաեւ թիրախ համայնքների բնակիչների շրջանում: Այսօր բնակիչներն իրենք են պահանջում ղեկատմանը բժշկից եւ բավականաչափ նվազել են փոքր բնակավայրերին բնորոշ՝ առանց ղեկատմանի ղեկատման աշխատակցին համոզելու տարբերակով, առանց ղեկատմանի արգելվող դեղամիջոց խնդրելու դեպքերը: Ձնայած, շահագրգիռ կողմերի կողմից դրսևորվող պատրաստակամության՝ մարզապետարանի սոցիալական հարցերի եւ առողջապահության վարչության կողմից պարբերաբար իրականացվում է Վայքի եւ Եղեգնաձորի ղեկատմանի վերահսկում:

Մշակույթի եւ սպորտի ոլորտ

28.

Կազմակերպության անվանումը	«Գորիսի ստեղծագործողներ» ՀԿ
Ծրագրի անունը	Մշակութային առաջընթաց
Պայմանագրի համարը	# ARM-AI-G-2006-21
Ծրագրի տեւողությունը	Նոյեմբեր, 2006թ. – հունիս, 2007թ.

Ծրագրի իրականացման վայրը	ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Գորիս
Դրամաշնորհի չափը	3 971 000 դրամ
Կազմակերպության ներդրումը	809 000 դրամ
Ընդհանուր գումարը	4 780 000 դրամ
Էլ. փոստը	Jirmar28@freenet.am
Ծրագրի նպատակը	Նպաստել Գորիսի ՏԻՄ-ի կողմից համայնքում կերպարվեստի, երաժշտության և գրականության ոլորտների ստեղծագործողների աշխատանքների ներկայացումն ապահովող մշակութային ամենամյա ծրագրի /ՄԱԾ/ ընդունմանը և կիրառմանը:
Ծրագրի արդյունքը	2007 թվականի հունիսի վերջին Գորիսի ավագանին ընդունել է «Մշակութային ամենամյա ծրագիրը», որտեղ ներառված է համայնքի համար արդեն ավանդական համարվող և նոր առաջարկվող մշակութային միջոցառումների ցանկը և անվանումը, իրականացման օրը, բյուջեն, ֆինանսավորման աղբյուրը (համայնքային բյուջե, բարեգործություն), իրականացման համար պատասխանատու կազմակերպությունների և անհատների անունները, անցկացման վայրը և կարգը, մասնակիցների թիվն ու ցանկը և այլն: Այնուհետև ստեղծվել է այդ ծրագրի իրականացումը համակարգող հանձնաժողով, որն այդ ծրագիրը հիմք ընդունելով՝ մշակել է մեկ տարվա գործողությունների պլան: Գործողությունների պլանում նշված են միջոցառումների անցկացման ժամանակացույցը, պատասխանատու անձը, պահանջվող անհրաժեշտ նյութերը: Հանձնաժողովի կազմում ընդգրկվել է նաև «Գորիսի ստեղծագործողներ» ՀԿ-ի մեկ անդամ, որի միջոցով կազմակերպությունը նպաստում է նախատեսված միջոցառումների արդյունավետ իրականացմանը: Գորիսի քաղաքապետարանի կրթության, մշակույթի, սպորտի բաժինն այսօր առաջնորդվում է «Մշակութային ամենամյա ծրագրով», որի շնորհիվ իրականացվել և շարունակվում են իրականացվել համաքաղաքային միջոցառումներ՝ գորիսեցի ստեղծագործողների մեծարման երեկոներ, ցուցահանդեսներ և այլն: Ծրագրի ավարտից հետո էլ կազմակերպությունը շարունակում է հետևողականորեն վերահսկել և աջակցել «Մշակութային ամենամյա ծրագրի» իրականացման աշխատանքներին:

29.

Կազմակերպության անվանումը	«Գորիս- Բուներանգ» ՀԿ
Ծրագրի անունը	Կողմնորոշում
Պայմանագրի համարը	# ARM-AI-G-2008-06
Ծրագրի տեսողությունը	Հուլիս-դեկտեմբեր, 2008թ.
Ծրագրի իրականացման վայրը	ՀՀ, Սյունիքի մարզ
Դրամաշնորհի չափը	2 955 000 դրամ
Կազմակերպության ներդրումը	729 000 դրամ
Ընդհանուր գումարը	3 684 000 դրամ
Էլ. փոստը	goris_boomerang@rambler.ru
Ծրագրի նպատակը	Նպաստել Սյունիքի մարզի 5 քաղաքային համայնքների (Կապան, Սիսիան, Մեղրի, Քաջարան, Ագարակ) երաժշտական և արվեստի 8 դպրոցներում ազգային նվագարանների դասարանների համար անվճար ուսուցման հնարավորությունների ապահովմանը՝ ձեռք բերելով ՏԻՄ-երի կողմից համապատասխան որոշումներ և դրանց համապատասխան 2009թ. բյուջեում ֆինանսական հատկացումներ:
Ծրագրի արդյունքը	Ծրագրի մեկնարկին կազմակերպությունն այցելություններ է կատարել թիրախ համայնքների մասնագիտական դպրոցներ՝ հիմնախնդրի վերաբերյալ տեղեկատվություն հավաքագրելու և պատրաստվելիք առաջարկությունների փաթեթում ներառելու համար: Կազմակերպվել են կլոր սեղաններ՝ մասնագիտական դպրոցներում ազգային նվագարանների ուսուցման կարիքներն ու խոչընդոտները բացահայտելու համար, պատրաստվել և հեռարձակվել են հեռուստահաղորդումներ, տպագրվել և շահառուների շրջանում տարածվել են քարոզչական նյութեր՝ խնդրի վերաբերյալ հանրությանն իրազեկելու նպատակով: Այս կերպ կազմակերպությունը կարողացել է ձեռավորել հանրային կարծիք՝ մասնագիտական դպրոցներում ազգային նվագարանների բաժինների գործունեության վերաբերյալ: «Գորիս-Բուներանգը» քննարկումներում ներգրավելով թիրախ համայնքների ՏԻՄ-երի մշակույթի և ֆինանսական բաժինների աշխատակիցներին, մասնագիտական դպրոցների դասատուներին պատրաստել է ՏԻՄ-երին ներկայացվելիք փեթեթ-առաջարկ՝ մասնագիտական դպրոցների ազգային նվագարանների բաժիններում սովորողների ուսուցումն անվճար կազմակերպելու վերաբերյալ: Փաթեթ-առաջարկը ներկայացվել է նորընտիր ՏԻՄ-երին (2008թ. հոկտեմբերի 12-ին ՀՀ-ում տեղի է ունեցել ՏԻՄ ընտրություններ) ավագանու հերթական նիստերում այն առաջ քաշելու և համապատասխան որոշում կայացնելու նպատակով: Որոշում կայացնողների՝ ՏԻՄ-երի վրա ազդեցությունն էլ ավելի ուժեղացնելու և խնդրի վերաբերյալ դրական որոշում կայացնելու նպատակով ծրագրի շրջանակներում տեղերում կազմակերպվել են համերգ-ակցիաներ: Սիսիանի և Ագարակի քաղաքապետարանները մեծ աջակցություն

են ցուցաբերել ակցիայի կազմակերպման գործում: Ակցիաների ժամանակ շահառուների հետ անմիջական հանդիպումները եւ ծավալված երկխոսություններն ավելի են ուժեղացրել ակցիաների ազդեցությունը՝ որոշում կայացնողների վրա: Ծրագրում ներգրավված 5 համայնքներից 3-ի՝ Սիսիանի, Ագարակի, Քաջարանի ՏԻՄ-երը ընդունել են համապատասխան որոշումներ՝ մասնագիտական դպրոցներում ազգային նվազարանների դասարաններում անվճար ուսուցման վերաբերյալ, փաթեթը ներկայացված է Կապանի ՏԻՄ-ին. որոշում դեռեւս չի ընդունվել: Սեդրու ՏԻՄ-ը հրաժարվել է քննարկել ներկայացված փաթեթը, հիմնավորելով, որ որոշման ընդունման դեպքում հնարավոր է կառավարության կողմից տրվող աջակցությունը դադարեցվի:

30.

Կազմակերպության անվանումը	«Շոտոկան» կարատեի ֆեդերացիա 74
Ծրագրի անունը	Առողջ ապրելակերպ
Պայմանագրի համարը	# ARM-AI-G-2006-15
Ծրագրի տեւողությունը	Նոյեմբեր, 2006թ. – օգոստոս, 2007թ.
Ծրագրի իրականացման վայրը	77, Սյունիքի մարզ, ք. Գորիս
Դրամաշնորհի չափը	3 919 000 դրամ
Կազմակերպության ներդրումը	880 000 դրամ
Ընդհանուր գումարը	4 799 000 դրամ
Էլ. փոստը	gorishealth@yahoo.com
Ծրագրի նպատակը	Նպաստել Գորիսի համայնքում սպորտի եւ ֆիզկուլտուրայի մասսայականացման գործընթացին՝ ձեռք բերելով Գորիսի ավագանու որոշում՝ տարեկան սպորտային ծրագրեր իրականացնելու վերաբերյալ:
Ծրագրի արդյունքը	Գորիսի ավագանու կողմից ընդունվել է ծրագրով նախատեսված «Տարեկան սպորտային ծրագիրը», որում ներառված են հիմնականում 3 սպորտաձևեր՝ ֆուտբոլ, բասկետբոլ եւ վոլեյբոլ: Այդ սպորտաձևերով համայնքի մրցաշարերին մասնակցելու համար ծրագրի թիրախ կազմակերպություններում ստեղծվել են 3-ական խմբեր, որոնք անցկացնում են պարբերական պարապմունքներ: Կազմակերպությունը աշխատանքներ է սկսել նաեւ թաղամասերի հետ՝ սպորտային կյանքն ակտիվացնելու նպատակով: Ծրագրի ընթացքում անցկացված «Մինի ֆուտբոլ» ակցիա-մրցաշարը մեծ ոգեւորություն է առաջացրել համայնքում: Ծրագրի շնորհիվ քաղաքապետարանի եւ դպրոցների համատեղ ջանքերով անցկացվել են ներդպրոցական եւ միջդպրոցական մրցաշարեր բասկետբոլ սպորտաձևից: Դպրոցներում բարձրացել է ֆիզկուլտուրայի դասավանդման որակը: Այսօր Գորիսի համայնքի զարգացման ծրագրերում մշտապես ներառվում է սպորտային միջոցառումների կազմակերպման մասին հոդված, ըստ որի էլ Գորիսում պարբերաբար կազմակերպվում են միջդպրոցական մրցաշարեր՝ վոլեյբոլ, ֆուտբոլ եւ այլ մարզաձևերից:

31.

Կազմակերպության անվանումը	«Գորիսի ստեղծագործողներ» 74
Ծրագրի անունը	Մշակութային օջախների զարգացում
Պայմանագրի համարը	# ARM-AI-G-2007-12
Ծրագրի տեւողությունը	Դեկտեմբեր, 2007թ. – հունիս, 2008թ.
Ծրագրի իրականացման վայրը	77, Սյունիքի մարզ, Գորիսի տարածաշրջան
Դրամաշնորհի չափը	2 898 500 դրամ
Կազմակերպության ներդրումը	590 000 դրամ
Ընդհանուր գումարը	3 488 500 դրամ

Էլ. փոստը	Jirmar28@freenet.am
Ծրագրի նպատակը	Նպաստել Գորիսի տարածաշրջանի Հալիծոր, Շինուհայր, Ակներ, Վերիչեն, Խնձորեսկ, Տեղ, Կորնիծոր գյուղական համայնքներում ավանդական արվեստի ճյուղերի ուսուցման խմբակների ստեղծմանը՝ ձեռք բերելով համայնքների ՏԻՄ-երի համապատասխան որոշումներ:
Ծրագրի արդյունքը	<p>Ծրագիրն իրականացվել է Գորիսի տարածաշրջանի Հալիծոր, Շինուհայր, Ակներ, Վերիչեն, Խնձորեսկ, Տեղ, Կորնիծոր համայնքներում: Ծրագրի շրջանակներում տեղերում կազմակերպվել են հանդիպումներ, կլոր սեղաններ, համերգներ՝ նպաստելով ծրագրում ներառված խնդիրների (հնարավորություն ստեղծել դպրոցականների համար ստանալու ուսուցում, որը կնպաստի տվյալ համայնքում բնակվող ստեղծագործող պատանիներին եւ աղջիկներին առավել հմտանալու, մասնագիտանալու իրենց սիրած ու նախընտրած արվեստում) լուծմանը եւ նպատակների իրականացման գործընթացում ՏԻՄ-երի ներգրավմանը:</p> <p>Արդյունքում վերոնշյալ յոթ համայնքներում ընդունվել են որոշումներ՝ 2009թ.-ից իրենց համայնքներում մշակութային ուսուցողական խմբակներ ստեղծելու մասին: Քանի որ համայնքների 2008թ.-ի բյուջեներն արդեն հաստատված էին, ըստ այդ որոշումների 2009-ից Հալիծորում կգործեն դաշնամուրի եւ դիլի, Շինուհայր համայնքում՝ նկարչության եւ դաշնամուրի, Ակներում՝ ասմունքի եւ դաշնամուրի, Վերիչենում՝ նկարչության եւ պարի, Խնձորեսկում՝ կերպարվեստի, դաշնամուրի եւ պարի, Տեղում՝ նկարչության եւ պարի, Կորնիծորում ասեղնագործության ուսուցողական խմբակներ: Ծրագիրն անուղղակիորեն նպաստել է համայնքներում մշակութային կյանքի ակտիվացմանը՝ համայնքներում կազմակերպվել են համայնքնային միջոցառումներ: Խնձորեսկում կայացած հանդիպումներից մեկում դպրոցական մի խումբ երեխաներ իրենց հետ բերել էին նվագարաններ եւ փոքրիկ համերգ էին կազմակերպել: Ինքնուս եւ անվարժ «Երաժիշտները» այդ կերպ մշակութային ուսուցողական խմբակներ ստեղծելու պահանջ-հայտ ներկայացրին համայնքին: Այսօր համայնքների զարգացման ծրագրերում երեխաների մշակութային ուսուցման ապահովումը համարվում է օրախնդիր եւ առաջնահերթ:</p>

Սոցիալական ոլորտ

32.

Կազմակերպության անվանումը	«Միջազգային փորձի ուսումնասիրության գիտական կենտրոն» ՀԿ
Ծրագրի անունը	Աշխատողների շահերի պաշտպանություն
Պայմանագրի համարը	# ARM-AI-G-2007-04
Ծրագրի տեւողությունը	Փետրվար – հուլիս, 2007թ.
Ծրագրի իրականացման վայրը	ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Միսիան
Դրամաշնորհի չափը	2 496 970 դրամ
Կազմակերպության ներդրումը	503 000 դրամ
Ընդհանուր գումարը	2 999 970 դրամ
Էլ. փոստը	ies_center@mail.ru
Ծրագրի նպատակը	Նպաստել Միսիան քաղաքի առեւտրի եւ սննդի սպասարկման ոլորտի վարձու աշխատողների աշխատաժամանակի եւ հանգստի ու արձակուրդի իրավունքի վերաբերյալ նորմերի կիրառմանը:
Ծրագրի արդյունքը	2007թ. վերջին աշխատաժամանակի հետ կապված անօրինականության ենթարկված աշխատողների թիվը, ըստ կազմակերպության կողմից կատարված հարցումների, նվազել է 70%-ով: Ծրագրի յուրաքանչյուր ամսում Միսիանի Աշխատանքի պետական տեսչության կողմից կատարվել են ստուգայցեր, որոնց արդյունքում ամեն ամիս՝ նախորդի համեմատությամբ, ավելացել է օրինապահ գործատուների թիվը: 55 գործատուներից 40-ը կատարում են օրենքի պահանջները: Ժամանակին են վճարում աշխատողների աշխատավարձերը, արտաժամյա աշխատանքի համար վճարում են հավելյալ, պարտադիր տրամադրում են աշխատողին հասանելի արձակուրդը եւ այլն: Ծրագրի ավարտից հետո էլ Աշխատանքի պետական տեսչության կողմից ստուգայցերը կազմակերպվում են պարբերաբար եւ եթե ծրագրի իրականացման առաջին ամիսներին գործատուները դժկամությամբ էին վերաբերում այդ ստուգայցերին, ապա այսօր դա համարում են պարտադիր: Ծրագրի արդյունքում կազմակերպության կողմից հետազոտություն է իրականացվել ՀՀ Սյունիքի մարզի Միսիան քաղաքի առեւտրի եւ սննդի

սպասարկման ոլորտում՝ պարզելու Սիսիան քաղաքի առեւտրի եւ սննդի սպասարկման ոլորտներում ներգրավված վարձու աշխատողների աշխատաժամանակին եւ հանգստի իրավունքին առնչվող խնդիրները, հստակեցնելու վարձու աշխատողների իրազեկության աստիճանը՝ ՀՀ աշխատանքային օրենսդրության համապատասխան պահանջների եւ երաշխիքների վերաբերյալ, պարզելու նաեւ շահերի ունեւորման պատկերը եւ այդ ոլորտների աշխատողների պատրաստակամությունը՝ ինքնուրույնաբար կամ միասնաբար պայքարելու իրենց իսկ շահերի պաշտպանության համար: Հետազոտությունը բրոշյուրի տեսքով տպագրվել է եւ բաժանվել է ծրագրի շահառուների շրջանում: Այսօր Սիսիան համայնքի անդամները քաջ գիտակցում են, որ ունեն աշխատանքի, աշխատանքի ազատ ընտրության, արդարացի եւ նպաստավոր աշխատանքային պայմանների եւ գործազրկությունից պաշտպանվելու իրավունք:

33.

Կազմակերպության անվանումը	«Սոցիալ-հոգեբանական եւ վիճակագրական հետազոտությունների կենտրոն» ՀԿ
Ծրագրի անունը	Ես մենակ չեմ
Պայմանագրի համարը	# ARM-AI-G-2006-08
Ծրագրի տեւողությունը	Նոյեմբեր, 2006թ. - հուլիս, 2007թ.
Ծրագրի իրականացման վայրը	ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք. Եղեգնաձոր
Դրամաշնորհի չափը	3 749 000 դրամ
Կազմակերպության ներդրումը	791 500 դրամ
Ընդհանուր գումարը	4 540 500 դրամ
Էլ. փոստը	shvhkentron@yahoo.com
Ծրագրի նպատակը	ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով նպաստել Եղեգնաձոր քաղաքի քաղաքապետարանի, մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնի, մշակույթի տան, երիտասարդական կենտրոնի, թիվ 3 միջնակարգ դպրոցի, նկարչական դպրոցի, երաժշտական դպրոցի շենքերի, 3 խանութների մատչելիությանը հաշմանդամների համար:
Ծրագրի արդյունքը	Նախաձեռնության շահառուները Եղեգնաձոր քաղաքի 18 սայլակավոր հաշմանդամներն ու, առահասարակ, սահմանափակ հնարավորություններով մարդիկ էին: Ծրագրի արդյունքում ստեղծվել են բարենպաստ մեխանիզմներ հաշմանդամների հիմնախնդիրների լուծման համար, ինչպես օրինակ, այսօր գործում է նրանց հիմնախնդիրներով զբաղվող հանձնախումբ, որը պարբերաբար հանդիպումներ է ունենում ՏԻՄ-ի եւ մարզպետարանի աշխատակիցների հետ, ներկայացնում առաջարկություններ: Ծրագրով նախատեսված դեպի քաղաքապետարան երթի ժամանակ, որին մասնակցում էին սայլակավոր հաշմանդամներ, թեքահարթակների կառուցման վերաբերյալ ելակետային հուշագիր է ստորագրվել քաղաքապետի եւ Եղեգնաձորի հաշմանդամների ակտիվ խմբի միջեւ: Եղեգնաձոր քաղաքի ճարտարապետի կողմից վերանայվել են ծրագրի թիրախ 9 շինությունների նախագծերը եւ հաստատվել թեքահարթակների ներառմամբ: Ծրագրի շրջանակներում սայլակավոր հաշմանդամների մասնակցությամբ միջոցառում է կազմակերպվել, որի մասին կազմակերպությունը ֆիլմ է նկարահանել եւ ցուցադրել հեռուստաալիքով:

34.

Կազմակերպության անվանումը	«Գորիսի քաղաքացիական կրթության կենտրոն» ՀԿ
Ծրագրի անունը	Օրենքի գերակայություն
Պայմանագրի համարը	# ARM-AI-G-2006-16
Ծրագրի տեւողությունը	Նոյեմբեր, 2006թ. - օգոստոս, 2007թ.
Ծրագրի իրականացման վայրը	ՀՀ, Սյունիքի մարզ, Գորիսի եւ Սիսիանի տարածաշրջաններ
Դրամաշնորհի չափը	3 535 000 դրամ
Կազմակերպության ներդրումը	1 020 000 դրամ
Ընդհանուր գումարը	4 555 000 դրամ
Էլ. փոստը	cced@freenet.am

Ծրագրի նպատակը	Նպաստել «Փախստականների մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի կիրառմանը՝ Գորիսի եւ Սիսիանի տարածաշրջաններում՝ կանխարգելելով փախստականների նկատմամբ բռնի գորակոչի դեպքերը:
Ծրագրի արդյունքը	Ծրագրի շրջանակներում իրականացվել են հանդիպումներ Սիսիանի եւ Գորիսի գինկոմների աշխատակազմերի հետ՝ պարզելու փախստականների գորակոչվելու դեպքերի առկայությունը: Ինչպես նաեւ իրականացվել են բազմաթիվ այցեր Գորիսի եւ Սիսիանի համայնքներում բնակվող փախստականների կացարանները՝ պարզելու համար փախստականներին բռնի կերպով գորակոչելու դեպքերի առկայությունը: Գորիսի եւ Սիսիանի տարածաշրջաններում բնակվող փախստական ընտանիքները տեղեկացվել են իրենց իրավունքների մասին, իսկ գինկոմները՝ փախստականների արտոնությունների մասին: Հետեւողական վերահսկման արդյունքում կանխվել են փախստականների իրավունքների խախտման դեպքերը՝ կապված գինապարտության հետ: Այսօր Գորիսի եւ Սիսիանի տարածաշրջաններում բնակվող փախստականները գիտեն, որ գորակոչային տարիքում գտնվող յուրաքանչյուր փախստական ըստ «Փախստականների մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի կարող է ծառայել հայկական բանակում միմիայն կամավորական սկզբունքով եւ, որ ոչ ոք իրավունք չունի գինապարտության տարիքում գտնվող փախստական երիտասարդին իր կամքին հակառակ գորակոչել:

35.

Կազմակերպության անվանումը	«Շուշան» ՀԿ
Ծրագրի անունը	Լապտերիկ
Պայմանագրի համարը	# ARM-AI-G-2007-10
Ծրագրի տեւողությունը	Ղեկտեմբեր, 2007թ. - հունիս, 2008թ.
Ծրագրի իրականացման վայրը	ՀՀ, Վայոց Ձորի մարզ
Դրամաշնորհի չափը	3 161 050 դրամ
Կազմակերպության ներդրումը	620 900 դրամ
Ընդհանուր գումարը	3 781 950 դրամ
Էլ. փոստը	h.narine@list.ru
Ծրագրի նպատակը	Նպաստել Վայոց Ձորի 7 համայնքների հաշմանդամներին ՏԻՄ-երի կողմից ֆինանսական եւ սոցիալական աջակցության մեխանիզմների կիրառմանը:
Ծրագրի արդյունքը	Ծրագրում ընդգրկված յոթ համայնքների ՏԻՄ-երի կողմից ընդունվել են հաշմանդամներին առողջապահական, կրթական եւ իրավական ոլորտներում համայնքային բյուջեից ֆինանսական աջակցություն ցուցաբերելու մասին որոշումներ: Ըստ այդ որոշումների յուրաքանչյուր համայնքի ղեկավար համայնքի բյուջեի հնարավորությունների սահմաններում պետք է աջակցի իր համայնքում ապրող հաշմանդամներին: Արդյունքներն արդեն շոշափելի են. Գլաձորի համայնքապետ Ա. Մարտիրոսյանը համայնքի բյուջեից գումար է հատկացրել 7 տարի շարունակ սայլակի օգնությամբ տեղաշարժվող Գոհարիկ Նավասարդյանի ողնաշարի վիրահատության համար: Վիրահատությունը իրականացվել է Սիբայելյանի անվան վիրաբուժական հիվանդանոցում, 2008թ. հուլիսի 2-ին:

Լրատվական ոլորտ

36.

Կազմակերպության անվանումը	«Գորիսի մամուլի ակումբ» ՀԿ
Ծրագրի անունը	Պաշտպանեք տեղեկատվության ազատությունը
Պայմանագրի համարը	# ARM-AI-G-2006-17
Ծրագրի տեւողությունը	Նոյեմբեր, 2006թ. – հունիս, 2007թ.
Ծրագրի իրականացման վայրը	ՀՀ, Սյունիքի մարզի, Գորիսի տարածաշրջան
Դրամաշնորհի չափը	3 173 600 դրամ
Կազմակերպության ներդրումը	635 000 դրամ
Ընդհանուր գումարը	3 808 600 դրամ
Էլ. փոստը	shushik9@yahoo.com

Ծրագրի նպատակը	Նպաստել Գորիսի տարածաշրջանի հանրային նշանակություն ունեցող ձեռնարկությունների կողմից տեղեկատվության տրամադրման գործընթացում «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի կիրառմանը:
Ծրագրի արդյունքը	Կազմակերպության կողմից կատարված սոցիոլոգիական հարցումների արդյունքում պարզվել է, որ ծրագրի արդյունքում Գորիսի տարածաշրջանի 40 կազմակերպությունների 50%-ը լիովին կատարում է տեղեկատվության ազատության մասին օրենքի պահանջները, իսկ 50%-ը՝ մասամբ: ՀԿ-ն կլոր սեղան-քննարկումներ է կազմակերպել թիրախ կազմակերպությունների մասնակցությամբ՝ քննարկելու համար «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի պահանջները: Հանդիպումներ է կազմակերպել Գորիսի տարածաշրջանի բնակիչների հետ՝ տեղեկատվություն ձեռք բերելու իրենց իրավունքների վերաբերյալ: «Գորիսի մամուլի ակումբ» ՀԿ-ն այցելություններ է կատարել թիրախ կազմակերպություններ, կատարել է դիտարկումներ, հարցումներ, անցկացրել է հարցազրույցներ եւ պարզել ծրագրի ազդեցությունը: Արդյունքում զգալիորեն փոխվել է տեղեկատվություն տնօրինողների վերաբերմունքը «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի կիրառման վերաբերյալ: Այսօր Գորիսում եւ տարածաշրջանում տեղեկատվություն տրամադրողներն արհեստական քաշքշուկ չեն առաջացնում տեղեկատվություն տրամադրելու հարցում եւ քաջ գիտակցում են, որ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով պարտավոր են իրենց գործառույթների վերաբերյալ տեղեկատվություն տրամադրել հանրությանը:

Բնապահպանական եւ գյուղատնտեսական ոլորտ

37.

Կազմակերպության անվանումը	«Լեռնեցիների առողջ սերունդ» ՀԿ
Ծրագրի անունը	Բնությունը քո ձեռքերում է
Պայմանագրի համարը	# ARM-AI-G-2008-01
Ծրագրի տեւողությունը	Հուլիս – հոկտեմբեր, 2008թ.
Ծրագրի իրականացման վայրը	ՀՀ, Սյունիքի մարզի, Գորիսի տարածաշրջանի Գորիս, Քարահունջ եւ Վերիշեն համայնքներ
Դրամաշնորհի չափը	1 775 234 դրամ
Կազմակերպության ներդրումը	421 144 դրամ
Ընդհանուր գումարը	2 196 378 դրամ
Էլ. փոստը	aramamaryan@yandex.ru
Ծրագրի նպատակը	Ձեռք բերել Գորիս, Վերիշեն, Քարահունջ համայնքների ՏԻՄ-երի կողմից հանրային նշանակության «Հանգստի գոտիների պահպանություն եւ խնամք» ծրագիր-առաջարկների ընդունման որոշում եւ Գորիս, Վերիշեն, Քարահունջ համայնքների 2009թ. բյուջեներում հատկացումներ՝ ծրագիր-առաջարկների իրականացման համար:
Ծրագրի արդյունքը	Կազմակերպության կողմից նախաձեռնության շրջանակներում Գորիսի տարածաշրջանի Գորիս, Վերիշեն եւ Քարահունջ համայնքներում գտնվող հանրային նշանակության հանգստի վայրերի խնամքի եւ պահպանության կարելուության մասին իրազեկությունը բարձրացնելու նպատակով կազմակերպվել եւ անցկացվել են կլոր սեղան-քննարկումներ բնակիչների, շահագրգիռ կազմակերպությունների մասնակցությամբ: Շրջակա միջավայրի պահպանության եւ խնամքի կազմակերպման գործում հանրային վերաբերմունքի ձեւավորման նպատակով նախաձեռնության շրջանակներում տպագրվել եւ հանրությանն են բաժանվել 2000 բուկլետ, հանգստի գոտիների սանիտարահիգիենիկ վիճակի եւ դրա ազդեցության մասին՝ հողված «Կամք+» թերթում: Նախաձեռնությունն արդյունավետ իրականացնելու նպատակով համագործակցություն է ստեղծվել ԵԱՀԿ-ի Գորիսի Օրիուս կենտրոնի, Գորիսի տուրիզմի կենտրոնի եւ «Լեռնեցիների առողջ սերունդ» ՀԿ-ի միջեւ: Համագործակցությունն իրականացնում է նախապատրաստական աշխատանքներ՝ 2009թ. գարնանը ծրագրի շահառու համայնքների բնակիչների մասնակցությամբ, համայնքների շրջակայքում գտնվող հանգստի գոտիների աղբահանման եւ ցուցատախտակների տեղադրման համար ակցիայի անցկացման ուղղությամբ:

Համագործակցության կողմից մշակվել է «Հանգստի գոտիների պահպանություն ու խնամք» ծրագիր-առաջարկները՝ Գորիս, Վերիշեն եւ Քարահունջ համայնքների ՏԻՄ-երին ներկայացնելու եւ համապատասխան որոշումներով դրանք իրականացնելու համար:
Շահերի բախման պատճառով ծրագիրը 2008թ. հոկտեմբերին դադարեցվել է դոնորի կողմից:

38.

Կազմակերպության անվանումը	«Խայթ» ՀԿ
Ծրագրի անունը	Կանխարգելում
Պայմանագրի համարը	# ARM-AI-G-2007-02
Ծրագրի տեղողությունը	Փետրվար – հունիս, 2007թ.
Ծրագրի իրականացման վայրը	ՀՀ, Սյունիքի մարզ
Դրամաշնորհի չափը	2 478 600 դրամ
Կազմակերպության ներդրումը	500 000 դրամ
Ընդհանուր գումարը	2 978 600 դրամ
Էլ. փոստը	aspaersz@yahoo.fr
Ծրագրի նպատակը	Նպաստել Սյունիքի անասնաբուժական պետական տեսչության կողմից մեղվաբնտանիքների լաբորատոր ախտորոշիչ եւ բուժման պրոֆիլակտիկ աշխատանքներ իրականացնելու գործընթացներին:
Ծրագրի արդյունքը	<p>Սյունիքի մեղվաբույծները կատարել են համապատասխան պրոֆիլակտիկ աշխատանքներ՝ օգտվելով համայնքային անասնաբուժարանների ծառայություններից:</p> <p>Կազմակերպությունը հասել է նրան, որ Սյունիքի մեղվաբույծները գիտակցել են լաբորատոր ախտորոշման դերը եւ նրանց 90%-ից ավելին օգտվել է այդ ծառայությունից. ստացել են անհրաժեշտ պատվաստանյութեր եւ խորհրդատվություն՝ մեղվապահության սկզբունքների մասին: Նրանց մի մասն ինքնուրույն է իրականացրել համապատասխան պրոֆիլակտիկ աշխատանքները, իսկ մեծ մասն օգտվել է համայնքային անասնաբուժարանների ծառայություններից: Այդ աշխատանքները նպաստել են 2007 թվականի բարձր բերքատվությանը:</p> <p>Գորիսի եւ Սիսիանի մեղվաբույծները որոշել են տարվա ընթացքում 2-3 անգամ հանդիպում-քննարկումներ ունենալ համայնքային անասնաբուժարաններում՝ փորձի փոխանակման եւ համագործակցության նպատակով:</p>

Սպառողների շահերի պաշտպանության ոլորտ

39.

Կազմակերպության անվանումը	«Էկո-սիս» ՀԿ
Ծրագրի անունը	Շահերի պաշտպանության նախաձեռնություն Սիսիանում
Պայմանագրի համարը	# ARM-AI-G-2006-02
Ծրագրի տեղողությունը	Ապրիլ - նոյեմբեր, 2006թ.
Ծրագրի իրականացման վայրը	ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Սիսիան
Դրամաշնորհի չափը	3 999 700 դրամ
Կազմակերպության ներդրումը	1 143 000 դրամ
Ընդհանուր գումարը	5 142 700 դրամ
Էլ. փոստը	ecosisian@yahoo.com
Ծրագրի նպատակը	Նպաստել «Առելտրի եւ սպասարկումների մասին» ՀՀ օրենքի 17 հոդվածի կիրառմանը Սիսիան համայնքում, ներդնել առելտրի կանոնները առելտրի եւ սպասարկման կետերում:
Ծրագրի արդյունքը	Կազմակերպությունը մշակել է առելտրի սպասարկման կանոններ եւ ներդրել Սիսիան համայնքում: «Էկո-սիս» ՀԿ-ն համակարգել է Սիսիան քաղաքի առելտրի յուրահատուկ կանոնների եւ կանոնադրության մշակումը: Որպեսզի նոր մշակված կանոնները հարմար եւ ընդունելի լինեն բոլորի համար, ՀԿ-ի աշխատակազմը բիզնես սեփականատերերի եւ ծառայություն մատուցողների շրջանում կատարել է իրավիճակի եւ կարիքի գնահատում՝ հարցաթերթերով եւ հեռախոսազանգերով: Առելտրի կանոնների նախնական տարբերակի մասին հաճախորդներին եւ բիզնես սեփականատերերին իրազեկելու նպատակով ՀԿ-ի կողմից կազմակերպվել են կլոր սեղաններ ու սեմինարներ: Կանոններն առողջ մրցակցության մթնոլորտ են ստեղծել բիզնես սեփականատերերի միջև: Սիսիանի մոտ 40 առելտրի

սպասարկման կետերում բարելավվել է ծառայությունների մատուցումը: Փոխվել է բնակիչների եւ առեւտրի սպասարկողների վերաբերմունքը մատուցվող ծառայությունների նկատմամբ: Սպասարկող անձնակազմը սկսել է հետեւել սննդի ընդունման, պահպանման եւ մատուցման հիգիենայի կանոններին: Հաճախորդները հետեւում են իրենց կողմից գնված սննդատեսակների ժամկետներին, մատուցման որակին եւ ընդհանուր հիգիենիկ պայմաններին: Արդյունքում առկա են տեսանելի փոփոխություններ, որոնց վերաբերյալ իրենց գոհունակությունն են հայտնել Սիսիան համայնքի շատ բնակիչներ: Օրինակ, հիմա Սիսիանում, երբ հաճախորդը տեսնում է, որ պանրի կտորը կտրվում է այն նույն տախտակի վրա, որտեղ հենց նոր միս էր կտրվել, գիտի, որ իրավունք ունի հետ պահանջելու իր գումարը:

40.

Կազմակերպության անվանումը	«Ատլանտ» ժողովրդավարության աջակցման ՀԿ
Ծրագրի անունը	Հիգիենիկ արտադրություն
Պայմանագրի համարը	# ARM-AI-G-2008-07
Ծրագրի տևողությունը	Հունիս, 2008թ. - փետրվար, 2009թ.
Ծրագրի իրականացման վայրը	ՀՀ, Սյունիքի մարզի Գորիս, Խնձորեսկ, Հարթաշեն, Վերիշեն, Քարաշեն, Շինուհայր համայնքներ
Դրամաշնորհի չափը	2 995 000 դրամ
Կազմակերպության ներդրումը	620 000 դրամ
Ընդհանուր գումարը	3 615 000 դրամ
Էլ. փոստը	atlantgoris@rambler.ru
Ծրագրի նպատակը	Նպաստել Գորիսի տարածաշրջանի սննդի արտադրամասերի եւ սննդի սպասարկման կետերի կողմից սանիտարական կանոնների եւ հիգիենիկ նորմերի կիրառմանը:
Ծրագրի արդյունքը	Նախաձեռնության շրջանակներում կազմակերպվել է հանրային քննարկում՝ հասարակության ակտիվ անդամների, գործարարների, համայնքի կազմակերպությունների, ՏԻՄ-երի, Գորիսի հիգիենիկ հակահամաճարակային տեսչության ներկայացուցիչների մասնակցությամբ, որտեղ քննարկվել են սննդի արտադրամասերում սանիտարահիգիենիկ անբավարար պայմանների հիմնական պատճառները: Գորիսի հիգիենիկ հակահամաճարակային տեսչության տարածքային մարմնի պատասխանատվությունը բարձրացնելու նպատակով կատարված մի շարք գործողությունները հասել են իրենց նպատակին. տեսչության կողմից կատարվող վերահսկման այցերի քանակը միջին հաշվով աճել է երկու անգամ՝ ամսական 2-3 ստուգայցից հասնելով 4-5-ի: Կազմակերպությունը կարողացել է հասնել նրան, որ Գորիսի հիգիենիկ հակահամաճարակային տեսչության տարածքային մարմինն ընդունի համայնքին պարբերաբար հաշվետվություն եւ տեղեկատվություն տալու որոշում: Այսօր Գորիսի տարածաշրջանում առկա սննդի արտադրամասերում սանիտարական վիճակը զգալիորեն լավացել է: Այդ մասին է վկայում օրինակ այն, որ ծրագրի իրականացման վերջին ամիսներից գրեթե բոլոր արտադրամասերում աշխատողները կրում են սանիտարական արտահագուստ, իսկ Գորիսի հիգիենիկ հակահամաճարակային տեսչության տարածքային մարմնի հավաստմամբ՝ որոշ արտադրամասերում արդեն իսկ նախատեսված են վերանորոգման աշխատանքներ: Տեսչության ներկայացուցիչների այցելությունների քանակը միջին հաշվով երկու անգամ աճել է, ինչի արդյունքում սննդի արտադրամասերում աստիճանաբար շտկվում է իրավիճակը: Բացի դրանից, տեսչության ընդունած որոշման համաձայն հասարակությունը պարբերաբար իրազեկվում է վերահսկման այցելությունների մասին, ինչը բարձրացրել է սննդի արտադրամասերի սանիտարահիգիենիկ պայմանների վերաբերյալ հասարակության իրազեկվածությունը եւ խթան է հանդիսանում սննդի արտադրամասերի տնօրինությունների կողմից արտադրամասերի սանիտարահիգիենիկ վիճակի բարելավմանն ուղղված աշխատանքների նախաձեռնման ու իրականացման համար:

41.

Կազմակերպության անվանումը	«Ասպարեզ» ՀԿ
Ծրագրի անունը	Պաշտպանված սպառող
Պայմանագրի համարը	# ARM-AI-G-2007-06
Ծրագրի տևողությունը	Դեկտեմբեր, 2007թ. - հունիս, 2008թ.
Ծրագրի իրականացման վայրը	ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Գորիս եւ հարակից գյուղեր
Դրամաշնորհի չափը	3 059 000 դրամ

Կազմակերպության ներդրումը	620 000 դրամ
Ընդհանուր գումարը	3 679 000 դրամ
Էլ. փոստը	toxsancvage@rambler.ru
Ծրագրի նպատակը	Նպաստել Գորիս, Վերիչեն, Խնձորեսկ, Տեղ համայնքներում առևտրի եւ սպասարկման կետերում օրենքով նախատեսված առևտրի եւ ծառայությունների մասին կանոնների ներդրմանը՝ ձեռք բերելով ՏԻՄ-երի որոշումները առևտրի կանոնների հանրային վերահսկման մեխանիզմների կիրառման վերաբերյալ:
Ծրագրի արդյունքը	Կազմակերպությունը լայնածավալ քարոզարշավ կազմակերպելով՝ կարողացել է բարձրացնել սպառողների, առևտրի կետերի, հանրային սննդի սպասարկման կետերի աշխատողների իրազեկությունը առևտրի եւ ծառայությունների կանոնների վերաբերյալ: Մշակել է առևտրի եւ ծառայությունների կանոնների ՏԻՄ-ի համատեղ վերահսկման թափանցիկ մեխանիզմ, որի վերաբերյալ Գորիսի համայնքի ավագանին ընդունել է համապատասխան որոշում: Նշված համայնքների ՏԻՄ-երի կողմից արդեն իրենց համայնքներում ներդրվել է առևտրի եւ ծառայությունների կանոնների համատեղ վերահսկման մեխանիզմը: Գորիսի ՏԻՄ-ից եւ «Ասպարեզ» ՀԿ-ի ներկայացուցիչներից ձեւավորված հանձնաժողովը շրջայց է կատարել Գորիսի առավել բանուկ թաղամասերում գործող 5 խանութ՝ վերհանելով առևտրի եւ ծառայությունների կանոնների խախտումներ եւ դրանց վերաբերյալ բացատրական աշխատանքներ է կատարել խանութի աշխատակիցների շրջանում:

42.

Կազմակերպության անվանումը	«Միջազգային փորձի ուսումնասիրության գիտական կենտրոն» ՀԿ
Ծրագրի անունը	Առողջ սերունդ՝ առողջ համայնք
Պայմանագրի համարը	# ARM-AI-G-2007-09
Ծրագրի տեւողությունը	Դեկտեմբեր, 2007թ. – օգոստոս, 2008թ.
Ծրագրի իրականացման վայրը	ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Սիսիան
Դրամաշնորհի չափը	2 496 970 դրամ
Կազմակերպության ներդրումը	503 000 դրամ
Ընդհանուր գումարը	2 999 970 դրամ
Էլ. փոստը	ies_center@mail.ru
Ծրագրի նպատակը	Նպաստել Սիսիան քաղաքի 10-ից մինչեւ 18 տարեկան անչափահասներին վաճառքի եւ սննդի սպասարկման օբյեկտների կողմից ալկոհոլ եւ ծխախոտ վաճառելու օրենսդրությամբ սահմանված արգելքների կիրառմանը:
Ծրագրի արդյունքը	Կազմակերպության հետծրագրային դիտարկումները ցույց են տվել, որ ծրագրի ավարտից հետո Սիսիան քաղաքում բավականաչափ աճել է առևտրի եւ սննդի սպասարկման այն օբյեկտների թիվը, որոնք կատարում են անչափահասներին ծխախոտի եւ ոգելից խմիչքների վաճառքն արգելող ՀՀ օրենսդրության պահանջները: Ալկոհոլ եւ ծխախոտ օգտագործող անչափահասների թիվը, կազմակերպության կողմից կատարված հարցումների վերլուծության արդյունքում նվազել է մոտ 35%-ով: Ոստիկանության Սիսիանի բաժնի անչափահասների տեսչության, «Սիսիանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի, Սիսիանի քաղաքապետարանի խնամակալության եւ հոգաբարձության հանձնաժողովի եւ առևտրի եւ սննդի սպասարկման օբյեկտների մասով վերահսկողություն իրականացնող անձանց (տեսուչներ) կողմից ուժեղացել է վարահսկողությունը եւ ակտիվացել կանխարգելիչ աշխատանքները: Իսկ Սիսիանի հանրակրթական հաստատություններում եւ քոլեջներում այս առումով հավուր պատշաճին է իրականացվում անչափահասների դաստիարակությունը:

Մարդու իրավունքների պաշտպանության ոլորտ

43.

Կազմակերպության անվանումը	«Իրավունքների տեղեկատվական կենտրոն» իրավապաշտպան-խորհրդատվական ՀԿ
Ծրագրի անունը	Հասարակական մոնիտորինգ՝ հանուն իրավունքների պաշտպանության
Պայմանագրի համարը	# ARM-AI-G-2007-15
Ծրագրի տեւողությունը	Դեկտեմբեր, 2007թ. – հուլիս, 2008թ.

Ծրագրի իրականացման վայրը	<i>ՀՀ, Սյունիքի մարզ</i>
Դրամաշնորհի չափը	<i>3 162 500 դրամ</i>
Կազմակերպության ներդրումը	<i>771 810 դրամ</i>
Ընդհանուր գումարը	<i>3 934 310 դրամ</i>
Էլ. փոստը	<i>itek@rambler.ru</i>
Ծրագրի նպատակը	<i>Նպաստել Սյունիքի մարզի ոստիկանության ձեռքարկվածների/պահելու վայրերում (ՁՊՎ) իրավիճակի բարելավմանը՝ «Ձեռքարկված եւ կալանավորված անձանց մասին» ՀՀ օրենքի համապատասխան:</i>
Ծրագրի արդյունքը	<p><i>Սյունիքի մարզի Գորիսի, Կապանի, Սիսիանի, Մեղրու Ոստիկանության վարչության ՁՊՎ-ների աշխատակիցները ձեռք են բերել սպառիչ գիտելիքներ ձեռքարկված անձանց մասին ՀՀ-ում գործող օրենքների եւ միջազգային փաստաթղթերով վավերացված մարդու իրավունքների վերաբերյալ:</i></p> <p><i>Կազմակերպությունը կարողացել է նաեւ մի շարք միջոցառումների շնորհիվ հանրության ուշադրությունը հրավիրել ձեռքարկված եւ կալանավորված անձանց իրավունքների եւ իրավունքների պաշտպանության առկա մեխանիզմների վրա:</i></p> <p><i>Կազմակերպվել է իրավաբանական խորհրդատվություն քվով 4 կալանավորված անձանց հարազատների եւ «Գորիս» քրեակատարողական հիմնարկում 14 կալանավորված անձանց համար:</i></p> <p><i>ՀՀ Ոստիկանության Սյունիքի մարզի ՁՊՎ-ներում, «Գորիս» քրեակատարողական հիմնարկում իրականացվել է մոնիտորինգ՝ «Ձեռքարկված եւ կալանավորված անձանց մասին» օրենքով սահմանված կարգի եւ չափանիշների համապատասխանության ստուգման նպատակով:</i></p> <p><i>Հրապարակվել է զեկույց եւ առաջարկությունների փաթեթ՝ Սյունիքի մարզի ոստիկանության Ձեռքարկված եւ կալանավորված անձանց պահելու վայրերի մոնիտորինգի արդյունքների վերաբերյալ:</i></p> <p><i>Լոբբինգի, համախոհների մոբիլիզացման, տեղեկատվության ազատության օրենքի օգտագործման արդյունքում կազմակերպությունը կարողացել է թույլտվություն ձեռք բերել ՀՀ Ոստիկանությունից եւ ՀՀ Արդարատառության նախարարությունից՝ համապատասխան հաստատություններ մուտք գործելու համար:</i></p> <p><i>Սյունիքի ոստիկանության բոլոր բաժիններում ՀՀ-ի միջամտությամբ ձեռքարկված անձանց իրավունքների մասին տեղեկատվական թերթիկներն ավելի մատչելի են դարձրել ձեռքարկված անձանց համար:</i></p> <p><i>Ծրագրի իրականացումից հետո յուրաքանչյուր ամիս Գորիսի «Ձանգեզուր» թերթի 5 օրինակ անվճար տրամադրվում է «Գորիս» քրեակատարողական հիմնարկին (ՔԿՀ)՝ կալանավորված անձանց տրամադրելու համար: Այն նպաստում է կալանավորված անձանց զբաղվածության խնդրի ինչ-որ չափով լուծմանը, ինչպես նաեւ հնարավորություն է տալիս տեղեկացված լինել եւ կապ պաշտպանել արտաքին աշխարհի հետ ու հոգեպես բարյացակամ տրամադրվել այդ աշխարհի հանդեպ: «Գորիսի անգլերեն լեզվի ուսուցման կենտրոն» ՀՀ-ն առաջարկել է իրենց ՀՀ-ի օգնությունը ձեռքարկված եւ «Գորիս» ՔԿՀ կալանավորված անձանց՝ անգլերեն լեզվով փաստաթուղթ, նամակ կազմելու, թարգմանություններ կատարելու համար:</i></p>

- **Ընտրական դրամաշնորհների կառավարում**

Պայմանագրի/երի համար/ները	# ARM-EPG-ISO-2006-02 # ARM-EPG-ISO-2007-03
Ծրագրի տեսողությունը	Սեպտեմբեր, 2006թ. – դեկտեմբեր, 2008թ.
Ծրագրի իրականացման վայրը	ՀՀ, Սյունիքի եւ Վայոց Ձորի մարզեր
Դրամաշնորհի չափը	16 690 815 դրամ

ԳՈԻՄ ՀՀ-ն 2006թ. սեպտեմբերից մինչեւ 2008թ. դեկտեմբերը Քաղաքացիական շահերի պաշտպանության աջակցության ծրագրի (CASP) շրջանակներում, որն իրականացվում է ԱՄՆ ՄՁԳ-ի ֆինանսավորմամբ, Քաունթերափաթ ինթերնեյշնլ կազմակերպության կողմից, Սյունիքի եւ Վայոց Ձորի մարզերում աջակցել է ընտրությունների գործընթացներին աջակցող դրամաշնորհների կառավարմանը: Դրամաշնորհներն իրականացվել են նշված մարզերում գրանցված քաղաքացիական հասարակության այն կազմակերպությունների կողմից, որոնք պատկանում են ոչ կառավարական կազմակերպությունների լայն շրջանակին, ներառյալ՝ ասոցիացիաներ, միություններ, հանրային նպատակներ հետապնդող առևտրային կազմակերպություններ, զանգվածային լրատվամիջոցներ եւ ոչ առևտրային կազմակերպություններ:

Ընտրական գործընթացներին աջակցող դրամաշնորհների նպատակն է **հզորացնել եւ ընդլայնել քաղաքացիական հասարակության կազմակերպությունների եւ հայաստանյան հանրության դերն ու մասնակցությունը ընտրական գործընթացին՝** ապահովելով հետեւյալ արդյունքները՝

- ընտրական գործընթացում քաղաքացիական հասարակության կազմակերպությունների եւ հասարակության դերի ու մասնակցության ընդլայնում,
- 2007 եւ 2008թթ ընտրական փուլերի հետ կապված իրադարձությունների եւ տեղեկությունների մասին քաղաքացիների իրազեկման բարձրացում,
- քաղաքացիների եւ թեկնածուների, ինչպես նաեւ քաղաքական կուսակցությունների միջեւ երկխոսության ակտիվացում՝ քաղաքական ծրագրերի ավելի մեծ հասցեականություն ու հաշվետվողականություն ապահովելու նպատակով:

2007 եւ 2008թթ Քաունթերփարթ/CASP–ի դրամաշնորհների եւ տեխնիկական աջակցության միջոցով Սյունիքում եւ Վայոց Ձորում իրականացվել են ընտրություններին աջակցող 22 նախաձեռնություններ, որից 8-ը՝ խորհրդարանական, 6-ը՝ նախագահական եւ 8-ը ՏԻՄ ընտրություններին աջակցող նախաձեռնություններ: Նախագահական ընտրություններին աջակցող 6 նախաձեռնություններից 3-ը եւ ՏԻՄ ընտրություններին աջակցող 8-ից 1-ը, իրականացվել են ՔՀԿ-ներով ձեւավորված համագործակցությունների կողմից:

Ընտրական ծրագրերն իրականացվել են 3 փուլով՝

- խորհրդարանական ընտրություններին աջակցող դրամաշնորհներ,
- Նախագահական ընտրություններին աջակցող դրամաշնորհներ,
- ՏԻՄ ընտրություններին աջակցող դրամաշնորհներ:

Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների դրամաշնորհները նույնպես հնարավորություն են ընձեռել ընտրությունների ոչ կուսակցական նախաձեռնություններ իրականացնել քվեարկությունից առաջ եւ քվեարկության օրը: Ի տարբերություն նախորդների, ՏԻՄ ընտրություններին աջակցող ծրագրերը ներառել են միայն հետեւյալ հիմնական բնույթի գործողությունները՝

- հանրային հանդիպումներ, ֆորումներ եւ թեկնածուների հետ բանավեճ-քննարկումներ տեղական նշանակության խնդիրների եւ դրանց վերաբերյալ թեկնածուների դիրքորշումների եւ ծրագրերի քննարկման համար,
- ժողովրդավարական ընտրական գործընթացներին բնորոշ բոլոր տարրերի եւ փուլերի օբյեկտիվ վերահսկում:

- **Սյունիքի եւ Վայոց Ձորի ընտրություններին աջակցող դրամաշնորհային նախաձեռնությունները**

Խորհրդարանական ընտրություններին աջակցող նախաձեռնություններ 01.

Կազմակերպության անվանումը	«Աշխատանք եւ հայրենիք» ՀԿ
Ծրագրի անունը	Վրդար ու թափանցիկ ընտրություններ Վայոց Ձորում
Պայմանագրի համարը	# ARM-EPG-2006-01
Ծրագրի տեղողությունը	Հունվար – մայիս, 2007թ.
Ծրագրի իրականացման վայրը	ՀՀ, Վայոց Ձորի մարզ
Դրամաշնորհի չափը	5 748 600 դրամ
Կազմակերպության ներդրումը	1 025 080 դրամ
Ընդհանուր գումարը	6 773 680 դրամ
Էլ. փոստը	vaykshirak@rambler.ru
Ծրագրի նպատակը	Նպաստել 2007թ. խորհրդարանական ընտրությունների արդար, թափանցիկ եւ մասնակցային կայացմանը Վայոց Ձորի մարզում. <ul style="list-style-type: none"> ➢ բարձրացնելով Վայոց Ձորի երիտասարդների (առաջին անգամ ընտրողներ) կանանց, փախստականների եւ հաշմանդամների մասնակցությունը ընտրական գործընթացներին, ➢ ներգրավելով հանրությանը ընտրական գործընթացներում՝ թափանցիկությունը եւ վերահսկողությունը բարձրացնելու նպատակով:
Ծրագրի արդյունքը	Կազմակերպությունը ծրագրային ամենամեծ ձեռքբերումը համարում է այն, որ 2007 խորհրդարանական ընտրություններից առաջ Վայոց Ձորի 1450 կին, հաշմանդամ, փախստական եւ երիտասարդ (առաջին անգամ ընտրողներ) ծրագրի շրջանակներում կազմակերպված հանդիպումների միջոցով իրազեկվել են ՀՀ Ընտրական օրենսգրքի փոփոխություններին եւ ԱԺ ընտրություններին համամասնական ընտրակարգով առաջադրված կուսակցությունների եւ իրենց ընտրատարածքից մեծամասնական ընտրակարգով առաջադրված ԱԺ պատգամավորության թեկնածուների նախընտրական ծրագրերին: Կազմակերպությունն իրազեկությունը բարձրացնելու համար համերգ-ակցիաներ, «Ընտրություններ. երգիծական պլակատ»-ի հանրապետական ցուցահանդես-մրցույթներ է կազմակերպել ողջ ծրագրի

ընթացքում:

02.

Կազմակերպության անվանումը	«Ռոտանյան դողանջներ» ՄՊԸ /«Սյունի» հեռուստաստուդիա/
Ծրագրի անունը	Ընտրողների իրազեկություն եւ շահերի պաշտպանություն
Պայմանագրի համարը	# ARM-EPG-2006-03
Ծրագրի տեղողությունը	Հունվար – հունիս, 2007թ.
Ծրագրի իրականացման վայրը	ՀՀ, Սյունիքի մարզ, Սիսիանի տարածաշրջան
Դրամաշնորհի չափը	6 205 200 դրամ
Կազմակերպության ներդրումը	4 855 500 դրամ
Ընդհանուր գումարը	11 060 700 դրամ
Էլ. փոստը	sisiantv@mail.ru
Ծրագրի նպատակը	<p><i>Նպաստել</i></p> <ul style="list-style-type: none"> ➢ հեռուստատեքերի ու ծրագրերի ներկայացման մատչելիություն եւ հավասարազոր պայմանների ստեղծմանը թեկնածուների /կուսակցությունների համար. ➢ վստահված անձանց, դիտորդների, տեղամասային ընտրական հանձնաժողովների /մասնավորապես գյուղական/ անդամների, ԸՕ նոր փոփոխությունների վերաբերյալ իրազեկության եւ պատրաստվածության բարձրացմանը. ➢ Սիսիան քաղաքում գործող քաղաքացիական հասարակության կազմակերպությունների համախմբմանը եւ կապերի զարգացմանը, ➢ ընտրացուցակների մատչելիության գործընթացի կազմակերպմանը: <p>Հանդես գալ որպես կապող օղակ ընտրական գործառույթներ իրականացնող կազմակերպությունների (ընտրական հանձնաժողովներ, համայնքապետարաններ, անձնագրային բաժիններ, քաղաքացիական հասարակության կազմակերպություններ, դիտորդական առաքելություն իրականացնողներ) եւ ընտրողների ու ընտրվողների միջեւ:</p>
Ծրագրի արդյունքը	<p>Կազմակերպության կողմից կամավորների միջոցով ընտրացուցակների փակցումը Սիսիան քաղաքի շենքերի մուտքերում եւ առանձնատների համար բանուկ վայրերում հնարավորություն է տվել քաղաքացիներին առանց ընտրատեղամասեր հասնելու ճշտել ընտրացուցակներում իրենց անունների ընդգրկվածությունը: Արդյունքում 18 ընտրող վերականգնել է իր տվյալները ընտրացուցակներում: «Սյունի» հեռուստաընկերության «Ինչով են ես առավել» թեմայով պարբերաբար կազմակերպած հեռուստաբանավեճի միջոցով ապահովվել է մատչելիություն եւ հավասար պայմաններ թեկնածուների/կուսակցությունների համար:</p> <p>Հաջողությամբ իրականացվել են իրազեկման հեռուստահաղորդումների եւ հոլովակների պատրաստումն ու հեռարձակումը, որոնց նկարահանման աշխատանքներին մասնակցել են կամավորներ եւ տեղացիներ: Վերջիններին նկարահանումը տեսահոլովակներում հնարավորություն է տվել ապահովելու ավելի մեծ հեռուստալսարան: Այս ընտրություններին, հեռուստաընկերության կողմից իրականացված ճիշտ քարոզարշավի (հեռուստահաղորդումներ, սոցիալական զովազդներ եւ այլն) արդյունքում բավականին նվազել էր ընտրողների անտարբերության եւ անվստահության մակարդակը ընտրական գործընթացների նկատմամբ:</p> <p>Դրամաշնորհառուն, ներգրավելով քաղաքացիական հասարակության եւ շահագրգիռ այլ կազմակերպությունների, բավականին մեծ բացատրական եւ տեղեկատվական աշխատանքներ է իրականացրել ընտրողների շրջանում, որը, ըստ կազմակերպության դիտարկումների, նպաստել է ժողովրդավար ընտրությունների կայացմանը Սիսիանի տարածաշրջանում:</p>

03.

Կազմակերպության անվանումը	«Գորիսի անգլերենի ուսուցման կենտրոն» կրթական ԳԿ
Ծրագրի անունը	Ժողովրդավար ընտրություններ
Պայմանագրի համարը	# ARM-EPG-2006-04
Ծրագրի տեղողությունը	Հունվար – մայիս, 2007թ.
Ծրագրի իրականացման վայրը	ՀՀ, Սյունիքի մարզ
Դրամաշնորհի չափը	6 300 300 դրամ

Կազմակերպության ներդրումը	37 500 դրամ
Ընդհանուր գումարը	8 337 800 դրամ
Էլ. փոստը	silvaget@yaho.com
Ծրագրի նպատակը	Քաջալերել Սյունիքի մարզի գործազուրկ կանանց իմաստավորված մասնակցությունը եւ անկախ քվեարկությունը 2007թ. խորհրդարանական ընտրություններում:
Ծրագրի արդյունքը	Այս կազմակերպության կողմից հետեւողականորեն կազմակերպված ԱԺ ընտրություններին համամասնական ընտրակարգով առաջադրված կուսակցությունների, թեկնածուների եւ գործազուրկ կանաց, 74-ների մասնակցությամբ ֆորումների, հանդիպումների, ինտերակտիվ մեթոդներով անցկացված սեմինարների ընթացքում շահառու կանայք հնարավորություն են ունեցել իրենց հուզող բազմաթիվ հարցերն անմիջականորեն ուղղել կուսակցությունների ներկայացուցիչներին եւ մասնագետներին՝ ստանալով դրանց սպառիչ պատասխանները: Այս կերպ բավականին բարձրացել է գործազուրկ կանանց գիտակցության մակարդակը՝ ընտրություններին մասնակցելու եւ անկախ քվեարկություն անելու վերաբերյալ: Կազմակերպությունն ընտրություններից հետո իրականացրել է հարցում 1600 կանանց շրջանում: Ըստ հարցման արդյունքների մասնակիցների մեծամասնությունը (67%-ը) գիտակցում է ընտրություններին մասնակցելու եւ անկախ քվեարկություն անելու կարեւորությունը:

04.

Կազմակերպության անվանումը	«Գորիս- Բումերանգ» 74
Ծրագրի անունը	Ես կարող եմ
Պայմանագրի համարը	# ARM-EPG-2006-05
Ծրագրի տեւողությունը	Յունվար – մայիս, 2007թ.
Ծրագրի իրականացման վայրը	77, Սյունիքի մարզ
Դրամաշնորհի չափը	6 080 550 դրամ
Ընդհանուր գումարը	6 080 550 դրամ
Էլ. փոստը	goris_boomerang@rambler.ru
Ծրագրի նպատակը	Նպաստել 77 Սյունիքի մարզի հաշմանդամ ընտրողների եւ հաշմանդամ երեխա ունեցող ընտանիքների ընտրողների ակտիվացմանը 2007թ. խորհրդարանական ընտրություններում:
Ծրագրի արդյունքը	Կազմակերպությանը հաջողվել է ծրագրի իրականացման 5 ամիսների ընթացքում ԱԺ ընտրություններին համամասնական ընտրակարգով առաջադրված կուսակցությունների եւ հաշմանդամների, հաշմանդամ երեխա ունեցող ընտանիքների անդամների համար կազմակերպել հանդիպումներ, որոնց ընթացքում վեր են հանվել նրանց հիմնախնդիրները: Տեղական հեռուստաընկերություններով այս հանդիպումների ցուցադրմամբ, բուկլետ-բրոշյուրների տարածմամբ ծրագիրը կարողացել է խթանել Սյունիքի մարզի հաշմանդամ ընտրողների եւ հաշմանդամ երեխաներ ունեցող ընտանիքների ընտրողների 2007թ. խորհրդարանական ընտրություններում մասնակցության ակտիվացումը: Թեկնածուների կողմից հաշմանդամների հիմնախնդիրների վերաբերյալ հետաքրքրության բարձրացումը նույնպես տվել է իր շոշափելի արդյունքը. 2003թ. 11% մասնակցության փոխարեն 2007թ. ընտրություններում նշված շահառուների խումբը, ըստ կազմակերպության կողմից անցկացված հեռախոսային հարցումների արդյունքների վերլուծության, ունեցել է 50-60% մասնակցություն: «Գորիս-Բումերանգը» ընտրությունների օրը կազմակերպել է հաշմանդամների փոխադրումը ընտրատեղամասեր, նաեւ այս կերպ խթանելով նրանց մասնակցությունը ընտրություններին:

05.

Կազմակերպության անվանումը	«Իրավունքների տեղեկատվական կենտրոն» 74
Ծրագրի անունը	Նայիր ապագային
Պայմանագրի համարը	# ARM-EPG-2006-11
Ծրագրի տեւողությունը	Յունվար – հունիս, 2007թ.
Ծրագրի իրականացման վայրը	77, Սյունիքի եւ Վայոց Ձորի մարզեր
Դրամաշնորհի չափը	10 954 200 դրամ
Կազմակերպության ներդրումը	120 000 դրամ
Այլ ներդրում	1 800 000 դրամ
Ընդհանուր գումարը	12 874 200 դրամ

Էլ. փոստը	<i>itek@rambler.ru</i>
Ծրագրի նպատակը	<i>Քարծրացնել Սյունիքի եւ Վայոց Ձորի մարզերի 6 քաղաքային համայնքների /եղեգնածոր, Վայք, Սիսիան, Գորիս, Կապան, Սեդրի/ 18-25 տարեկան երտասարդության դերը եւ մասնակցությունը 2007թ. Աժ ընտրությունների բոլոր գործընթացներում:</i>
Ծրագրի արդյունքը	<i>Սյունիքի եւ Վայոց Ձորի 6 համայնքներում ծրագրի իրականացման ընթացքում եւ հետո գործել են երիտասարդական ակտիվ խմբեր, որոնց կողմից վեր են հանվել համայնքային երիտասարդական հիմնախնդիրները, որոնց հիման վրա մշակվել է երիտասարդական հիմնախնդիրների լուծման միասնական ծրագրային փաթեթը: Քաղաքական կուսակցությունները եւ թեկնածուներն իրենց ծրագրերում ներառել են երիտասարդական ակտիվ խմբերի առաջարկները: Սյունիքի եւ Վայոց Ձորի մարզերի երիտասարդները մամուլում արտահայտել են իրենց կարծիքը՝ ընտրությունների ընթացքի մասին:</i>

06.

Կազմակերպության անվանումը	<i>«Սիսիանի գարգացման կենտրոն» ՀԿ</i>
Ծրագրի անունը	<i>Երիտասարդները հանուն օրինական ընտրությունների</i>
Պայմանագրի համարը	<i># ARM-EPG-2006-12</i>
Ծրագրի տեւողությունը	<i>Հունվար – հունիս, 2007թ.</i>
Ծրագրի իրականացման վայրը	<i>ՀՀ, Սյունիքի մարզ, Սիսիանի տարածաշրջան</i>
Դրամաշնորհի չափը	<i>5 528 925 դրամ</i>
Կազմակերպության ներդրումը	<i>1 054 250 դրամ</i>
Ընդհանուր գումարը	<i>6 583 175 դրամ</i>
Էլ. փոստը	<i>sdc_ngo@yahoo.com</i>

Ծրագրի նպատակը	<i>Սիսիանի տարածաշրջանի երիտասարդության իրազեկության մակարդակի եւ դերի բարձրացման շնորհիվ խթանել երիտասարդների եւ երիտասարդական կառույցների ակտիվ եւ իմաստավորված մասնակցությունը 2007թ. Աժ ընտրություններին եւ ընտրական գործընթացներին:</i>
-----------------------	--

Ծրագրի արդյունքը	<i>Ծրագրի ընթացքում իրականացվել է ընտրական ցուցակներում անճշտությունների հայտնաբերում եւ աջակցություն է ցուցաբերվել ընտրողների ընտրական իրավունքների վերականգնման գործընթացին /ծրագրի ընթացքում իրականացվել է 600 անճշտության հայտնաբերում եւ վերականգնվել է 350 քաղաքացու ընտրական իրավունքը/: Ձեւավորվել է ընտրական իրավունքներին իրազեկ երիտասարդական համայնք, որը տեղեկացվել է նաեւ թեկնածուների եւ առաջադրված կուսակցությունների քաղաքական ծրագրերին՝ կարելու էրով հասարակության մասնակցության դերը եւ քվեարկությանն իմաստավորված մասնակցությունը, այլ ոչ թե ընտրակաշառքի ակնկալիքով կամ որեւէ հեղինակության կողմից ուղղորդվելով: Կազմակերպության կողմից երիտասարդությանը (նաեւ հասարակության լայն զանգվածների) հնարավորություն է ընձեռվել ստանալ խորհրդատվություն՝ Աժ ընտրակարգի, ընտրական իրավունքների եւ գործընթացների վերաբերյալ, ինչպես գրասենյակային խորհրդատվության, այնպես էլ հեռախոսազանգերի եւ հեռուստատեսային «Ընտրական խորհրդատու» հաղորդաշարի միջոցով: Հաղորդաշարի յուրաքանչյուր հաղորդում պարզաբանել է Աժ ընտրությունների եւ ընտրակարգի դրույթների կոնկրետ շրջանակ, հեռուստադիտողները հնարավորություն են ստացել պարզաբանել իրենց հետաքրքրող հարցերը: Տարածաշրջանի ավելի քան 650 երիտասարդ մասնակցել է իրազեկման սենինար-դասընթացների: Սիսիան քաղաքում եւ հարակից 32 համայնքներում երիտասարդությունը հնարավորություն է ստացել կողմնորոշվել ընտրության մեջ եւ կատարել իմաստավորված ընտրություն, ինչպես նաեւ հնչեցնել իրենց ակնկալիքներն ու պահանջներն ապագա խորհրդարանականից:</i>
-------------------------	--

07.

Կազմակերպության անվանումը	<i>«Գորիսի ստեղծագործողներ» ՀԿ</i>
Ծրագրի անունը	<i>Մշակույթն ի նպաստ ժողովրդավարության</i>
Պայմանագրի համարը	<i># ARM-EPG-2006-19</i>
Ծրագրի տեւողությունը	<i>Հունվար – հունիս, 2007թ.</i>
Ծրագրի իրականացման վայրը	<i>ՀՀ, Սյունիքի մարզ</i>
Դրամաշնորհի չափը	<i>8 632 300 դրամ</i>
Կազմակերպության ներդրումը	<i>90 000 դրամ</i>
Ընդհանուր գումարը	<i>8 722 300 դրամ</i>
Էլ. փոստը	<i>jirmar28@freenet.am</i>

Ծրագրի նպատակը	<i>Քարծրացնել Սյունիքի մարզի 40 գյուղական եւ Կապան, Սեդրի քաղաքային համայնքների երիտասարդ ընտրողների (18-25) իրազեկությունն իրենց իրավունքների եւ ընտրությունների կարգի, ընտրության հասարակական վերահսկման անհրաժեշտության, ընտրությունների ներկա իրավիճակի, ընտրությունների</i>
-----------------------	--

կարելիություն, թեկնածուների և նրանց ծրագրերի մասին:

Ծրագրի արդյունքը

Կազմակերպությունը Կապան քաղաքի բուհական հաստատությունների միջև ԱԺ ընտրությունների թեմաներով «Ուրախների և հնարամիտների» ակունքների մրցույթ է կազմակերպել և անցկացրել: Իրազեկման պաստառներ և բուկլետներ է տպագրել և տարածել, ազիտացիոն մշակութային միջոցառումներ է անցկացրել Սյունիքի մարզի 2 քաղաքային և 40 գյուղական համայնքներում՝ երիտասարդության 2007թ. ԱԺ ընտրություններում իրենց իրավունքների, ընտրությունների անցկացման կարգի, ընտրական օրենսգրքի նոր փոփոխություններին մասին իրազեկությունը բարձրացնելու համար: Ծրագրի ընթացքում երիտասարդներին հնարավորություն է տրվել երգիծական և ազիտացիոն մշակութային բնույթի միջոցառումներով արտահայտել իրենց կարծիքը ընտրությունների վերաբերյալ: Սյունիքի 40 գյուղական համայնքներում բարձրացել է ընտրողների իրազեկությունը իրենց իրավունքների, ընտրությունների անցկացման կարգի, ԸՕ-ի նոր փոփոխությունների մասին:

08.

Կազմակերպության անվանումը	<i>«Երիտասարդական գիտա-մշակութային» ՀԿ</i>
Ծրագրի անունը	<i>Ժողովրդավար ընտրությամբ՝ հզոր պետություն</i>
Պայմանագրի համարը	<i># ARM-EPG-2006-23</i>
Ծրագրի տեղորոշումը	<i>Յունվար – հունիս, 2007թ.</i>
Ծրագրի իրականացման վայրը	<i>ՀՀ, Սյունիքի և Վայոց Ձորի մարզեր</i>
Դրամաշնորհի չափը	<i>15 125 000 դրամ</i>
Կազմակերպության ներդրումը	<i>960 000 դրամ</i>
Այլ ներդրում	<i>4 337 410</i>
Ընդհանուր գումարը	<i>20 422 410 դրամ</i>
Էլ. փոստը	<i>ysco@syunik.am</i>
Ծրագրի նպատակը	<i>Բարձրացնել երիտասարդ ընտրողների իրազեկությունը ՀՀ-ի ընտրական գործընթացների, ՀՀ ԸՕ-ի և դրանում արված փոփոխությունների մասին:</i>
Ծրագրի արդյունքը	<i>Կազմակերպության կողմից կազմակերպված իրազեկման դասընթաց-վարժանքների միջոցով Սյունիքի և Վայոց Ձորի 7 քաղաքային համայնքներում /Կապան, Սիսիան, Գորիս, Սեղրի, Քաջարան, Վայք, Եղեգնաձոր/ 3400 երիտասարդ իրազեկվել է ՀՀ ԸՕ-ին և դրանում կատարված նոր փոփոխություններին: Դասընթացների ժամանակ կազմակերպվել են նաև ընտրախաղեր: Սեմինարների կազմակերպչական աշխատանքները իրականացրել են համագործակից կազմակերպությունները՝ Գորիսում «Արքայադուստր Փարվանա» ՀԿ-ն, Սիսիանի տարածաշրջանում՝ «Միջազգային փորձի ուսումնասիրությունների կենտրոն» ՀԿ-ն, Վայոց Ձորում «Մարտիրոս» ԲՀ-ն: Իրազեկման սեմինարների նպատակն էր երիտասարդական կառույցների ներկայացուցիչներին և երիտասարդությանը իրազեկել ՀՀ ԱԺ ընտրակարգին, խթանել նրանց ակտիվ և իմաստավորված մասնակցությունը ընտրական գործընթացներին: Հետաքրքիր քննարկումներ են ծավալվել ընտրակեղծիքների և դրանց կանխման վերաբերյալ, որը նպաստել է երիտասարդներին զերծ մնալ ընտրախախտումների գործընթացների մասնակցելուց: Ծրագրի ընթացքում յուրաքանչյուր ուրբաթ «Խուստուփ Թի Վի» հեռուստաընկերությամբ տրվել է հեռուստահաղորդում՝ ծրագրի իրականացման մասին, եթեր են հեռարձակվել սոցիալական գովազդներ՝ ընտրական իրավունքի մասին:</i>

Համագործակցություն - ԱԺ ընտրություններ

➤ Համագործակցություն ABA-CELL կազմակերպության հետ

ABA/CELL կազմակերպության կողմից իրականացվող «Իրավական նախաձեռնություններ, ընտրություններ 2007» նախաձեռնության շրջանակներում «Թեժ գիծ» իրավական խորհրդատվության մասին դրամաշնորհառու կազմակերպություններն իրազեկել են իրենց շահառուներին և համայնքների բնակիչներին: Իրենց ծրագրային գործողությունների ընթացքում տարածել են «Թեժ գիծ» իրավական խորհրդատվության մասին տեղեկատվություն պարունակող 10000 օրինակ կաշուն թերթիկ և 6000 տեղեկատվական թերթիկ: «Թեժ գիծ» իրավական խորհրդատվության մասին բնակչությանն իրազեկել է նաև ՔՇՊԱԾ ԸԾ դրամաշնորհառու «Որոտանյան Ղողանջներ» ՍՊԸ-ն՝ Սյունի TV հեռուստաընկերության միջոցով: Ընտրությունների օրը դրամաշնորհառու կազմակերպություններն աշխատել են նախաձեռնության շրջանակներում գործող արագ արձագանքող խմբերում և իրավական աջակցություն են ցուցաբերել քաղաքացիներին: Իրենց ծրագրային գործողությունների ընթացքում ՀԿ-ները ցուցադրել

են ABA-CELL կազմակերպության կողմից տրամադրած «Իրավունքի այբուբեն» ֆիլմաշարի DVD տարբերակը, որի 8-12-րդ ֆիլմերը վերաբերում են ընտրություններին:

➤ **Համագործակցություն IFES կազմակերպության հետ**

Դրամաշնորհառու կազմակերպությունները խորհրդարանական ընտրություններին աջակցող դրամաշնորհների իրականացման ընթացքում տարածել են IFES-ի կողմից տրամադրված «Ստուգի՛ր քո անունը ընտրացուցակներում» պաստառները եւ «Ստուգի՛ր քո անունը ընտրացուցակներում» էլեկտրոնային ցուցակները, որը հնարավորություն է տվել ընտրական իրավունք ունեցող քաղաքացիներին ՀՀ-ների աջակցությամբ ստուգել ընտրացուցակներում իրենց տվյալների ճշգրտությունը: «Աշխատանք եւ հայրենիք» ՀՀ-ն կազմակերպության ֆինանսական աջակցությամբ «Ընտրողների ցուցակների խորհրդատվական հանձնաժողով» ծրագրի շրջանակներում 30 կամավորի անմիջական մասնակցությամբ իրականացրել է ընտրացուցակների ճշգրտման աշխատանքներ Վայոց Ձորի մարզում: Դրամաշնորհառուների կողմից շահառուների շրջանում տարածվել են նաեւ IFES-ի կողմից ստացած տպագիր նյութերը՝ ԱԺ ընտրություններին մասնակից բոլոր կուսակցությունների նախընտրական ծրագրերը ներառող գրքույկը, որը հնարավորություն է տվել հանդիպումների մասնակիցներին իրազեկել 2007թ. խորհրդարանական ընտրություններին մասնակցող կուսակցությունների նախընտրական ծրագրերին:

➤ **Համագործակցություն Կրթության զարգացման ակադեմիայի /AED/ «Երիտասարդության եւ համայնքային գործողություններ» ծրագրի հետ**

Նախաձեռնությունների իրականացման ընթացքում ՀՀ-ները համագործակցել են Կրթության զարգացման ակադեմիայի /AED/ «Երիտասարդության եւ համայնքային գործողություններ» ծրագրի Սյունիքի համակարգողի հետ: Ծրագրային գործողությունների ընթացքում /դասընթացներ եւ հանդիպումներ նախընտրական շտաբների ներկայացուցիչների հետ/ մասնակից են դարձրել նաեւ կազմակերպության երիտասարդական եւ համայնքային կենտրոնների անդամներին, ծրագրային հանդիպումները ծրագրի շահառու համայնքներում անց են կացրել AED կենտրոններում:

Նախագահական ընտրություններին աջակցող նախաձեռնություններ

Սյունիքի եւ Վայոց Ձորի մարզերում նախագահական ընտրություններին աջակցող 6 նախաձեռնություններից 3-ը իրականացվել է համագործակցությամբ:

09.

Համագործակից կազմակերպությունների անունները	<ul style="list-style-type: none"> ➤ Երիտասարդական գիտա-մշակութային» ՀԿ ➤ «Քաղաքացիական հասարակության զարգացման կենտրոն» կրթական, սոցիալ-տնտեսական, համայնքի աջակցման ՀԿ ➤ «Նոր Վայոց Ձոր» հայրենասիրական ՀԿ ➤ «Կապանի գործարար կանանց հասարակություն» ՀԿ
Ծրագրի անունը	ժողովրդավար ընտրությամբ՝ հզոր պետություն
Պայմանագրի համարը	# ARM-EPG-2007-01
Ծրագրի տեւողությունը	Հոկտեմբեր, 2007թ. – մարտ, 2008թ.
Ծրագրի իրականացման վայրը	ՀՀ, Սյունիքի եւ Վայոց Ձորի մարզեր
Դրամաշնորհի չափը	15 017 000 դրամ
Համագործակցության ներդրումը	765 000 դրամ
Այլ ներդրում	1 650 000 դրամ
Ընդհանուր գումարը	17 432 000 դրամ
Էլ. փոստը	ysco@syunik.am, cscsd@vandex.ru, arthar71@freenet.am, womenbizsociety@yahoo.com
Ծրագրի նպատակը	Բարձրացնել ընտրողի եւ հանրության, ինչպես նաեւ հատուկ թիրախային խմբերի՝ երիտասարդների եւ կանանց իրազեկությունը եւ մասնակցությունը 2008թ. Նախագահական ընտրություններին եւ դիտորդության միջոցով ապահովել նրանց կողմից ընտրական գործընթացների վերահսկողությունը:

Ծրագրի արդյունքը
 Ծրագրի արդյունքում Սյունիքի եւ Վայոց Ձորի մարզերի 1700 երիտասարդ եւ 1300 կին դասընթացների միջոցով իրազեկվել են ԸՕ-ի եւ նրանում արված նոր փոփոխություններին:
 Ծրագրի իրականացման ընթացքում կազմակերպվել է դիտորդական դպրոց, որտեղ հայտ ներկայացրած երիտասարդների համար կազմակերպվել է համապատասխան ուսուցում: Երկարաժամկետ 8 եւ կարճաժամկետ 89 դիտորդներ ընտրությունների օրը Սյունիքի եւ Վայոց Ձորի տարբեր ընտրատեղամասերում իրականացրել են դիտորդություն: Տեղական դիտորդական դպրոցի ուսուցման գործընթացում դրամաշնորհառուներին մեկնել է նաեւ ԸԾ դրամաշնորհառուների կամավորներին:
 Ամենակարեւոր ձեռքբերումներից մեկն էլ դպրոցի շրջանավարտների կողմից 2007 նախագահական ընտրությունների ժամանակ անկողմնակալ եւ չեզոք դիտորդական առաքելության իրականացումն էր:
 Ընտրություններից հետո դիտորդների կատարած արձանագրումները խմբագրվել եւ տպագրվել են «Առավոտ» թերթում, տարբեր էլեկտրոնային կայքերում: Այդ կերպ հասարակությանը հասու է դարձել Սյունիքի եւ Վայոց Ձորի մարզերում ԳԳ նախագահական ընտրությունների ընթացքը: Այսպիսի դիտորդների ներկայությունը ընտրատեղամասերում կանխարգելում էր ընտրախախտումների եւ ընտրակեղծիքների իրականացումը:

10.

Համագործակից կազմակերպությունների անունները	<ul style="list-style-type: none"> ➤ «Գորիսի անգլերենի ուսուցման կենտրոն» կրթական ՀԿ (ԳԱՈՒԿ) ➤ «Գորիսի սերունդ» երիտասարդական ՀԿ
Ծրագրի անունը	Կանայք աջակցում են ժողովրդավար ընտրական գործընթացներին
Պայմանագրի համարը	# ARM-EPG-2007-02
Ծրագրի տեւողությունը	Նոյեմբեր, 2007թ. – մարտ, 2008թ.
Ծրագրի իրականացման վայրը	ՀՀ, Սյունիքի եւ Վայոց Ձորի մարզեր
Դրամաշնորհի չափը	9 879 400 դրամ
Ընդհանուր գումարը	9 879 400 դրամ
Էլ. փոստը	silvaqetc@yahoo.com
Ծրագրի նպատակը <i>Բարձրացնել Սյունիքի եւ Վայոց Ձորի մարզերում կանանց իրազեկությունն ու մասնակցությունը՝ ընտրական գործընթացներում՝ խթանելով ազատ եւ արդար ընտրությունների անցկացումը:</i>	
Ծրագրի արդյունքը Համագործակից կազմակերպությունների միջոցով կազմակերպվել եւ անց է կացվել իրազեկման 64 դասընթաց Սյունիքի եւ Վայոց Ձորի մարզերի 2460 կանանց եւ աղջիկների մասնակցությամբ: Համագործակցությունը կազմակերպել է քաղաքացիական հանդիպումներ նախագահի թեկնածուների ներկայացուցիչների եւ կանանց մասնակցությամբ: Միջոցառմանն առավել շատ շահառու ներգրավելու նպատակով «Գորիսի անգլերեն ուսուցման կենտրոն» ՀԿ-ն Վայք քաղաքում հանդիպումը կազմակերպել է «Երիտասարդ սերունդ» ՀԿ-ի հետ: Միջոցառմանը մասնակցել են 40-45 կին, երիտասարդ աղջիկ եւ Վայք քաղաքում ներկայացուցչություն ունեցող 4 կուսակցությունների ներկայացուցիչներ: Քաղաքացիական հանդիպումներից եւ դասընթացներից հետո բավականին մեծացել է վստահությունը եւ համագործակցությունը շահառուների եւ համագործակցության անդամ ՀԿ-ների միջեւ: Շահառուները սկսել են կարելորդ քաղաքացիական հանդիպումները, երկխոսությունները: Հետաքրքրականն այն է, որ ծրագրի երկրորդ մասում արդեն շահառուներն իրենք էին հանդես գալիս ՏԻՄ ներկայացուցիչների մասնակցությամբ հանդիպումներ, քննարկումներ կազմակերպելու, երկխոսություն ծավալելու առաջարկներով: Կանայք իրենց հուզող հիմնախնդիրները ներկայացնելուց բացի, հանդես էին գալիս այդ հիմնախնդիրների լուծման ուղիների իրենց կողմից առաջարկված տարբերակներով՝ դրանք գրավոր ներկայացնելով քաղաքացիական հանդիպումների ժամանակ: Ծրագրով խնայված գումարների հաշվին համագործակցությունը, նախապես համաձայնեցնելով ԸԾ բաժնի հետ, կազմակերպել եւ անց է կացրել հետընտրական 7 հանդիպում Սյունիքի եւ Վայոց Ձորի մարզերի 7 քաղաքների կանանց ակտիվ խմբերի եւ համագործակից կազմակերպությունների մասնակցությամբ: Այդ հանդիպումները բացի իրազեկության նպատակին ծառայելուց նաեւ հնարավորություն են տվել նրանց իրենց հուզող հիմնախնդիրների փաթեթը ներկայացնել նախագահի թեկնածուների ներկայացուցիչներին: Համագործակցությունը ծրագրի ընթացքում վերապատրաստել է 56 լիդեր աղջիկ, որոնք ընտրությունների օրը իրականացրել են ընտրական գործընթացների արտաքին դիտարկում:	

11.

Համագործակցության անվանումը/Համագործակց կազմակերպությունների անունները	Ժողովրդավարության դեսպաններ <ul style="list-style-type: none"> ➤ «Սիսիանի զարգացման կենտրոն» ՀԿ ➤ «Երիտասարդ սերունդ» ՀԿ ➤ «Լեռնեցիների առողջ սերունդ» ՀԿ
Ծրագրի անունը	Երիտասարդները հանուն ժողովրդավարության
Պայմանագրի համարը	# ARM-EPG-2007-03
Ծրագրի տեւողությունը	Նոյեմբեր, 2007թ. – մարտ, 2008թ.
Ծրագրի իրականացման վայրը	ՀՀ, Սյունիքի եւ Վայոց Ձորի մարզեր
Դրամաշնորհի չափը	17 888 853 դրամ
Համագործակցության ներդրումը	2 360 000 դրամ
Ընդհանուր գումարը	20 248 853 դրամ
Էլ. փոստը	Sdc_ngo@yahoo.com, karin_m@rambler.ru, aramamaryan@yandex.ru
Ծրագրի նպատակը	Նպաստել ՀՀ Սյունիքի եւ Վայոց Ձորի մարզերի երիտասարդների եւ ուսանողների իրազեկմանն ու ակտիվ, իմաստավորված մասնակցության մակարդակի բարձրացմանը 2008թ. նախագահական ընտրական գործընթացներին:
Ծրագրի արդյունքը	ՀՀ Սյունիքի եւ Վայոց Ձորի մարզերի 7 քաղաքային եւ 23 գյուղական համայնքներում կոալիցիան կարողացել է ճշգրտել 18-ից 30 տարեկան 22 800 երիտասարդների եւ 8 900 ուսանողների ընդգրկվածությունն ընտրական ցուցակներում: Ընտրացուցակներում վերականգնվել են չընդգրկված շահառուների նվազագույնը 40 տոկոսի ընտրական իրավունքները: ՀՀ Սյունիքի եւ Վայոց Ձորի մարզերի 30 համայնքներում ավելի քան 4 500 երիտասարդ եւ ուսանող ուղղակիորեն իրազեկվել են ՀՀ նախագահական ընտրությունների ընտրակարգին եւ ընտրական գործընթացներին: Ծրագրի շահառու ուսանողների եւ 18-ից 30 տարեկանների մեծ մասն ակտիվորեն են մասնակցել ընտրական գործընթացներին: Ծրագրի ամբողջ ընթացքում ավելի քան 2 800 երիտասարդ եւ ուսանող ստացել են ընտրական գործընթացների եւ ընտրակարգի վերաբերյալ խորհրդատվություն: Ընտրական գործընթացների վեահսկման աշխատանքներին մասնակցել են շուրջ 500 երիտասարդ եւ ուսանող:

12.

Կազմակերպության անվանումը	«Գորիսի մամուլի ակումբ» ՀԿ
Ծրագրի անունը	Երկխոսություն
Պայմանագրի համարը	# ARM-EPG-2007-04
Ծրագրի տեւողությունը	Նոյեմբեր, 2007թ. – մարտ, 2008թ.
Ծրագրի իրականացման վայրը	ՀՀ, Սյունիքի մարզ, Գորիսի տարածաշրջան
Դրամաշնորհի չափը	3 639 350 դրամ
Ընդհանուր գումարը	3 639 350 դրամ
Էլ. փոստը	shso9@yahoo.com
Ծրագրի նպատակը	Երկխոսության հնարավորություն ստեղծել Գորիսի 15 համայնքների ընտրողների եւ 2008թ. ՀՀ նախագահական ընտրությունների թեկնածուների, այն կուսակցությունների ներկայացուցիչների միջեւ, ովքեր առաջադրում կան պաշտպանում են թեկնածուներին:
Ծրագրի արդյունքը	Դրամաշնորհառուն ծրագրի շրջանակներում ընդգրկված համայնքներում կազմակերպելով քննարկումներ, հանդիպումներ, զրույցներ՝ մարդկանց հետ, հրատարակելով հոդվածներ եւ դրանք տարածելով կուսակցությունների, տեղական ինքնակառավարման մարմինների աշխատակազմերի եւ ընտրողների շրջանում կարողացել է Գորիսի տարածաշրջանի 15 համայնքների խնդիրներին/խնդիրներ եւ ոռոգման ջրամատակարարում, արտագաղթ, բնակչության զբաղվածություն, ծանապարհների բարեկազում, գյուղական դպրոցների կարիքներ/ հասարակական հնչեղություն հաղորդել, ինչպես նաեւ դրանց մասին տեղեկացնել 2008թ. ՀՀ նախագահական ընտրությունների թեկնածուներին, նրանց առաջադրած եւ պաշտպանող կուսակցություններին: Շուրջ 10 000 ընտրող ծրագրի շնորհիվ հնարավորություն է ունեցել իրենց խնդիրների լուծման մասին լսել թեկնածուների եւ նրանց պաշտպանող կուսակցությունների դիրքորոշումները:

13.

Կազմակերպության անվանումը	«Որոտանյան դողանջներ» ՄՊԸ /«Սյունի» հեռուստաընկերություն/
Ծրագրի անունը	Ընտրողների իրազեկման բարձրացում
Պայմանագրի համարը	# ARM-EPG-2007-05
Ծրագրի տեւողությունը	Նոյեմբեր, 2007թ. – փետրվար, 2008թ.
Ծրագրի իրականացման վայրը	ՀՀ, Սյունիքի մարզ, Սիսիանի տարածաշրջան
Դրամաշնորհի չափը	4 354 000 դրամ
Կազմակերպության ներդրումը	2 560 000 դրամ
Ընդհանուր գումարը	6 914 000 դրամ
Էլ. փոստը	sisiantv@mail.ru
Ծրագրի նպատակը	Բարձրացնել ընտրողների իրազեկության մակարդակը, խրախուսել հասարակության ակտիվությունը, ինչպես նաեւ խթանել կանանց եւ առաջին անգամ ընտրողների ակտիվ մասնակցությունը ընտրություններին: Հեռուստաընկերության գործունեությամբ նպաստել ընտրական գործընթացների թափանցիկությանն ու ժողովրդավարությանը:
Ծրագրի արդյունքը	Սիսիանի տարածաշրջանի ընտրողներն իրազեկվել են ընտրական գործընթացների մասին: «Սյունի» հեռուստաընկերության հեռուստաեթերը 2008թ. նախագահական ընտրությունների քարոզարշավի համար մատչելի էր եւ ստեղծված էր հավասարազոր պայմաններ թեկնածուների/կուսակցությունների համար: Ծրագրի արդյունքում, ըստ կազմակերպության կողմից անցկացված հարցումների վերլուծության, բավականին նվազել է ընտրողների անտարբերությունը եւ անվստահությունը, դա են վկայում ընտրողների կողմից ընտրություններին մասնակցության ակտիվությունն ու բարձր տոկոսները: Դրամաշնորհառուի կողմից ընտրացուցակների սեփական շենքերից փակցնելը բավականին արդյունավետ էր, որովհետեւ մարդիկ հնարավորություն են ունեցել առանց ընտրատեղամասեր հասնելու, ճշտելու իրենց անունների առկայությունը ընտրացուցակներում: Հաջողությամբ իրականացվել է իրազեկման հեռուստահաղորդումների եւ հոլովակների պատրաստումն ու հեռարձակումը, որի նկարահանման աշխատանքներին մասնակցել են «Սիսիանի զարգացման կենտրոն» ՀԿ-ի կամավորները: Տեղացիների մասնակցությունը տեսահոլովակների նկարահանումներին հնարավորություն է տվել ապահովելու ավելի մեծ հեռուստալսարան: Կին ընտրողների մասնակցությամբ հեռուստահաղորդումները դրական արձագանք են գտել կին ընտրողների շրջանում: Դա են վկայում հաղորդումներին մասնակից կանանց ուղիղ եթերում ուղղված հեռախոսազանգերը:

14.

Կազմակերպության անվանումը	Սյունիքի մարզի հաշմանդամների «Խարխախ» ՀԿ
Ծրագրի անունը	Ժողովրդավար պետությունում՝ ժողովրդավար ընտրություններ
Պայմանագրի համարը	# ARM-EPG-2007-06
Ծրագրի տեւողությունը	Նոյեմբեր, 2007թ. – մարտ, 2008թ.
Ծրագրի իրականացման վայրը	ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Սիսիան
Դրամաշնորհի չափը	4 029 000 դրամ
Կազմակերպության ներդրումը	500 000 դրամ
Ընդհանուր գումարը	4 529 000 դրամ
Էլ. փոստը	Khariskh@mail.ru
Ծրագրի նպատակը	2008թ. նախագահական ընտրություններում 60-70%-ով բարձրացնել Սյունիքի մարզի հաշմանդամների մասնակցության մակարդակը՝ հաշմանդամների իրազեկության բարձրացման, վստահության վերականգման եւ ընտրատեղամասերի մատչելիության համապատասխանեցման միջոցով:
Ծրագրի արդյունքը	Սկզբնապես նախագահի թեկնածուների նախընտրական շտաբների ներկայացուցիչներ չէին կարելուրում հանդիպումները հաշմանդամների հետ, պասիվ մասնակցություն էին ցուցաբերում եւ ֆորումներին, եւ քննարկումներին՝ հաշմանդամներին համարելով պասիվ ընտրազանգված: Սակայն ծրագրի վերջում կազմակերպությունը կարողացավ եւ հաշմանդամների, եւ թեկնածուների ներկայացուցիչների մոտ վերաբերմունքի փոփոխության հասնել: Արդյունքում կազմակերպության դիտարկումներով Սյունիքի մարզի 5 500 հաշմանդամ-ընտրողները, կարելուրելով իրենց ձայնը, ակտիվ մասնակցություն են ցուցաբերել 2008թ. նախագահական ընտրություններին: Կազմակերպությունը կարողացել է նաեւ ծրագրի իրականացման ընթացքում հասնել նրան, որ նախնական երկրորդ հարկում գտնվող 58 ընտրատեղամասից 36-ը առաջին հարկ տեղափոխվեն՝

հաշմանդամ-ընտրողների համար ազատ տեղաշարժվելու հնարավորություն ստեղծելով: Հաշմանդամ ընտրողներն իրենց ձայնը կարելի էր ցուցաբերելու գատ, մասնակցելով կազմակերպության կողմից կազմակերպված սեմինարներին, տեղեկանալով մասնակից թեկնածուների կյանքին եւ գործունեությանը, իրենց ընտրությունը կատարել եւ մտածված եւ կշռադատված:

Համագործակցություն – Նախագահական ընտրություններ

➤ Համագործակցություն NDI կազմակերպության Եղեգնածորի կենտրոնի հետ

«Գորիսի անգլերեն ուսուցման կենտրոն» ՀԿ-ն իր ծրագրային գործողությունների իրականացման ընթացքում Եղեգնածոր քաղաքում ակտիվ ներգրավել է կենտրոնի շահառուներին՝ իրականացնելով նրանց մասնակցությամբ իրազեկման դասընթացներ, քաղաքացիական հանդիպումներ:

➤ Համագործակցություն «Իրավական նախաձեռնություններ, ընտրություններ 2008»/ABA CELL ծրագրի հետ

«Իրավական նախաձեռնություններ, ընտրություններ 2008» ծրագրի շրջանակներում ԲՇՊԱԾ-ի ԸԾ Սյունիք եւ Վայոց Ձորի մարզերի դրամաշնորհառուներն իրենց ծրագրային գործողությունների ընթացքում եւ դրանցից դուրս կամավորների միջոցով տարածել են «Թեժ գիծ» իրավական աջակցության մասին տեղեկատվություն՝ բուկլետների, կաչուն թերթիկների, պաստառների միջոցով: «Թեժ գիծ» մասին հոլովակը ցուցադրվել է նաեւ տեղական «Սյունի» եւ «Լաստ» հեռուստաընկերություններով: ԸԾ դրամաշնորհառուներ «Քաղաքացիական հասարակության զարգացման կենտրոն», «Լեռնեցիների առողջ սերունդ», «Սիսիանի զարգացման կենտրոն», «Նոր Վայոց Ձոր», «Երիտասարդ սերունդ», «Գորիսի անգլերենի ուսուցման կենտրոն» ՀԿ-ների ներկայացուցիչները ներգրավված են եղել Սյունիքի եւ Վայոց Ձորի մարզերի 6 քաղաքների արագ արձագանքող խմբերում եւ ընտրությունների օրը շրջել են ընտրատեղամասերում եւ իրավական աջակցություն են ցուցաբերել քաղաքացիական հասարակության բոլոր խմբերին:

➤ Համագործակցություն «Ա1+»-ի հետ

«Ա1+»-ի հետ համագործակցությունը եւ նրանց հաղորդումների ցուցադրումը «Սյունի» հետուստատեսությամբ բավականին դրական է անդրադարձել ծրագրի արդյունավետությանը /հեռուստաընկերության կողմից պատրաստված արտադրանքի նկատմամբ վստահության ձեռքբերման առումով /:

➤ Համագործակցություն IFES կազմակերպության հետ

IFES կազմակերպության աջակցությամբ «Երիտասարդները հանուն ժողովրդավարության» կուլիցիոն ծրագրի դրամաշնորհառուները /«Լեռնեցիների առողջ սերունդ», «Սիսիանի զարգացման կենտրոն» եւ «Երիտասարդ սերունդ» ՀԿ-ներ/ կազմակերպվել են դասընթացներ Սյունիքի եւ Վայոց Ձորի երեք քաղաքների /Սիսիան, Գորիս եւ Եղեգնածոր/ կամավորների համար: Նախաձեռնության շրջանակներում կազմակերպությունների կամավորների անմիջական մասնակցությամբ իրականացվել է ընտրացուցակների ճշգրտման աշխատանքներ: Կուլիցիայի անդամ երեք կազմակերպությունները ճշգրտել են Սիսիան, Գորիս, Եղեգնածոր քաղաքների եւ հարակից 29 համայնքներում ընտրողների ամբողջական ցուցակները: Դրամաշնորհառու կազմակերպությունները նախաձեռնությունների իրականացման ընթացքում տարածել են IFES-ի կողմից տրամադրված «Ստուգիչ քո անունը ընտրացուցակներում» պաստառները եւ «Ստուգիչ քո անունը ընտրացուցակներում» էլեկտրոնային ցուցակները, որը հնարավորություն է տվել համայնքների բնակչությանը ՀԿ-ների աջակցությամբ ընտրացուցակներում ստուգել իրենց տվյալները:

➤ Համագործակցություն Կրթության զարգացման ակադեմիայի /AED/ «Երիտասարդության եւ համայնքային գործողությունների» ծրագրի հետ

CASP-ի ԸԾ դրամաշնորհառուները համագործակցել են Կրթության զարգացման ակադեմիայի /AED/ «Երիտասարդության եւ համայնքային գործողությունների» ծրագրի Սյունիքի համակարգողի հետ, որի արդյունքում դրամաշնորհառու ՀԿ-ներն իրենց կողմից իրականացված ծրագրային գործողությունների մեջ ներգրավել են նաեւ համայնքային ակտիվ երիտասարդական խմբերի ներկայացուցիչներին:

➤ Համագործակցություն IREX Ձանգվածային լրատվամիջոցների աջակցության ծրագրի հետ

Մի շարք կազմակերպություններ մասնակցել են IREX Ձանգվածային լրատվամիջոցների աջակցության ծրագրի շրջանակներում կազմակերպված ընտրությունների լուսաբանման տեխնիկային վերաբերող թեմաներով դասընթացաշարին եւ խորհրդատվություններին: Ծրագրի շրջանակում կազմակերպվել է մրցույթ, որի «Նախագահական ընտրարշավի լուսաբանում մարզերում եւ համայնքներում» խորագրում 1-

ին մրցանակը շնորհվել է «Գորիսի մամուլի ակումբ» ՀԿ-ի ծրագրի լրագրողին՝ ԲՇՊԱԾ ընտրական ծրագրի շրջանակներում հրատարակված «Սյունիքի ամենամեծ գյուղը մի շարք խնդիրներ ունի» հոդվածի համար: Նույն ծրագրի շրջանակներում տպագրված այլ հոդվածների համար պատվոգրեր են ստացել ծրագրի երկու անդամներ:

➤ **Համագործակցություն դրամաշնորհառու կազմակերպությունների միջև**

Ծրագրի իրականացման ընթացքում դրամաշնորհառու կազմակերպությունները համագործակցել են միմյանց հետ՝ աջակցելով ծրագրային գործողությունների արդյունավետ իրականացմանը: «Գորիսի ստեղծագործողներ», «Սիսիանի զարգացման կենտրոն» եւ «Իրավունքների տեղեկատվական կենտրոն» ՀԿ-ների եւ «Որոտանյան դոկանջներ» ՍՊԸ-ի համագործակցության արդյունքում ստեղծվել է ընտրություններում երիտասարդների ակտիվ մասնակցությունը խթանող «Գիտակցում ենք, մասնակցում ենք եւ ընտրում ենք մեր ապագան» միասնական իրազեկման բուկլետը, որը տարածվել է ծրագրային գործողությունների ընթացքում: Դրամաշնորհառու կազմակերպություններն միմյանց աջակցել են հետեւյալ միջոցառումների կազմակերպման ընթացքում՝

- Իրազեկման դասընթացներ,
- «Ուրախների եւ հնարամիտների ակումբ» ընտրական թեմայով մրցույթ,
- «Աշխատանք եւ Հայրենիք» ՀԿ-ի կողմից «Ընտրություններ, երգիծական պլակատներ» մրցույթի աշխատանքների եւ ցուցահանդեսի կազմակերպման աջակցությունը Սյունիքի եւ Վայոց Ձորի 5 /Կապան, Գորիս, Սիսիան, Վայք եւ Եղեգնաձոր/ քաղաքներում,
- համամասնական եւ մեծամասնական ընտրակարգով առաջադրված թեկնածուների հետ միասնական հանդիպումների կազմակերպում,
- իրազեկման նյութերի տարածում եւ այլն:

ՏԻՄ ընտրություններին աջակցող նախաձեռնություններ

15.

Համագործակց կազմակերպությունների անունները	<ul style="list-style-type: none"> ➤ «Գորիսի անգլերենի ուսուցման կենտրոն» կրթական ՀԿ (ԳԱՈՒԿ) ➤ «Գորիսի սերունդ» երիտասարդական ՀԿ
Ծրագրի անունը	Կանայք գործում են
Պայմանագրի համարը	# ARM-EPG-2008-05
Ծրագրի տեւողությունը	Սեպտեմբեր – հոկտեմբեր, 2008թ.
Ծրագրի իրականացման վայրը	ՀՀ, Սյունիքի մարզ - Գորիս, Տաթևի, Խոզնավար, Հարժիս, Տեղ համայնքներ ՀՀ, Վայոց Ձորի մարզ - Ջերմուկ, Գնդեվազ, Կեչուտ համայնքներ
Դրամաշնորհի չափը	1 693 000 դրամ
Ընդհանուր գումարը	1 693 000 դրամ
Էլ. փոստը	silvaget@yahoo.com
Ծրագրի նպատակը	Խթանել ազատ եւ արդար ընտրությունները՝ բարձրացնելով կանանց մասնակցությունն ընտրական գործընթացներում եւ ընդլայնելով երկխոսությունը կանանց եւ ՏԻՄ թեկնածուների միջև:
Ծրագրի արդյունքը	<p>Ծրագրի առաջին փուլում իրականացվել է բաց միկրոֆոն ակցիա՝ վերը նշված համայնքներում, որտեղ պատահական ընտրությամբ ընտրված կանայք միկրոֆոնի առաջ ներկայացրել են իրենց համայնքներում առկա եւ իրենց հուզող տեղական նշանակության հարցերը: Հարցման ընթացքը նկարահանվել է:</p> <p>Ընդհանուր 8 ակցիաներին մասնակցել է 50 կին: Նույն 8 համայնքներում կազմակերպվել եւ անց են կացվել հանրային հանդիպումներ՝ ՏԻՄ թեկնածուների /գյուղապետերի եւ ավագանու անդամների/ մասնակցությամբ: Բոլոր հանդիպումների ժամանակ մասնակիցների համար ցուցադրվել են «Բաց միկրոֆոն» ակցիայի ժամանակ նկարահանված տեսանյութերը, որտեղ կանայք ներկայացրել էին իրենց հուզող տեղական նշանակության հարցերը: Հանդիպումներին մասնակից կանայք լրացուցիչ հարցեր են ուղղել թեկնածուներին եւ ստացել պատասխաններ:</p> <p>Այս հանդիպումները հնարավորություն են ստեղծել կանանց համար լսելու իրենց հիմնախնդիրների լուծման տարբերակները եւ նպաստել է նրանց կողմնորոշվելու եւ իմաստավորված ընտրություն կատարելուն:</p>

«Կանայք գործում են» ծրագրի շրջանակներում 74-ները կարողացել են ապահովել երկխոսություն ՏԻՄ թեկնածուների եւ կին շահառուների միջեւ ծրագրում ներառված 8 համայնքներում: 7անրային հանդիպումների ընթացքը ցույց է տվել, որ համայնքի անդամներն այլեւս պասիվ քվեարկողներ չեն եւ հասկանում են, որ իրենց ընտրյալները պետք է հաշվետու լինեն իրենց: Գորիսի հանդիպման ժամանակ խոսվել է Ավանգարդ թաղամաս տանող ճանապարհի անմխիթար վիճակի մասին եւ հաջորդ օրն իսկ սկսվել է նշված ճանապարհի վերանորոգման աշխատանքները:

16.

Կազմակերպության անվանումը	«Գորիս-Բումերանգ» 74
Ծրագրի անունը	Մենք միասին ենք ապրում
Պայմանագրի համարը	# ARM-EPG-2008-06
Ծրագրի տեւողությունը	Սեպտեմբեր – հոկտեմբեր, 2008թ.
Ծրագրի իրականացման վայրը	77, Սյունիքի մարզ
Դրամաշնորհի չափը	1 972 000 դրամ
Կազմակերպության ներդրումը	775 000 դրամ
Ընդհանուր գումարը	1 747 000 դրամ
Էլ. փոստը	bum_goris@yahoo.com
Ծրագրի նպատակը	Քարծրացնել 77 Սյունիքի մարզի 6 քաղաքային համայնքների (Կապան, Գորիս, Սիսիան, Մեղրի, Ագարակ, Քաջարան) հաշմանդամ եւ հաշմանդամ երեխաներ ունեցող ընտանիքների ընտրողների դերն ու ներգրավվածությունը 2008թ. ՏԻՄ ընտրությունների գործընթացներում:
Ծրագրի արդյունքը	<p>74-ի կողմից Սյունիքի մարզի 6 քաղաքային համայնքներում կազմակերպվել եւ անց են կացվել ֆորումներ՝ հաշմանդամ եւ հաշմանդամ երեխա ունեցող ընտանիքների անդամների մասնակցությամբ: Նպատակներն էին.</p> <ul style="list-style-type: none"> - 74-ի կողմից «Ես կարող եմ» խորհրդարանական ընտրություններին աջակցող ծրագրի շրջանակներում շահառուների մասնակցությամբ վերհանված հիմնախնդիրները քննարկել եւ դրանցից առանձնացնել ՏԻՄ մակարդակում լուծվելիքները, - ներկայացնել մասնակիցներին ՏԻՄ գործառույթները, - մշակել փաթեթ-առաջարկ ավագանու եւ քաղաքապետի թեկնածուների հետ հանդիպում-քննարկումներին ներկայացնելու համար: <p>Յուրաքանչյուր հանդիպմանը մասնակցել են 28-35 շահառու: 7անդիպումների ընթացքում համակարգվել են հաշմանդամների եւ հաշմանդամ երեխա ունեցող շահառուների ՏԻՄ մակարդակով ներկայացվելիք հիմնախնդիրները: Շահառուների անունից, համախոհ եւ համագործակից կազմակերպությունների կողմից պատրաստվել են փաթեթ-առաջարկներ՝ ուղերձ թեկնածուներին (որը ներառում էր՝ հաշմանդամների սոցիալական պաշտպանվածության մասին 77 օրենքը, տարածաշրջանի հաշմանդամների եւ հաշմանդամ երեխա ունեցող ընտանիքների ընտրողների թիվը, հանդիպումներին մասնակցելու նամակ – հրավերը, ուղերձ): 7անդիպումները նկարահանվել եւ լուրերի տեսքով ցուցադրվել են Կապանի «Խուստուկ» եւ «Սոսի», Գորիսի «Լաստ» եւ Սիսիանի «Սյունի» հեռուստաընկերությունների միջոցով:</p> <p>Ընտրությունների օրը «Գորիս Բումերանգ» 74-ի կողմից վարձակալվել են մեքենաներ եւ առավել սահմանափակ ֆիզիկական հնարավորություններով հաշմանդամների համար կազմակերպվել նրանց տեղափոխությունը: Սյունիքի մարզի Կապան, Գորիս, Սիսիան, Մեղրի, Ագարակ, Քաջարան 6 քաղաքներում նման աջակցություն է ցուցաբերվել 272 շահառուի:</p>

17.

Կազմակերպության անվանումը	«Լեռնեցիների առողջ սերունդ» 74
Ծրագրի անունը	Իմ քվեն իմ համայնքին
Պայմանագրի համարը	# ARM-EPG-2008-07
Ծրագրի տեւողությունը	Սեպտեմբեր – հոկտեմբեր, 2008թ.
Ծրագրի իրականացման վայրը	77, Սյունիքի մարզի Գորիս, Կապան, Արծվանիկ, Սյունիք, Վերիշեն, Խնձորեսկ, Կորնիձոր, Տեղ, Քարահունջ, Շինուհայր, 7արթաշեն, Խնածախ համայնքներ
Դրամաշնորհի չափը	2 057 480 դրամ
Կազմակերպության ներդրումը	658 000 դրամ
Ընդհանուր գումարը	2 71 5 480 դրամ
Էլ. փոստը	aramamaryan@yandex.ru

Ծրագրի նպատակը	Բարձրացնել ՀՀ Սյունիքի մարզի Գորիս, Կապան քաղաքների եւ 10 գյուղական համայնքների՝ Գորիսի տարածաշրջանի 8 գյուղական համայնքների (Վերիշեն, Խնձորեն, Կորնիձոր, Տեղ, Քարահունջ, Շինուհայր, Հարթաշեն, Խնածախ) եւ Կապանի տարածաշրջանի 2 գյուղական համայնքների (Սյունիք, Արծվանիկ) 18-30 տարեկան երիտասարդների հետաքրքրվածությունը եւ իմաստավորված մասնակցությունը տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին:
Ծրագրի արդյունքը	Ծրագրի շահառու համայնքներում կազմակերպվել եւ անց են կացվել քննարկումներ երիտասարդների մասնակցությամբ, որի նպատակն էր բացահայտել տվյալ համայնքում առկա եւ երիտասարդներին հուզող համայնքային հիմնախնդիրները: Յուրաքանչյուր հանդիպման մասնակցել է 25-30 երիտասարդ: Հանդիպումները հնարավորություն են տվել երիտասարդների կողմից վերհանել տվյալ համայնքում առկա հիմնախնդիրները եւ դրանք քննարկել՝ թեկնածուների հետ: Կազմակերպության կողմից կազմակերպվել եւ անց է կացվել 11 քննարկում եւ մեկ ընդհանուր հանդիպում՝ Կապան քաղաքում, որին մասնակցել են միայն ավագանու թեկնածուները (քաղաքապետի թեկնածուները հրաժարվել են մասնակցել), մեկ ընդհանուր հանդիպում Գորիս քաղաքում՝ ավագանու թեկնածուների մասնակցությամբ: Իսկ գյուղական 9 համայնքներում կազմակերպված հանդիպումներին մերկա են եղել համայնքի ավագանու անդամները եւ գյուղապետերի թեկնածուները:

18.

Կազմակերպության անվանումը	«Նոր Վայոց Ձոր» հայրենասիրական ՀԿ
Ծրագրի անունը	Ժողովրդավար ընտրություններ
Պայմանագրի համարը	# ARM-EPG-2008-08
Ծրագրի տեւողությունը	Սեպտեմբեր – հոկտեմբեր, 2008թ.
Ծրագրի իրականացման վայրը	ՀՀ, Վայոց Ձորի մարզ
Դրամաշնորհի չափը	1 980 200 դրամ
Կազմակերպության ներդրումը	249 000 դրամ
Ընդհանուր գումարը	2 229 200 դրամ
Էլ. փոստը	arthur71@freenet.am
Ծրագրի նպատակը	Նպաստել ՏԻՄ ընտրությունների թափանցիկությանը եւ հանրային վստահության բարձրացմանը ընտրությունների նկատմամբ՝ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների միջոցով ՀՀ Վայոց Ձորի մարզում կազմակերպելով կարճաժամկետ դիտորդություն:
Ծրագրի արդյունքը	Կազմակերպության կողմից Եղեգնաձոր եւ Վայք քաղաքներում կազմակերպվել եւ անց են կացվել դիտորդական դպրոցի վերապատրաստման դասընթացներ՝ նախապես՝ նախագահական եւ խորհրդարանական ընտրությունների ժամանակ ընտրական գործընթացներին մասնակցած եւ փորձ ձեռք բերած դիտորդներից եւ ՀԿ-ներից՝ «Ընդդեմ իրավական կամայականության» Եղեգնաձորի եւ Վայքի մասնաճյուղերից, «Երիտասարդ սերունդ» ՀԿ-ից, «Երիտասարդ մանկավարժների «Գլածոր միություն» ՀԿ-ից ընտրված 61 երիտասարդի համար: Վայք քաղաքում կազմակերպված սեմինարին մասնակցել են Վայքի եւ տարածաշրջանի Մարտիրոս, Ջառիթափ, Հերիեր գյուղերի եւ Ջերմուկ քաղաքից ընտրված 20 երիտասարդ, իսկ Եղեգնաձորում՝ Եղեգնաձորից եւ տարածաշրջանի Արենի, Գլածոր, Վարդահովիտ, Արփի, Ագարակաձոր, Վերնաշեն, Հոբոս, Աղնջաձոր, Գլածոր գյուղերից ընտրված 37 երիտասարդ: Սակայն ընտրությունների օրը Եղեգնաձոր քաղաքում եւ նրա հարակից համայնքներում կազմակերպության կողմից դիտորդություն են իրականացրել 41 դիտորդ /4 դիտորդներ ունեին՝ դիտորդական փորձ նախկինից, եւ դիտորդական փաթեթների տրամադրման օրը նրանց կազմակերպության կողմից տրվել է նաեւ խորհրդատվություն/, իսկ Վայքի տարածաշրջանում 20 երիտասարդ: Դասընթացները երկօրյա են եղել, որի առաջին օրը մասնակիցներին տրվել է իրավական գիտելիքներ՝ ՀՀ ընտրական օրենսգրքի համապատասխան հոդվածներից, իսկ երկրորդ օրը՝ դիտորդական առաքելություն իրականացնելու գործնական հմտություններ: Դիտորդների համար պատրաստվել են փաթեթներ, տարբերանշաններ, թեւկապեր եւ ընտրություններից առաջ դրանք բաժանվել նրանց: Հոկտեմբերի 12-ին կազմակերպության 60 դիտորդներ դիտարկել է քվեարկության գործընթացն ամբողջությամբ: Դիտարկվել է ընդհանուր թվով 28 ընտրատեղամաս: Պատրաստվել է դիտորդական գործունեության հաշվետվություն: Հոկտեմբերի 13-ից 15-ը որոշ դիտորդների կողմից կատարվել է նաեւ հետդիտրական դիտարկում:

19.

Կազմակերպության անվանումը	«Գորիսի մամուլի ակումբ» ՀԿ
Ծրագրի անունը	Երկխոսություն+
Պայմանագրի համարը	# ARM-EPG-2008-09
Ծրագրի տեսողությունը	Սեպտեմբեր – հոկտեմբեր, 2008թ.
Ծրագրի իրականացման վայրը	ՀՀ, Սյունիքի մարզ, Գորիսի տարածաշրջան
Դրամաշնորհի չափը	1 260 100 դրամ
Ընդհանուր գումարը	1 260 100 դրամ
Էլ. փոստը	shso9@yahoo.com
Ծրագրի նպատակը	Համայնքների հիմնախնդիրների շուրջ երկխոսություն ստեղծել 2008թ. հոկտեմբերի 12-ին կայանալիք տեղական ինքնակառավարման մարմինների՝ համայնքի ղեկավարի եւ ավագանիների թեկնածուների, նրանց պաշտպանող քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչների եւ ընտրողների միջև՝ ապահովելով նաեւ տեղական իշխանությունների քաղաքական ծրագրերի հասցեակառուցություն եւ հաշվետվողականություն:
Ծրագրի արդյունքը	Ծրագրի իրականացման ընթացքում կազմակերպությունն ունեցել է 14 հանդիպում Գորիսի տարածաշրջանի Կորնիձոր, Տեղ, Արավուս, Քարաշեն, Խոզնավար, Խնածախ, Վաղատուր, Սվարանց, Հարժիս, Շինուհայր, Քարահունջ, Վերիշեն, Խնծորեսկ, Տաթեւ գյուղական համայնքներում: Հանդիպումները տեւել են 2,5 ժամ: 14 հանդիպմանն ընդհանուր մասնակցել է 340 շահառու: Հանդիպումներին մասնակցել են շահառու համայնքների բնակիչները /նաեւ նախորդ ծրագրում ստեղծված ակտիվ խմբերի անդամներ/: Հանդիպումների ընթացքում «Գորիսի մամուլի ակումբ» ՀԿ ղեկավարի կողմից ներկայացվել են այդ համայնքում բնակիչների /ակտիվ խմբերի, որոնց մեջ մտնում են տարբեր ոլորտի ներկայացուցիչներ/ կողմից առաջնային համարվող հիմնախնդիրները եւ թեկնածուներին հավասար հնարավորություններ են տրվել պատասխանելու հարցերին: Հանդիպումների մասնակիցներին բաժանվել է 300 օրինակ «Հայաստանի հարավային դարպասը» գրքույկը, որում ներառված է Սյունիքի 15 գյուղական համայնքների հիմնախնդիրների մասին տեղեկատվություն: «Խորհրդարանական ընտրություններ 2008» ծրագրի շրջանակներում կազմակերպությունը կարողացել է վեր հանել վերը նշված համայնքների հիմնախնդիրները, իսկ ՔԸՊԱԾ-ի «Հրատարակությունների եւ հետազոտությունների» ծրագրի շրջանակներում հնարավորություն է ունեցել տպագրելու այդ հիմնախնդիրները՝ գրքույկի տեսքով, որն իր մեջ ներառում է Կորնիձոր, Տեղ, Արավուս, Քարաշեն, Խոզնավար, Խնածախ, Վաղատուր, Սվարանց, Հարժիս, Շինուհայր, Քարահունջ, Վերիշեն, Խնծորեսկ, Տաթեւ համայնքների հիմնախնդիրները՝ վերահանված նշված համայնքների բնակիչների կողմից: Գրքույկը տրամադրվել է նաեւ հանդիպումներին ներկա համայնքապետերի 24 ներկայացուցիչների եւ ավագանու 101 թեկնածուների:

20.

Կազմակերպության անվանումը	«Սիսիանի գարգացման կենտրոն» ՀԿ
Ծրագրի անունը	Երիտասարդները հանուն ապագայի
Պայմանագրի համարը	# ARM-EPG-2008-10
Ծրագրի տեսողությունը	Սեպտեմբեր – հոկտեմբեր, 2008թ.
Ծրագրի իրականացման վայրը	ՀՀ, Սյունիքի մարզ, Սիսիանի տարածաշրջան
Դրամաշնորհի չափը	1 443 150 դրամ
Կազմակերպության ներդրումը	468 500 դրամ
Ընդհանուր գումարը	1 911 650 դրամ
Էլ. փոստը	larisa@sisianc.am
Ծրագրի նպատակը	Երկխոսության ակտիվացման եւ թեկնածուների ծրագրերի վերաբերյալ իրազեկության մակարդակի բարձրացման շնորհիվ խթանել Սիսիանի տարածաշրջանի երիտասարդների եւ երիտասարդական կառույցների ակտիվ եւ իմաստավորված մասնակցությունը 2008թ. ՏԻՄ ընտրություններին եւ ընտրական գործընթացներին:
Ծրագրի արդյունքը	2008թ. սեպտեմբերի 22-ից Սիսիան քաղաքում եւ տարածաշրջանի 15 գյուղական համայնքներում իրականացվել են հանրային քննարկումներ՝ որոնց ընթացքում երիտասարդներին իրազեկել են իրենց համայնքների թեկնածուների նախընտրական ծրագրերի եւ նրանց մոտեցումները երիտասարդության հիմնախնդիրների մասին: Յուրաքանչյուր հանդիպմանը մասնակցել է 20-25 երիտասարդ: Նրանք իրենց հարցերն են ուղղել խորհրդատուին, ընտրական մասնագետին, իրավաբանին: Ընդհանուր առմամբ 15 համայնքներում հանրային քննարկումներին մասնակցել է 655 երիտասարդ, որից 240-ը գյուղական համայնքներում, իսկ 415-ը՝ Սիսիան քաղաքում: Սիսիան քաղաքի քննարկումներին հատուկ հրավիրվել են նաեւ Սիսիանում ուսանող գյուղական համայնքների երիտասարդները: Սեպտեմբերի 27-ից սկսած հանրային քննարկումներին զուգահեռ կազմակերպվել են հանդիպումներ

երիտասարդության եւ ՏԻՄ ընտրություններին մասնակից համայնքապետերի եւ համայնքների ավագանիների թեկնածուների միջեւ: Հանդիպումները կայացել են 10 գյուղական համայնքներում եւ Սիսիան քաղաքում: Գյուղական համայնքներից 5-ում հանդիպումները չեն կայացել, այդ համայնքների ՏԻՄ թեկնածուները չեն ցանկացել մասնակցել հանդիպումներին:

Կազմակերպության կողմից Սիսիան քաղաքում կազմակերպվել եւ անց է կացվել 2 խոշոր հանդիպում: Ավագանու անդամների հետ հանդիպմանը Սիսիան քաղաքում մասնակցել են 45 երիտասարդ եւ 7 ավագանու թեկնածուներ /36-ից/: Քննարկումն արդյունավետ էր, բացի մասնակիցների հարցերին պատասխանելուց, 7 թեկնածուները եւ երիտասարդները քննարկել են նաեւ ավագանու հետագա անելիքները, երիտասարդության հիմնախնդիրների լուծման ուղիները եւ ավագանուց նրանց ակնկալիքները:

Սիսիան քաղաքում կազմակերպվել եւ անց է կացվել հանդիպում երիտասարդության եւ քաղաքապետի թեկնածուների նախընտրական շտաբների ներկայացուցիչների միջեւ, որտեղ ներկայացուցիչները ներկայացրել են ընտրությունների նախապատրաստման ընթացքը, քարոզարշավների ընթացքը տեղամասային հանձնաժողովների աշխատանքների վերահսկման մեթոդներն ու գործիքները, տարածված ընտրախախտումների դրսեւորումներն ու դրանց հայտնաբերման, կանխարգելման հնարավոր տարբերակները:

21.

Կազմակերպության անվանումը	«Քաղաքացիական հասարակության զարգացման կենտրոն» կրթական, սոցիալ-տնտեսական, համայնքի աջակցման ՀԿ
Ծրագրի անունը	Ժողովրդավար ընտրությամբ՝ հզոր պետություն
Պայմանագրի համարը	# ARM-EPG-2008-11
Ծրագրի տեւողությունը	Մեկտեմբեր – հոկտեմբեր, 2008թ.
Ծրագրի իրականացման վայրը	ՀՀ, Սյունիքի մարզ
Դրամաշնորհի չափը	2 996 000 դրամ
Կազմակերպության ներդրումը	245 500 դրամ
Ընդհանուր գումարը	3 241 500 դրամ
Էլ. փոստը	cscsd@yandex.ru
Ծրագրի նպատակը	Նպաստել ՏԻՄ ընտրությունների թափանցիկությանը եւ հանրային վստահության բարձրացմանը ընտրությունների նկատմամբ՝ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների միջոցով ՀՀ Սյունիքի մարզում կազմակերպելով կարծաժամկետ դիտորդություն:
Ծրագրի արդյունքը	<p>Կազմակերպության կողմից Կապան եւ Սիսիան քաղաքներում կազմակերպվել եւ անց են կացվել դիտորդական դպրոցի վերապատրաստման դասընթացներ երիտասարդների մասնակցությամբ, որոնք ներկայացրել են «Լեռնեցիների առողջ սերունդ» ՀԿ-ն, Կապանի եւ Մեղրու քաղաքացիական կենտրոնները, «Սիսիանի զարգացման կենտրոն» եւ «Քաղաքացիական հասարակության զարգացման կենտրոն» ՀԿ-ները:</p> <p>Երկու քաղաքներում կազմակերպված երկօրյա դիտորդական դպրոցին մասնակցել է 100 երիտասարդ, որոնցից 90-ն ընտրությունների օրը 50 ընտրատեղամասերում իրականացրել է դիտորդություն:</p> <p>ՀԿ-ի կողմից Սիսիան քաղաքում կազմակերպված սեմինարին մասնակցել է Գորիս քաղաքից եւ տարածաշրջանի Վերիշեն, Քարահունջ, Շինուհայր, Հարթաշեն գյուղերից ընտրված 20 երիտասարդ եւ Սիսիան քաղաքից եւ տարածաշրջանի Տոլորս, Նորավան, Ախլաթյան, Աշոտավան, Գորայք, Բռնակոթ, Սառնակունք, Շաքե եւ Շաղատ համայնքներից՝ 28 երիտասարդ: Կապան քաղաքում կազմակերպված դասընթացին մասնակցել է Կապան, Մեղրի, Քաջարան եւ Ագարակ քաղաքների 52 երիտասարդ:</p> <p>Դասընթացները երկօրյա են եղել, որի առաջին օրը մասնակիցներին տրվել է իրավական գիտելիքներ ՀՀ ընտրական օրենսգրքի համապատասխան հոդվածներից, իսկ երկրորդ օրը՝ դիտորդական առաքելություն իրականացնելու գործնական հմտություններ:</p> <p>Դիտորդների համար պատրաստվել են փաթեթներ, տարբերանշաններ եւ թեւկապեր: Ընտրություններից առաջ դրանք բաժանել են դիտորդներին:</p> <p>Դիտորդական առաքելությունից հետո կազմակերպության կողմից պատրաստվել է դիտորդական գործունեության հաշվետվություն:</p> <p>Թիվ 38/01 ընտրատեղամասում՝ Անտառաշատ գյուղում տեղի ունեցած ընտրախախտմանն արագ արձագանքել է «Քաղաքացիական հասարակության զարգացման կենտրոն» ՀԿ-ի դիտորդը և գրանցել, որ քվեարկության համար օգտագործվում են չսահմանված նմուշի քվեաթերթիկներ: Կազմակերպության կողմից նամակ է ուղղվել կենտրոնական ընտրական հանձնաժողովին եւ արդյունքում անվավեր են ճանաչվել 38/01 ընտրատեղամասի ընտրությունները:</p>

Կազմակերպության անվանումը	«Երիտասարդ սերունդ» ՀԿ
Ծրագրի անունը	Քաղաքակիրթ ընտրագանգված
Պայմանագրի համարը	# ARM-EPG-2008-12
Ծրագրի տեւողությունը	Սեպտեմբեր – հոկտեմբեր, 2008թ.
Ծրագրի իրականացման վայրը	ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք. Եղեգնաձոր
Դրամաշնորհի չափը	1 313 500 դրամ
Կազմակերպության ներդրումը	900 000 դրամ
Ընդհանուր գումարը	2 213 500 դրամ
Էլ. փոստը	Karin_m@rambler.ru
Ծրագրի նպատակը	Նպատակ է Վայոց Ձորի մարզերի 7 համայնքներում երիտասարդների եւ ուսանողների քաղաքակիրթ, ակտիվ եւ ուղղորդված մասնակցության մակարդակի բարձրացմանը 2008թ. ՏԻՄ-ի ընտրական գործընթացներում:
Ծրագրի արդյունքը	Ծրագրի իրականացման ընթացքում կազմակերպությունն երիտասարդների մասնակցությամբ կազմակերպել է 7 հանդիպում Եղեգնաձոր քաղաքում եւ հարակից գյուղական 6 համայնքներում՝ /Շատին, Վերնաշեն, Աղնջաձոր, Հորս, Թառաթումբ եւ Սալլի/: Հանդիպումը նպատակ ուներ վերը նշված համայնքներում ձեւավորել երիտասարդական ակտիվ խմբեր: Հանդիպումների ընթացքում երիտասարդների կողմից վեր են հանվել նաեւ համայնքային հիմնախնդիրները: Շատին, Վերնաշեն, Աղնջաձոր, Հորս, Թառաթումբ եւ Սալլի համայնքներում եւ Եղեգնաձոր քաղաքում երիտասարդական ակտիվ խմբերի հետ միասին կազմակերպվել է այցելություններ առաջադրված թեկնածուների գրասենյակներ՝ նրանց համայնքների զարգացման ծրագրերի հասցեականության ապահովման եւ հիմնախնդիրներն ապագա համայնքապետերին լսելի դարձնելու նպատակով /10 հանդիպումներ՝ 2-ը Վերնաշենում, 2-ը Աղնջաձորում, 4-ը Եղեգնաձորում եւ մեկական Շատին, Հորս, Թառաթումբ եւ Սալլի համայնքներում/: Ծրագրի ընթացքում ակտիվ խմբի երիտասարդների մասնակցությամբ իրականացվել է 4 հանդիպում Եղեգնաձոր քաղաքի համայնքապետի 4 թեկնածուների մասնակցությամբ: Այս հանդիպումները եղել են անհատական յուրաքանչյուր թեկնածուի հետ: Հաջողված է համարվում «Երիտասարդ սերունդ» ՀԿ-ի կողմից Եղեգնաձոր քաղաքում կազմակերպված հանդիպումը, որին մասնակցել են քաղաքապետի համար առաջադրված 4 թեկնածուներից 3-ը և ավագնու 27 թեկնածուներից 12-ը /նրանցից 3-ը կին թեկնածուներ են/: Հանդիպմանը մասնակցել են 60-70 երիտասարդ, որոնք շատ ակտիվ իրենց հարցադրումներն էին անում թեկնածուներին և խոստանում, որ ընտրվելու դեպքում նրանք հետամուտ կլինեն նրանց խոստումներին: Թեկնածուները խոստացել են ընտրվելու դեպքում մեծ ուշադրություն դարձնել երիտասարդների հիմնախնդիրներին և պահել կապը նրանց հետ:

Համագործակցություն – ՏԻՄ ընտրություններ

➤ **Համագործակցություն IFES կազմակերպության հետ**

«Սիսիանի զարգացման կենտրոն» ՀԿ-ն ՏԻՄ ընտրությունների ընթացքում իրականացրել է ընտրացուցակների ճշգրտման աշխատանքներ: Ծրագրի 30 ակտիվ կամավորների միջոցով IFES կազմակերպության աջակցությամբ իրականացվել է Սիսիան քաղաքի եւ գյուղական 7 համայնքների ընտրացուցակների ճշգրտում: Ընտրացուցակների ճշգրտումը տևել է 15 օր: Արդյունքում ճշգրտվել է 18500 ընտրողի տվյալ:

➤ **Համագործակցություն Կրթության զարգացման ակադեմիայի /AED/ «Երիտասարդության եւ համայնքային գործողությունների» ծրագրի հետ**

CASP-ի ԸԾ դրամաշնորհառուները համագործակցել են Կրթության զարգացման ակադեմիայի /AED/ «Երիտասարդության եւ համայնքային գործողությունների» ծրագրի Սյունիքի համակարգողի հետ, որի արդյունքում դրամաշնորհառու ՀԿ-ներն իրենց կողմից կազմակերպված ՏԻՄ թեկնածուների հետ հանդիպումները խնամախ եւ Արծվանիկ համայնքներում իրականացրել են ծրագրի կենտրոններում՝ ներգրավելով նաեւ համայնքային ակտիվ երիտասարդական խմբերի ներկայացուցիչներին:

➤ **Համագործակցություն «Առաքելություն Հայաստանի» կազմակերպության մարզային գրասենյակների հետ**

«Գորիս Բունդերանգ», «Գորիսի անգլերենի ուսուցման կենտրոն» եւ «Գորիսի սերունդ» ՀԿ-ները Գորիս, Սիսիան եւ Կապան քաղաքներում իրենց ծրագրային գործողությունների իրականացման ընթացքում ներգրավել են նաեւ «Առաքելություն Հայաստանի» բարեգործական կազմակերպության շահառուներին՝ նրանց կողմից առաջնային համարվող հիմնախնդիրները եւս ներառելով առաջարկ-փաթեթների մեջ եւ ներկայացնելով հանդիպումներին, ինչպես նաեւ նրանց մասնակցությունն ապահովելով նաեւ ՏԻՄ թեկնածուների հետ հանդիպումներին:

➤ **Համագործակցություն դրամաշնորհառու կազմակերպությունների միջև**

Ծրագրերի իրականացման ընթացքում համագործակցաբար հանդիպումներ են իրականացրել «Գորիսի անգլերենի ուսուցման կենտրոն» եւ «Գորիսի սերունդ» համագործակցությունը, «Գորիսի մամուլի ակումբ» եւ «Լեռնեցիների առողջ սերունդ» ՀԿ-ները՝ Գորիսի տարաշաճրջանի գյուղական համայնքներում կազմակերպելով միասնական հանդիպումներ ՏԻՄ թեկնածուների միջեւ: Դրանք հաջողված հանդիպումներ էին եւ իրենց ֆորմատով, եւ թեկնածուների մասնակցության թվով, եւ շահառուների ակտիվ մասնակցությամբ: «Լեռնեցիների առողջ սերունդ», «Սիսիանի զարգացման կենտրոն» եւ «Երիտասարդ սերունդ» ՀԿ-ների կամավորները մասնակցել են «Քաղաքացիական հասարակության զարգացման կենտրոն» եւ «Նոր Վայոց Ձոր» ՀԿ-ների կողմից կազմակերպված դիտորդական դպրոցին եւ ընտրությունների օրը իրականացրել են դիտորդություն:

• ԳՈՒՄ ՀԿ-ի կողմից իրականացված նախաձեռնությունները

- ԾՐԱԳԻՐ - Տեղական ինքնակառավարումը մեր համայնքում

ԴՈՆՈՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ - «Գերմանական տեխնիկական համագործակցություն» ընկերություն

Պայմանագրի համարը	<i>PN 02,2152,3-002,00</i>
Ծրագրի տեսողությունը	<i>Յոկտեմբեր-դեկտեմբեր, 2006թ.</i>
Ծրագրի իրականացման վայրը	<i>ՀՀ, Սյունիքի մարզ</i>
Դրամաշնորհի չափը	<i>1 865 266 դրամ</i>

2006թ. հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին ԳՈՒՄ ՀԿ-ն «Գերմանական տեխնիկական համագործակցություն» ընկերության ֆինանսական աջակցությամբ, «Քաղաքացիական հասարակության եւ համայնքային ժողովրդավարության աջակցություն Հարավային Կովկասում» ծրագրի շրջանակներում, ՀՀ Սյունիքի մարզի 5 քաղաքներում (Գորիս, Սիսիան, Կապան, Մեղրի, Քաջարան) իրականացրել է «Տեղական ինքնակառավարումը մեր համայնքում» ծրագիրը: Ծրագրի շրջանակներում Սյունիքի մարզի 5 քաղաքների դպրոցների աշակերտական խորհուրդների անդամների համար (30 աշակերտ՝ յուրաքանչյուր դպրոցից, ընդամենը՝ 150 աշակերտ) կազմակերպվել են դասընթացներ, որոնց ընթացքում աշակերտները ծանոթացնել են ՏԻՄ-երի կառուցվածքին, կառավարմանը, գործառույթներին: Համապատասխան գիտելիքներ եւ հմտություններ ձեռք բերելուց հետո յուրաքանչյուր քաղաքում ֆորումների միջոցով աշակերտները վեր են հանել համայնքային նշանակության 3 առաջնային հիմնախնդիրներ: Աշակերտները յուրաքանչյուր հիմնախնդրի վերաբերյալ 15 օրվա ընթացքում հավաքագրել են փաստեր եւ հիմնավորումներ: Այնուհետեւ աշակերտները կազմակերպել են դերախաղեր. նրանց կողմից յուրաքանչյուր քաղաքում ընտրվել են քաղաքապետ, համայնքի ավագանիներ եւ փորձագետներ: Դերախաղի միջոցով, որն իրենից ներկայացնում էր ավագանու նիստ, աշակերտները քննարկել են 3 հիմնախնդիրները եւ ձայների մեծամասնությամբ յուրաքանչյուր քաղաքում ընտրել է մեկ հիմնախնդիր: Աշակերտների կողմից մշակվել են նաեւ այդ հիմնախնդիրների լուծման նախագծերը, որոնք ներկայացվել են իրենց քաղաքի ՏԻՄ-երին: Նախագծերն արժանացել են ՏԻՄ-երի հավանությանը եւ ընդունվել են համապատասխան որոշումներ՝ նախագծերի իրականացման համար: Յուրաքանչյուր նախագծի իրականացման նպատակով դոնոր կազմակերպության կողմից տրամադրվել է 500 եվրոյին համարժեք դրամ, որին հավելվել է այդ գումարի 20%-ի չափով համայնքային ներդրումը: Որոշ համայնքների ներդրումները գերազանցել են 20%-ը: Օրինակ, Գորիս քաղաքում իրականացված Մ. Սպարապետի անվան հրապարակի էլեկտրական լուսավորության սյուների տեղադրման համար «Գերմանական տեխնիկական համագործակցություն» ընկերության ֆինանսական աջակցությամբ, Գորիսի քաղաքապետարանն ավելացրել է նախատեսվածից գրեթե 5 անգամ ավելի շատ գումար՝ 505 000 դրամ:

Ծրագրի արդյունքում իրականացվել են ներքոնշյալ նախագծերը.

- Գորիս քաղաքում՝ Մ. Սպարապետի անվան հրապարակի էլեկտրական լուսավորության սյուների տեղադրում,
- Կապան քաղաքում՝ քաղաքի երկու մասերում տեղեկատվական ցուցանակների տեղադրում՝ ՏԻՄ գործունեությունը լուսաբանելու համար,

- Սիսիան քաղաքում՝ Սիսիան քաղաքի Որոտան-Չարենց-Խանջյան-Նժդեհ խաչմերուկում փակ ավտոկանգառի կառուցում,
- Մեղրի քաղաքում՝ կենտրոնական հետիոտն ճանապարհի լուսավորության վերականգնում,
- Քաջարան քաղաքում՝ Քաջարան քաղաքի զբոսայգու հանգստի գոտու վերանորոգում:

- ԾՐԱԳԻՐ - Ուսուցիչների համակարգչային գրագիտության բարձրացման ուղղությամբ վերապատրաստումներ

ԴՈՆՈՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ – ՀՀ ԿԳՆ «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ

Պայմանագրի համարը	<i>162/05</i>
Ծրագրի տեսողությունը	<i>Նոյեմբեր, 2005թ. – նոյեմբեր, 2007թ.</i>
Ծրագրի իրականացման վայրը	<i>ՀՀ, Սյունիքի եւ Վայոց Ձորի մարզեր</i>
Դրամաշնորհի չափը	<i>24 175 905 դրամ</i>
Ընդհանուր գումարը	<i>24 175 905 դրամ</i>

2005-2007թթ ԳՈՒՄ ՀԿ-ն Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ, Կրթական ծրագրերի կենտրոնի կողմից իրականացվող «Կրթության որակ եւ համապատասխանություն» ծրագրի շրջանակներում, ՀՀ Սյունիքի եւ Վայոց Ձորի մարզերի 124 դպրոցների 816 ուսուցչի համար կազմակերպել է համակարգչային գրագիտության ուղղությամբ վերապատրաստման դասընթացներ: Ծրագրի ընթացքում ԳՈՒՄ ՀԿ-ի կողմից մշակվել է համակարգչային վերապատրաստման ձեռնարկ, որը տրամադրվել է վերապատրաստված ուսուցիչներին:

Դասընթացների արդյունքում ուսուցիչները ծանոթացել են Windows XP օպերացիոն համակարգին եւ ձեռք են բերել գիտելիքներ համակարգչային Microsoft Word, Excel, Power Point ծրագրերի վերաբերյալ:

Ծրագրի իրականացման ողջ ընթացքում ԳՈՒՄ ՀԿ-ի համակարգչային կենտրոնի աշխատակիցների կողմից ուսուցիչներին տրամադրվել են անհատական խորհրդատվություններ: Իրականացվել են նաեւ այցեր ծրագրում ընդգրկված դպրոցներ՝ դիտարկելու, թե դասընթացներին մասնակցած ուսուցիչների ստացած համակարգչային գիտելիքներն ինչպես են կիրառվում դասապրոցեսում:

- ԾՐԱԳԻՐ - Թափանցիկ դպրոց

ԴՈՆՈՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ - ՀՀ –ում ԱՄՆ դեսպանատուն

Պայմանագրի համարը	<i>S-AM100-07-GR-205</i>
Ծրագրի տեսողությունը	<i>Մարտ - դեկտեմբեր, 2007թ.</i>
Ծրագրի իրականացման վայրը	<i>ՀՀ, Սյունիքի մարզ</i>
Դրամաշնորհի չափը	<i>7 667 026 դրամ</i>
Կազմակերպության ներդրումը	<i>3 274 000 դրամ</i>
Ընդհանուր գումարը	<i>10 941 026 դրամ</i>

ԳՈՒՄ ՀԿ-ն Հայաստանում ԱՄՆ դեսպանատան «Ժողովրդավարության փոքր դրամաշնորհների ծրագրի» շրջանակներում 2007թ. մարտ - դեկտեմբեր ամիսներին իրականացրել է «Թափանցիկ դպրոց» ծրագիրը, որի նպատակն էր բարձրացնել ՀՀ Սյունիքի եւ Վայոց Ձորի մարզերի 4 քաղաքների (Գորիս, Սիսիան, Վայք, Եղեգնաձոր) հանրակրթական հաստատությունների ֆինանսական կառավարման թափանցիկությունը (դպրոցի բյուջեի կազմում, ծախսումներ եւ հաշվետվողականություն): Ծրագրի իրականացման արդյունքում Գորիս, Սիսիան, Վայք եւ Եղեգնաձոր քաղաքների 15 դպրոցների 300 աշակերտի եւ 300 ծնողի համար կազմակերպվել են դասընթացներ եւ տարբեր կարգի միջոցառումներ, որոնց ընթացքում նրանք ստացել են գիտելիքներ՝ դպրոցի ֆինանսական գործառնություններում իրենց իրավունքները պաշտպանելու համար: Ծրագրում ընդգրկված 15 դպրոցների խորհուրդների անդամների (յուրաքանչյուր դպրոցի խորհրդի 7 անդամ) համար կազմակերպվել են դասընթացներ, որոնց արդյունքում նրանք զարգացրել են իրենց կարողությունները՝ կապված դպրոցի ֆինանսական գործառնությունների վերահսկման հետ: Նշված դպրոցներում ձեւավորվել է ակտիվ համագործակցություն ուսուցիչների, աշակերտների եւ ծնողների միջեւ, որից հետո ծնողները, աշակերտները եւ դպրոցի խորհրդի անդամները սկսել են մասնակցել դպրոցի բյուջեի պատրաստման գործընթացին:

- ԾՐԱԳԻՐ- «Երեխայակենտրոն դպրոց» ծրագիր

ԴՈՆՈՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ - ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի հայաստանյան գրասենյակ

Պայմանագրերի համարները	<ul style="list-style-type: none"> • Education and development/ 2005/01 • Education and development/ 2007/004 • Education and development/ 2008/ 001
Ծրագրի տեղողությունը	<ul style="list-style-type: none"> • Մարտ - դեկտեմբեր, 2006թ. • Հունիս-դեկտեմբեր, 2007թ. • Հունիս, 2008թ.-Հունվար, 2009թ.
Ծրագրի իրականացման վայրը	ՀՀ, Սյունիքի, Լոռու եւ Շիրակի մարզեր
Դրամաշնորհի չափը	15 648 022 դրամ
Կազմակերպության ներդրումը	3 510 089 դրամ
Ընդհանուր գումարը	19 158 111 դրամ

2007թ. հունիս-դեկտեմբեր ամիսներին ԳՈՒՄ (Գորիսի եւ Սիսիանի տարածաշրջաններ) եւ ԿՈՒ (Կապանի եւ Մեղրու տարածաշրջաններ) ՀԿ-ների համագործակցությամբ ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի հայաստանյան գրասենյակի ֆինանսական աջակցությամբ իրականացվել է «Երեխայակենտրոն դպրոց» չափորոշիչների եւ ցուցիչների փորձարկումը Սյունիքի մարզի դպրոցներում ծրագիրը: Ծրագրի նպատակն էր՝ Սյունիքի մարզի դպրոցներում փորձարկել «Երեխայակենտրոն դպրոցի» չափորոշիչները եւ ցուցիչները:

Դեռեւս 2004թ. ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի աջակցությամբ մասնագիտական խմբի (Կարեն Մելքոնյան (ՀՀ ԿԳՆ Կրթական ծրագրերի կենտրոն), Նարինե Մնացականյան (ՀՀ ԿԳ նախարարություն), Արմեն Հովսեփյան (ՀՀ ԿԳՆ Կրթության ազգային ինստիտուտ), Մանվել Պապոյան (Երեւանի թիվ 83 դպրոց)) կողմից մշակվել է «Երեխայակենտրոն դպրոցի» հայեցակարգը, որը քննարկվել է ՀՀ Սյունիքի եւ Արարատի մարզերում՝ հանրակրթական դպրոցների տնօրենների եւ ուսուցիչների մասնակցությամբ: Քննարկումներից հետո, նախօրոք մշակված հարցաթերթերի հիման վրա, նույն մարզերի տնօրենների, ուսուցիչների, ծնողների եւ աշակերտների շրջանում անց է կացվել հարցում-հետազոտություն՝ «Օրինակելի դպրոցը Ձեր պատկերացմամբ» թեմայով: Աշխատանքային խումբը, հիմք ընդունելով կատարված հետազոտությունների արդյունքերը եւ ուսումնասիրելով միջազգային փորձը, մշակել եւ ԿԳ նախարարի հաստատմանն է ներկայացրել «Օրինակելի դպրոց» հայեցակարգը, որը 2004թ. դեկտեմբերին հաստատվել է ՀՀ ԿԳ նախարարի կողմից:

Հայեցակարգի սկզբունքների ներդրումը խթանելու նպատակով 2005թ. կրկին ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի աջակցությամբ մասնագիտական խմբի եւ ԳՈՒՄ ՀԿ-ի համագործակցությամբ մշակվել են «Երեխայակենտրոն դպրոց»-ի չափորոշիչները:

2006թ. մասնագիտական խումբը պատրաստել է մի ամբողջական փաստաթուղթ, որում տրված են «Երեխայակենտրոն դպրոց»-ի հայեցակարգը, չափորոշիչներն ու ցուցիչները:

Վերոնշյալ փաստաթուղթը հանրակրթական հաստատություններին ներկայացնելու նպատակով, «Գործընկերություն եւ ուսուցում» եւ «Կապանի ուսուցիչներ» ՀԿ-ները ծրագրի շրջանակներում Սյունիքի մարզի բոլոր քաղաքներում կազմակերպել եւ անց են կացրել կլոր սեղան-քննարկումներ, որոնցում ներգրավվել են մարզի բոլոր հանրակրթական դպրոցները: Կլոր սեղանների ընթացքում մասնակիցներին (դպրոցի տնօրեն, աշակերտ, ուսուցիչ, համայնքի ներկայացուցիչ) մանրակրկիտ ներկայացվել է նշյալ փաստաթուղթը, հավաքագրվել են նրանց կարծիքները, դիտողություններն ու առաջարկությունները՝ մասնագիտական խմբին ներկայացնելու նպատակով:

2-րդ ծրագիրն իրականացվել է 3 հիմնական փուլերով՝ մրցութային փաթեթի պատրաստում, բուն մրցույթի անցկացում եւ մրցույթի արդյունքերի ամփոփում:

Մրցութի անցկացման կարգը մշակվել է «Գործընկերություն եւ ուսուցում» ՀԿ-ի կողմից: Մրցութի մասնակցության հայտերը՝ դրանք լրացնելու վերաբերյալ խորհրդատվությամբ, բաժանվել է մարզի բոլոր դպրոցներին: Մրցութի մասնակցության հայտ է ներկայացրել Սյունիքի 20 դպրոց՝ 11 գյուղական, 9 քաղաքային:

Մրցութային հայտերի գնահատման գործընթացը կազմակերպվել է 2 փուլով՝ հայտերի հիման վրա եւ տեղերում այցելություններ կազմակերպելով: Հանձնաժողովը մրցանակային տեղերի է արժանացրել Կապանի թիվ 1 եւ 9, Գորիսի թիվ 5, Տաթևի, Տեղի թիվ 1, Շաքիի եւ Լեռնաձորի դպրոցներին: Խրախուսական մրցանակների են արժանացել Սիսիանի թիվ 2, Կապանի թիվ 7, Քաջարանի թիվ 5, Դավիթ Բեկի եւ Սպանդարյանի դպրոցները: 2008 թվականի հունվարի 25-ին Սյունիքի մարզկենտրոն Կապան քաղաքում կազմակերպվել է «Երեխայակենտրոն լավագույն դպրոց» մարզային մրցութի մրցանակաբաշխության հանդիսավոր արարողությունը, որին ներկա էին մրցութին մասնակցած բոլոր դպրոցների տնօրենները, մրցութի կազմակերպիչները, տեղական եւ մարզային իշխանությունների ներկայացուցիչները: Նշված 7 դպրոցներից յուրաքանչյուրի համար ՄԱԿ-ի մանկական հիմնադրամը նախատեսել էր մեկական արևոլ գրեմական պիտույքներ եւ սպորտային իրեր: Խրախուսամքի արժանացած դպրոցների համար հիմնադրամը նախատեսել էր մեկ արևոլ գրեմական պիտույքներ: Մրցութի մասնակից դպրոցները ստացել են մասնակցության հավաստագրեր:

Մրցութի անցկացման ընթացքում հանդիպած բոլոր անհարթությունների եւ մասնագիտական խմբի կողմից կատարված առաջարկությունների հիման վրա վերամշակվել է մրցութային ամբողջական փաթեթը (հայեցակարգ, չափորոշիչներ ու ցուցիչներ), որը պլանավորվում է ներկայացնել ՀՀ ԿԳ նախարարություն՝ հետագայում հանրապետական մակարդակով այն կիրառելու համար:

2008թ. հունիսից 2009թ. հունվար «Երեխայակենտրոն դպրոց» ծրագիրն իրականացվել է Շիրակի և Լոռու մարզերում: Ծրագիրը մշակած մարզերում արդյունավետ իրականացնելու նպատակով ԳՈՒՄ ՀԿ-ն ձևավորել է համագործակցություն ՀՀ ԿԳՆ Կրթության ազգային ինստիտուտի (ԿԱԻ) Շիրակի և Լոռու մասնաճյուղերի հետ:

Լոռու եւ Շիրակի հանրակրթական հաստատությունների վարչական աշխատողների, ուսուցիչների, աշակերտների, ծնողների և ՏԻՄ-ի կրթական ոլորտի ներկայացուցիչների շրջանում «Երեխայակենտրոն դպրոցի» վերաբերյալ գաղափարի տարածման, չափորոշիչների, ցուցիչների և հայեցակարգային դրույթների մասին իրազեկության բարձրացման նպատակով ծրագրի շրջանակներում կազմակերպվել են կլոր սեղաններ: Կլոր սեղաններին մասնակից դպրոցներից յուրաքանչյուրին տրվել է «Երեխայակենտրոն դպրոց» պատամները, բրոշյուրները և բուկլետները՝ չափորոշիչների մասին իրենց դպրոցներում իրազեկումը շարունակելու համար:

«Երեխայակենտրոն դպրոց» հայեցակարգի, չափորոշիչների և ցուցիչների վերաբերյալ ծրագրում ոչ ուղղակիորեն ներգրավված շահառուներին իրազեկելու համար առանձին համարով տպագրվել է «Կանք+» թերթի հատուկ համար, որը ներառել է հոդվածներ՝ «Երեխայակենտրոն դպրոցի» պատմության, մրցութի անցկացման գործընթացի, մրցութին մասնակից դպրոցների գործունեության մասին: Թերթի էլեկտրոնային տարբերակը տեղադրվել է www.gumiso.am կայքում: Ծրագրի իրականացման սկզբում եւ վերջում հարցումներ են անցկացվել, որի նպատակն էր պարզել ուսուցիչների, ծնողների, դպրոցի խորհուրդների անդամների եւ աշակերտների պատկերացումները երեխայակենտրոն դպրոցի մասին:

- ԾՐԱԳԻՐ - Միտք սերմանելը նույնն է, թե ծառ տնկես

ԴՈՆՈՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ – «ԷՅ ԹԻ ՓԻ» բարեգործական հիմնադրամ

Պայմանագրերի համարները	<ul style="list-style-type: none"> • 1 • 3
Ծրագրի տեսողությունը	<ul style="list-style-type: none"> • Սեպտեմբեր – հոկտեմբեր, 2007թ. • Ապրիլ – հոկտեմբեր, 2008թ.
Ծրագրի իրականացման վայրը	ՀՀ, Սյունիքի մարզ
Դրամաշնորհի չափը	9 669 296 դրամ

2007թ. հոկտեմբերին ԳՈՒՄ ՀԿ-ն «ԷՅ ԹԻ ՓԻ» բարեգործական հիմնադրամի Հայաստան Ծառատունկ ծրագրի ֆինանսական աջակցությամբ իրականացրել է «Միտք սերմանելը նույնն է, թե ծառ տնկես» ուսումնական ծրագիրը:

Դեռևս 2006թ. սեպտեմբերին, վերոնշյալ ծրագրի շրջանակներում, ԳՈՒՄ ՀԿ-ի կողմից Սյունիքի մարզի դպրոցներում կազմակերպվել են 5-օրյա դասընթացներ՝ դասընթացավարների համար:

Դասընթացների ընթացքում մասնակիցների կողմից մշակվել է «Միտք սերմանելը նույնն է, թե ծառ տնկես» բնապահպանական ուսումնական ձեռնարկը:

2007թ. հոկտեմբերին ծրագրի շրջանակներում կազմակերպվել են 5-օրյա դասընթացներ Սյունիքի մարզի բնագիտության, աշխարհագրության եւ կենսաբանության 48 ուսուցչի համար:

2008թ. ապրիլ-սեպտեմբեր ամիսներին ծրագրի շրջանակներում կազմակերպվել են 5-օրյա դասընթացներ Սյունիքի մարզի դասվարների եւ բնագիտական առարկաների 408 ուսուցչի համար: Դասընթացների արդյունքում մասնակից ուսուցիչները ձեռք են բերել «Միտք սերմանելը նույնն է, թե ծառ տնկես» բնապահպանական ձեռնարկը ուսումնական գործընթացում օգտագործելու վերաբերյալ գիտելիքներ եւ հմտություններ:

- ԾՐԱԳԻՐ - Համայնքային դպրոցական խորհուրդ

ԴՈՆՈՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ- Բաց հասարակության ինստիտուտի հայաստանյան գրասենյակ

Պայմանագրի համարը	<i>Grant N 14601</i>
Ծրագրի տեղողությունը	<i>Սեպտեմբեր, 2005թ. - հունիս, 2006թ.</i>
Ծրագրի իրականացման վայրը	<i>ՀՀ, Սյունիքի մարզ</i>
Դրամաշնորհի չափը	<i>4 558 128 դրամ</i>
Կազմակերպության ներդրումը	<i>2 155 889 դրամ</i>
Ընդհանուր գումարը	<i>6 714 017 դրամ</i>

2005-2006թթ ԳՈՒՄ ՀԿ-ն, Բաց հասարակության ինստիտուտի հայաստանյան գրասենյակի ֆինանսական աջակցությամբ, Սյունիքի մարզում իրականացրել է «Համայնքային դպրոցական խորհուրդ» ծրագիրը, որի նպատակն էր մշակել համայնքային դպրոցական խորհուրդների զարգացման եւ համագործակցության մեխանիզմներ: Ծրագրի իրականացման արդյունքում Գորիս եւ Սիսիան քաղաքների 10 դպրոցների խորհուրդների շուրջ 200 անդամների համար կազմակերպվել են դասընթացներ, որոնց արդյունքում նրանք ձեռք են բերել գիտելիքներ եւ հմտություններ՝ համայնքային դպրոցական խորհրդի (ՀԱԽ) կազմավորման եւ գործունեության վերաբերյալ: Դպրոցի խորհրդի անդամների ակտիվ մասնակցությամբ մշակվել եւ փորձարկվել է ՀԱԽ-ի կանոնադրության նախագիծը: Գորիս եւ Սիսիան քաղաքներում ձեւավորվել են համայնքային դպրոցական խորհուրդներ: Նշված քաղաքների համայնքային դպրոցական խորհուրդների կողմից մշակվել են տարեկան գործողությունների պլաններ եւ մասամբ իրականացվել են:

- ԾՐԱԳԻՐ - Էլեկտրոնային կառավարում

ԴՈՆՈՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ - Քաունթերփարթ ինթերնեշնլի հայաստանյան գրասենյակ

Ծրագրի տեղողությունը	<i>Օգոստոս, 2008թ. - փետրվար, 2009թ.</i>
Ծրագրի իրականացման վայրը	<i>ՀՀ, Սյունիքի եւ Վայոց Ձորի մարզեր</i>
Ծառայության մատուցման գումարի չափը	<i>1 110 912 դրամ</i>
Ընդհանուր գումարը	<i>1 110 912 դրամ</i>

Միավորված ազգերի զարգացման ծրագրի «Էլեկտրոնային կառավարում» նախաձեռնությունը մեկնարկել է 2008թ. հուլիսին եւ իրականացվել է Քաունթերփարթ ինթերնեշնլի կողմից:

Ծրագրի նպատակն էր բարձրացնել քաղաքացիական հասարակության կազմակերպությունների եւ քաղաքացիների գիտակցված մասնակցությունը ՀՀ Ազգային ժողովի գործունեությունում՝ առկա էլեկտրոնային միջոցներով:

Քաունթերփարթ Ինթերնեշնլի հայաստանյան գրասենյակը համագործակցելով հասարակական կազմակերպություններին ծառայություն մատուցող 3 կազմակերպությունների՝ «Գործընկերություն եւ ուսուցում» ՀԿ-ի, «ՀԿ կենտրոն» Վանաձորի մասնաճյուղի եւ Քաղաքացիական զարգացման եւ համագործակցության հիմնադրամի հետ՝ իրականացրել է իրազեկման քարոզարշավներ երեւանում եւ Հայաստանի բոլոր մարզերում:

Ծրագրի շրջանակներում կազմակերպվել են դասընթացներ՝ www.parliament.am, www.ombuds.am եւ www.court.am կայքերից օգտվելու վերաբերյալ:

2008թ. օգոստոսից մինչև 2009թ. փետրվար Սյունիքի եւ Վայոց Ձորի քաղաքային համայնքներում /Գորիս, Կապան, Մեղրի, Սիսիան, Վայք, Եղեգնաձոր/ ԳՈՒՄ ՀԿ-ի կողմից կազմակերպվել է «Տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործումը հանրային մասնակցության նպատակով» թեմայով 10 հատ 2-օրյա դասընթաց հասարակության ամենալայն շերտերի՝ հասարակական կազմակերպությունների, ՁԼՄ-ների եւ ՏԻՄ-երի ներկայացուցիչների, ուսուցիչների, երիտասարդների համար:

Դասընթացում ներառված էին հետևյալ թեմաները՝

- Էլեկտրոնային կառավարումը ՀՀ դատական, գործադիր եւ օրենսդիր համակարգերում,
- ՀՀ խորհրդարանը եւ էլեկտրոնային մատչելիությունը,
- Օրենսդրական գործընթացը Ազգային ժողովում,
- Հասարակության մասնակցությունն օրենսդրական գործընթացին,
- Դատական համակարգ:

Դասընթացի մոդուլը պատրաստվել է Քաունթերփարթ ինթերնեշնլի կողմից: Դասընթացներին մասնակցել են շուրջ 130 հոգի: Դասընթացներից հետո վերը նշված, ինչպես նաեւ Սյունիքի 6 գյուղական համայնքներում /Գորայք, Աշոտավան, Խնածախ, Խնձորեսկ, Արծվանիկ, Տեղ/ կազմակերպվել է 16 «Էլեկտրոնային կառավարման օր», որոնց ժամանակ մասնակիցները հնարավորություն են ստացել իրենց հարցն ուղղել ՀՀ Ազգային ժողովի, իրենց նախասիրությամբ ընտրված պատգամավորին: «Էլեկտրոնային կառավարման օրերին» մասնակցել են 160 հոգի:

• ԳՈՒՄ ՍՊԸ Ժառայություններ

«Գործընկերություն եւ ուսուցում» հասարակական կազմակերպությունը 2003 թվականին հիմնադրել է ԳՈՒՄ ՍՊԸ-ն, որի 100% բաժնետերն է համարվում ԳՈՒՄ ՀԿ-ն: ՍՊԸ-ն ստեղծվել է կազմակերպության ֆինանսական կայունությունն ապահովելու նպատակով:

2005 թվականից սկսած ԳՈՒՄ ՍՊԸ-ն մատուցում է հետևյալ ծառայությունները՝

- դասընթացներ,
- խորհրդատվություններ,
- համակարգչային ծառայություններ,
- Ռեսուրս կենտրոնի կողմից մատուցվող ծառայություններ,
- հրատարակչություն:

ԳՈՒՄ ՍՊԸ-ն մատուցում է ծառայություններ ԳՈՒՄ ՀԿ-ի ռազմավարական երեք նպատակային խմբերի (քաղաքացիական հասարակության կազմակերպություններ, կրթական ոլորտի հաստատություններ, համայնքի անդամներ) համար:

Քաղաքացիական հասարակության կազմակերպություններին (ՔՀԿ) ուղղված ծառայություններ

○ Դասընթացներ եւ խորհրդատվություններ

Պահպանելով կազմակերպության ռազմավարական ուղղությունները՝ ԳՈՒՄ ՍՊԸ-ն 2005-2008թթ մշակել է մի շարք դասընթացների եւ խորհրդատվությունների ձեռնարկներ, որոնք տրամադրվել են ՔՀԿ-ներին՝ կարողությունների զարգացման նպատակով:

ԳՈՒՄ ՍՊԸ-ն քաղաքացիական հասարակության կազմակերպություններին դասընթացներ է մատուցել հետևյալ թեմաներով՝

- Մրցունակ հայտ գրելու հմտություններ,
- Ռազմավարական պլանավորում,
- Լրատվամիջոցների հետ հարաբերություններ,
- Շահերի պաշտպանություն (ներածական),
- Շահերի պաշտպանություն (խորացված),
- Ծրագրերի վերահսկում եւ գանահատում,
- Ներկայացման հմտություններ Power-point ծրագրով,
- Տվյալների հավաքագրման մեթոդներ,
- Ինչպե՞ս կազմել բյուջե,
- Ֆոնդահայթայթման հմտություններ,
- Տրամաբանական կառուցվածք,
- Բյուջեի վերլուծություն,
- Անդամակցության զարգացում եւ կամավորների հավաքագրում,
- Ժամանակի արդյունավետ կառավարում,
- Արդյունավետ ցանցերի ձեւավորում,
- SPSS ներածական:

ԳՈՒՄ ՍՊԸ-ն 2005-2008թթ քաղաքացիական հասարակության կազմակերպություններին տրամադրել է խորհրդատվություններ հետեւյալ թեմաներով՝

- «ՇՊ/ՀՀԿ ռազմավարության մշակում»,
- «ՇՊ քարոզարշավի պլանավորում»,
- «ՀԿ ռազմավարական պլանի մշակում»,
- «Ուժային քարտեզի կազմում»:

Դասընթացներից եւ խորհրդատվություններից ԳՈՒՄ ՍՊԸ-ի ստացած ֆինանսական շրջանառությունը 2005-2008թթ կազմել է՝

2005 թվականին 56 000 դրամ,
2006 թվականին 1 727 970 դրամ,
2007 թվականին 4 845 030 դրամ,
2008 թվականին 2 324 400 դրամ:

○ **Հրատարակչություններ**

- «Կամք+» թերթ

2006թ. հուլիսի 14-ին ԳՈՒՄ ՀԿ-ի նախաձեռնությամբ հիմնադրվեց «Կամք+» թերթը: Նույն թվականի սեպտեմբերին լույս տեսավ թերթի անդրանիկ համարը:

Ի՞նչը հիմք հանդիսացավ թերթի հիմնադրման համար:

Սյունիքի եւ Վայոց Ձորի մարզերի քաղաքացիական հասարակության շահերը պաշտպանող մի շարք կառույցներ իրենց գործունեությունը շահառուներին պարբերաբար, ժամանակին ու թափանցիկ ներկայացնելու համար մշտապես բախվում էին համապատասխան ՁԼՄ-ների բացակայության կամ դրանց հասանելիության խնդրին:

«Կամք+» թերթի նպատակներն են՝

- ապահովել քաղաքացիական հասարակության կազմակերպությունների գործունեության հրապարակայնությունն ու թափանցիկությունը,
- շահառուներին հնարավորություն տալ թերթի միջոցով իրենց խոսքը ուղղել հասարակությանն ու իրենց շահառուներին,
- խթանել ՀՀ-ում ժողովրդավարության, խոսքի ազատության կայացման գործընթացները:

2006-2008թթ տպագրվել է «Կամք+» թերթի 19 համար, 81 տպագիր մամուլ ծավալով:

Ըստ տարիների տպագրվել է՝

2006 թվականին 2 համար,
2007 թվականին 10 համար,
2008 թվականին 7 համար:

«Կամք+» թերթը բաժանորդագրվել են Սյունիքի եւ Վայոց Ձորի մարզերի թվով 10 քաղաքացիական հասարակության կազմակերպություններ:

«Կամք +» թերթի ֆինանսական շրջանառությունը կազմել է՝

2006 թվականին 507 500 դրամ,
2007 թվականին 2 830 500 դրամ,
2008 թվականին 1 943 000 դրամ:

- www.gumiso.am կայք

ԳՈՒՄ ՀԿ-ն որպես ծառայություն հասարակությանն է ներկայանում www.gumiso.am վեբ կայքով, որտեղ տեղադրվում են քաղաքացիական հասարակության կազմակերպությունների զարգացման ոլորտի մասին տարաբնույթ տեղեկատվություններ:

Կրթական ոլորտի հաստատություններին մատուցվող ծառայություններ

- **Համակարգչային ծառայություններ**

ԳՈՒՄ ՍՊԸ-ն համակարգչային ծառայությունների մատուցման ոլորտում տրամադրել է հետևյալ ծառայությունները՝

- համակարգչի օգտագործում,
- էջի տպում,
- պատճենահանում,
- տեքստի հավաքում,
- ինտերնետային էջի պատրաստում,
- տեսագրում,
- խորհրդատվություն,
- ինֆորմացիայի որոնում ինտերնետով,
- պոլիգրաֆիկ աշխատանք (թերթի ձեւավորում),
- գրաֆիկական աշխատանք,
- համակարգչային խմբային դասընթացներ,
- համակարգչային անհատական դասընթացներ,
- թվային ֆոտոխցիկի օգտագործում,
- օպերացիոն համակարգերի տեղադրում,
- ծրագրերի տեղադրում:

ԳՈՒՄ ՀԿ-ն ՍՊԸ-ի միջոցով համակարգչային վերապատրաստումներ է կազմակերպել.

- թվով 816 ուսուցչի համար՝ Սյունիքի եւ Վայոց Ձորի մարզերի հանրակրթական հաստատություններում:

ԳՈՒՄ ՍՊԸ-ի համակարգչային կենտրոնի կողմից մատուցված ծառայությունների ֆինանսական շրջանառությունը կազմել է՝

2005 թվականին 45 000 դրամ,
2006 թվականին 158 700 դրամ,
2007 թվականին 431 100 դրամ,
2008 թվականին 1 022 180 դրամ:

○ **Ռեսուրս կենտրոնի կողմից մատուցվող ծառայություններ**

ԳՈՒՄ ՍՊԸ-ի ռեսուրս կենտրոնը տրամադրել է հետևյալ ծառայությունները՝

- գրադարան (մանկական պատմվածքներ, քերականության գրքեր, հանրագիտարաններ, անգլերեն գրքեր),
- ձայներիզներ՝ կից գրքերով (երկխոսություններ, երգեր, հայտնի մարդկանց կենսագրություններ),
- տեսաերիզներ՝ դասընթացների, նոր մեթոդների վերաբերյալ,
- “What’s up?” հեռուստահաղորդաշար՝ (անգլերենի ուսուցողական հաղորդաշար) նկարահանված Աուդիո- վիդեո կենտրոնի կողմից:

Կենտրոնի կողմից 2005-2007 թվականներին տրամադրվել են անգլերենի ուսուցման դասընթացներ տարբեր շահառու խմբերի՝ աշակերտների, ուսանողների, համայնքի անդամների համար:

○ **Հրատարակչություններ**

- «Ուսուցիչ» թերթ

ԳՈՒՄ ՍՊԸ-ն 2000 թվականից լույս է ընծայում «Ուսուցիչ» թերթը, որի ընթերցողները հիմնականում Սյունիքի մարզի 123 դպրոցների թվով մոտ 4 000 ուսուցիչներ են:

Թերթի նպատակներն են՝

- մարզային, տեղական կրթական հաստատությունները հնարավորինս դուրս բերել տեղեկատվական մեկուսացվածությունից,
- մարզային, հանրակրթական հաստատությունների միջեւ փոխհամագործակցություն հաստատել,
- լինել ուսուցչի խոսնակը:

2001-2004թթ պատրաստվել է թերթի նաեւ էլեկտրոնային տարբերակը:

Հրատարակվել է թերթի 43 համար: Թերթն ունեցել է 74 բաժանորդ:

➤ www.synikedu.am կայք

ԳՈՒՄ ՅԿ-ն որպես ծառայություն կրթական համակարգին է ներկայանում www.synikedu.am վեբ կայքով, որտեղ տեղադրվում են կրթական ոլորտի մասին տարաբնույթ տեղեկատվություններ:

❖ ՅԿ-Ի ԽՈՐՀՈՒՐԴԸ

➤ Արտաշես Տոռոզյան

ԳՈՒՄ ՅԿ նախագահ

➤ Յուրա Պետրոսյան

Իրավաբան

➤ Թամարա Աթայան

ԿԱԻ Սյունիքի մասնաճյուղի գլխավոր մասնագետ

➤ Էդուարդ Ղուղղունց

ԱՐԵԳԱԿ ունիվերսալ վարկային կազմակերպության Սյունիքի գրասենյակի կառավարիչ

➤ Գեորգ Ստեփանյան

Գորիսի պետական համալսարանի դասախոս

❖ ՅԿ-Ի ԱՇԽԱՏԱԿԱԶՄԸ

Արտաշես Տոռոզյան

ՅԿ-ի ղեկավար, դրամաշնորհների ղեկավար
artashes@gumiso.am

Չերմինե Շալունց

գրասենյակի ղեկավար
hermine@gumiso.am

Վարդուհի Դադունց

դրամաշնորհների ղեկավարի օգնական
vard@gumiso.am

Աննա Ալեքսանյան

հաշվապահ /2005թ., հունվար – 2007թ., օգոստոս/

Գարիկ Գովակիմյան

ֆինանսական ղեկավար /2007թ. սեպտեմբերից/
garik@gumiso.am

Արամ Մուսախանյան

վերահսկման եւ գնահատման մասնագետ
aram@gumiso.am

Աննա Ավետիսյան

դասընթացների/կազմակերպական զարգացման մասնագետ
anna@gumiso.am

Արթուր Վարդազարյան

ՇՊ մասնագետ

artur@gumiso.am

Նելլի Ղուշունց
հասարակության հետ կապերի մասնագետ
nelly@gumiso.am

Ռուզաննա Տոռոզյան
ընտրական և կրթական ծրագրերի համակարգող
ruzanna@gumiso.am

Լենա Հովսեփյան
«ԿԱՄՔ+» թերթի խմբագիր
lana@gumiso.am

Աննա Դանիելյան
հասարակության հետ կապերի մասնագետի օգնական
anni@gumiso.am

Լիլիթ Մկրտչյան
համակարգչային մասնագետ
lilit@gumiso.am

Արտակ Դանիելյան
ԳՌԻՄ ՍՊԸ-ի հաշվապահ
artak@gumiso.am

Սոնա Բաղդասարյան
Ռեսուրս կենտրոնի համակարգող
sona@gumiso.am

❖ **ՀԿ-Ի ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ**

❖ **ՀԱՎԵԼՎԱԾ/ԳՌԻՄ ՀԿ ՀԱՋՈՂԱԿ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ**

- **Հարավային Հայաստանում ՀԿ-ներն ի զորու են ազդելու տեղական մակարդակում հանրային քաղաքականության մշակման և փոփոխման գործընթացներին**

«Գործընկերություն և ուսուցում» հասարակական կազմակերպությունը (ԳՈՒՄ ՀԿ) 9-ամյա, Հայաստանի հարավում ակտիվ գործունեություն իրականացնող, ՀՀ-ում ընթացող ժողովրդավարական և կրթական բարեփոխումների գործընթացներում վճռորոշ դերակատարում ունեցող, քաղաքացիական հասարակության կազմակերպություններին ծառայություն մատուցող, դրամաշնորհներ կառավարող կազմակերպություն է: Այն հանդիսանում է «Գորիսի ուսուցիչների միություն» հասարակական կազմակերպության իրավահաջորդը:

ԳՈՒՄ ՀԿ-ն իր գործունեությամբ կարողացել է նպաստել հարավային Հայաստանում գրանցված և գործող քաղաքացիական հասարակության կազմակերպությունների շահերի պաշտպանության և

կազմակերպական կարողությունների զարգացմանը՝ նրանց դարձնելով ավելի կենսունակ եւ տեղական մակարդակներում հանրային քաղաքականություն ձեւավորող միավորներ:

2001թ.-ից տարբեր միջազգային կազմակերպությունների կողմից բազմաթիվ եւ բազմապիսի միջոցառումներ՝ դասընթացներ, դրամաշնորհների տրամադրում, համաժողով-քննարկումներ են ձեռնարկվել հարավային Հայաստանում ՔՀԿ-ների կազմակերպական եւ շահերի պաշտպանության կարողությունները զարգացնելու ուղղությամբ: Սակայն այդ միջոցառումները համապարփակ չլինելով, մեղմ ասած, իրենց նպատակին մասնակի են հասել: ՔՀԿ-ներն առանց դրամաշնորհի չունենին գործող աշխատակազմեր, արդյունքում միջազգային կազմակերպության կողմից կազմակերպված դասընթացներին հիմնականում մասնակցում էին կազմակերպությունների ղեկավարները: Այսինքն, խոսք լինել էր կարող աշխատակազմի մասնագիտական զարգացման մասին՝ կազմակերպության շահերի պաշտպանության կամ կազմակերպական կարողությունների զարգացվածության մասին:

Միեւնույն ժամանակ դրամաշնորհ տրամադրվում էր ՔՀԿ-ին, որը համապատասխան ձեւավորում էր հիմնականում թույլ մասնագիտական կարողություններով, ՀԿ-ական գործունեությունից անտեղյակ աշխատակազմ, որի կողմից էլ իրականացված նախաձեռնություններն իրենց առջեւ դրված նպատակներին չէին կարողանում հասնել:

ԳՈՒՄ ՀԿ-ն Քաունթերփարթ ինթերնեշնլի հետ համագործակցությամբ 2005-ից հարավային Հայաստանում իրականացնում է համապարփակ գործողություններ՝ ՔՀԿ-ների շահերի պաշտպանության եւ կազմակերպական կարողությունների զարգացմանն ուղղված՝ սկզբնապես կազմակերպելով «Մրցունակ հայտ գրելու հմտություններ», «Շահերի պաշտպանության ներածական» եւ դրամաշնորհային մրցույթների մասնակցելու եւ ՇՊ նախաձեռնություններ իրականացնելու համար ՔՀԿ-ին անհրաժեշտ շատ այլ թեմաներով դասընթացներ, այնուհետեւ կազմակերպելով ՇՊ դրամաշնորհային մրցույթներ: ԶԵՊԱԾ-ի շրջանակներում հայտարարված ՇՊ դրամաշնորհային մրցույթներին մասնակցել են մեծ թվով ՔՀԿ-ներ, հավաքագրվել է բավականին գրագետ եւ մրցունակ հայտեր: ՔՀԿ-ների կողմից տեղական մակարդակում ՇՊ նախաձեռնությունների իրականացմանը զուգընթաց ԳՈՒՄ ՀԿ-ի կողմից պարբերաբար տրամադրվել են դասընթացներ եւ խորհրդատվություններ: Սա միակ նախաձեռնությունն է ՀՀ-ում, որը հնարավորություն էր տալիս գործնականում հանդիպած դժվարությունը հաղթահարել փորձառու տեղական մեկ այլ կազմակերպության աջակցությամբ եւ հակառակը՝ տեսականում ստացած գիտելիքները միուեւնույն ժամանակ կիրառել եւ փորձարկել գործնականում:

ԳՈՒՄ-ի աշխատակազմը ծրագրերի ընթացքում օգտակար խորհրդատվություններ եւ դասընթացներ է տրամադրել ՔՀԿ-ների աշխատակազմերին, որպեսզի ՔՀԿ-ն կարողանա հաջող լրքինգ իրականացնի ՏԻՄ ներկայացուցիչների շրջանում, կազմակերպի կլոր սեղան-քննարկումներ եւ դասընթացներ՝ իրենց առջեւ դրված նպատակներին առավել արդյունավետ հասնելու համար:

2005-2008թթ Սյունիքի եւ Վայոց Ձորի մարզերում իրականացվել է 43 շահերի պաշտպանությանն ուղղված նախաձեռնություն, որոնց շուրջ 83%-ը կարողացել է ազդել տեղական մակարդակով տարվող հանրային քաղաքականությանը: Աճել է ակտիվ գործող, մասնագիտական հմտություններ ունեցող, ՀԿ-ական ոլորտում փորձ ունեցող հիմնական աշխատակազմերով, մշտապես գործող ՔՀԿ-ների թիվը: Այսօր, Սյունիքում եւ Վայոց Ձորում ՏԻՄ-երի համար սովորական երեւույթ է դարձել ամեն միստի ժամանակ օրակարգում ունենալ որեւէ ՔՀԿ-ի կողմից առաջադրված հարց: